

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԱՐԳՈ ՄԽԻԹԱՐՅԱՆ

**ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ ԵՎ
ՆՐԱ ԽՄԲԱԳԻՐԸ**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016**

ՀՏԴ 070:94(479.25)

ԳՄԴ 76+63.3(5Հ)

Մ 793

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի
գիտական խորհուրդը*

Կազմեց՝ Վարուժան Պողոսյանը

Խմբագիր՝ Նադաշ Մարտիրոսյան

Մխիթարյան Մարգո

Մ 793 Հայերեն առաջին պարբերականը և նրա խմբագիրը / Մ. Մխիթարյան: - Եր.: ԵՊՀ հրատ., 2016, 112 էջ:

Բանասիրական գիտությունների թեկնածու Մարգո Մխիթարյանի (1920-2001) հոդվածների ժողովածուն նվիրված է հայերեն առաջին պարբերականին՝ «Ազդարարին» և նրա խմբագիր Հարություն քահանա Շմավոնյանի գործունեությանը: Հեղինակը տասնամյակներ շարունակ ուսումնասիրել է «Ազդարարի» հետ կապված տարատեսակ կնճռոտ խնդիրները և գիտականորեն հիմնավորել նրա դերը հայ լրագրության պատմության սկզբնավորման գործում:

Նախատեսված է լրագրողների, լրագրագետների, պատմաբանների և ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողների համար:

ՀՏԴ 070:94(479.25)

ԳՄԴ 76+63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2090-8

© ԵՊՀ հրատ., 2016

© Մխիթարյան Մարգո, 2016

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ մամուլի պատմության երախտավորներից է հոգեւոյս Մարգո Համբարձումի Մխիթարյանը, հայ լրագրության բացառիկ նվիրյալներից մեկը, բեղուն գրիչ ունեցող համեստ մտավորականն ու մանկավարժը:

Նա ծնվել է 1920 թ. Տավուշի Ներքին Կարմիրաղբյուր գյուղում: Միջնակարգ կրթությունը ավարտելուց հետո ուսումնառությունը շարունակել է Թբիլիսիում, ապա ստացել բանասերի բարձրագույն կրթություն և զբաղվել ուսուցչությամբ: 1944 թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա, իսկ 1949-1957 թթ. աշխատել է իբրև ԵՊՀ ասպիրանտուրայի բաժնի վարիչ:

1954 թ. Մ. Մխիթարյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ««Հյուսիսափայլ» ամսագիրը» թեմայով:

1960 թ., երբ ՀԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում ստեղծվեց Հայ պարբերական մամուլի բաժինը, որը 1965 թ. տեղափոխվեց պատմության ինստիտուտ, Մ. Մխիթարյանը դարձավ դրա հիմնադիրներից մեկը:

Լայն և ընդգրկուն էր նրա գիտական հետազոտությունների շրջանակը՝ հայ մամուլի առաջնեկից՝ «Ազդարարից» մինչև «Հյուսիսափայլ», «Փորձ» և «Արձագանք»: 1994 թ. լույս տեսավ Մ. Մխիթարյանի հեղինակած «Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական շարժումը XIX դարի առաջին կեսին» ծավալուն մենագրությունը, որը նոր խոսք էր հայ լրագրագիտության մեջ: Մ. Մխիթարյանը հեղինակ է նաև հարյուրից ավելի գիտական և բանավիճային հոդվածների, որոնցից մի քանիսը ներառված են սույն ժողովածուում:

Տասնհինգ տարի առաջ՝ 2001 թվականին, կյանքի 81-րդ տարում մահկանացուն կնքեց անվանի գիտնականը, սակայն նրա գիտական վաստակը շարունակում է արդիական ու պահանջված մնալ: Այս ժողովածուի հրատարակումը խոնարհումի տուրք է պայծառ մտավորականի լուսավոր հիշատակին:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ*

1969 թվականի հոկտեմբերի 16-ին լրացավ հայ անդրանիկ պարբերականի՝ «Ազդարարի» 175 տարին, ի նշանավորումն որի Գալուստ Գյուլբենկյան հիմնարկությունը հրատարակում է «Ազդարարի» նմանահանությունը: Այս նախաձեռնությունն ավելի քան ժամանակին է, որովհետև առաջին հայկական ամսագրի աշխարհում պահպանված հավաքածուների թիվը հազիվ կարող է հասնել մեկ տասնյակի: Մատենագիտական հազվագյուտ այդ մասունքներից երեքը գտնվում է Հայաստանում:

«Ազդարարի» հրատարակության և ժամանակի հնդկահայ գաղութի պատմությունը դեռևս կարող է բազմակողմանի ուսումնասիրության: Ամսագրի սույն հրատարակությունը մեծապես կնպաստի մեր պարբերական մամուլի երախայրիքի հանգամանալի ուսումնասիրությանը և դրա ավանդույթների վերհանմանը, միաժամանակ որպես սկզբնաղբյուր պատկառելի նյութ կտա հայկական գաղութների կյանքը և XVIII դարի հայ գրականությունն ուսումնասիրողներին:

* * *

«Ազդարար» ամսագիրը լույս է տեսել Հնդկաստանի Մադրաս քաղաքում 1794-1796 թթ.: XVI-XVII դարերում պարբերական մամուլի սկզբնավորումը եվրոպական երկրներում կապված էր առևտրական հարաբերությունների զարգացման հետ, ուստի այդ դարաշրջանի առաջին լրագիրներն առանձին քաղաքների առևտրական տեղեկագրերի կշիռ ունեին:

Հայ պարբերական մամուլի ծնունդը մույնպես պայմանավորված էր գաղութահայության քաղաքական կյանքի ձևավորման և տնտեսական կյանքի զարգացման համապատասխան աստիճանով: Սակայն, օտար երկնքի տակ հյուրընկալված հայությունն ապրում էր առանց հովանավորող պետության պաշտպանության: Լուսավորության և մշակութային կյանքի հոգսերն ընկած էին անհատների ուսերին և կարող էին իրականալ նրանց ձեռներեցության ու զոհաբերության պայմանով: Այդուհանդերձ, հայրենի բնօրրանից հեռու ապրող հայերն իրենց նյութական

* Տպագրվել է՝ «Ազդարար». I, Հայ անդրանիկ պարբերականը 1794-1796, Մադրաս: Վերատպություն, 1970, էջ V-XIX:

ապահովությունն ստեղծելու հետ մեկտեղ սերունդներին ժառանգություն էին թողնում ոչ միայն հայրենական մշակույթի ավանդույթներին ունեցած իրենց հավատարմությունը, այլև քաղաքակրթության ճանապարհով միշտ դեպի վեր քայլելու անդդովելի կամքը:

Աշխարհի առաջավոր ժողովուրդների կողքին հայ գործիչները 1512 թ. սկզբնավորում են հայկական տպագրությունը: Այնուհետև, հայկական տպարաններ են հաստատվում Եվրոպայի բազմաթիվ կենտրոնական քաղաքներում, Ռուսաստանում և Էջմիածնում: XVIII դարի սկզբին հայ մշակույթի մեծ երախտավոր Մխիթար Սեբաստացին Ս. Ղազարում հիմնադրում է գիտությունների առաջին հայկական կաճառը: Հնդկահայ գործիչներ Մ. Բաղրամյանը և Շ. Շահամիրյանը դարավերջին առաջին անգամ հայ իրականության մեջ հանդես են գալիս քաղաքական հրապարակագրությամբ: Նրանց ժամանակակիցը՝ Հարություն քահանա Շմավոնյանը, անմահացնում է իրեն՝ հիմք դնելով հայկական պարբերական մամուլին:

Մեր բանասիրական գրականության մեջ վաղուց արդեն ստեղծվել է առաջին հայ խմբագրի կյանքի թեև ոչ սպառիչ, բայց հավաստի տարեգրությունը: Հարություն քահանա Շմավոնյանը ծնվել է 1750 թ. Պարսկաստանի Շիրազ, իր իսկ արտահայտությամբ՝ «ամենավայելուչ քաղաքում»: Նա ստանում է այդ ժամանակի համար հիմնավոր կրթություն, ուսումնասիրում պարսից լեզուն և գրականությունը: Տարիներ անց Նոր Զուղայի առաջնորդ Սկրտիչ արքեպիսկոպոսի հանձնարարությամբ մեկնում է Մադրաս և ստանձնում տեղի հայկական եկեղեցու ավագ քահանայի պաշտոնը: Պետք է ենթադրել, որ նա այստեղ նույնպես զբաղվում է ինքնակրթությամբ և շարունակում յուրացնել օտար լեզուներ:

Մադրասի հայ գաղութը վաղուց արդեն ապրում էր քաղաքական ու մշակութային կյանքով: Այստեղ 1772 թ. գործում էր հնդկահայ խոշոր առևտրական Շամիր Սուլթանում Շահամիրյանի տպարանը, որի հրատարակություններն արձագանք են գտնում ոչ միայն գաղութներում, այլև մայր հայրենիքում: Շմավոնյանը, հարկավ, ծանոթ էր այդ հրատարակություններին. ավելին, Շահամիրյանի խնդրանքով տառեր ձուլելով նրա տպարանի համար, հմտանում է այդ արհեստի մեջ և սիրահարվում դրան, ինչպես վկայում է նրա աշակերտներից մեկը: Հետագա տարիներին ծրագրելով շարունակել գաղութում սկզբնավորված լուսավորական

շարժումը, նա վճռում է հիմնադրել իր տպարանը: Այն, որ Շմավոնյանը երկար էր խորհել այդ մասին և նախապատրաստվել նման լուրջ ձեռնարկության, ակներև է նրա խոստովանությունից, ըստ որի՝ տպարան հիմնելու մտահոգությունը՝ «միշտ հալեր եւ մաշէր գսիրտս, եւ տոչորէր գտարփումն, զոր ունէի վասն սորին»: Այնուհետև, մեծամեծ ջանքերի ու ծախքերի գնով նա տառեր է ձուլում և 1789 թ. «հագոագիւտ եւ բագմաշխատ շինածքով» հիմնադրում Մադրասի երկրորդ տպարանը:

Շմավոնյանի հրատարակությունների ցանկը բացահայտում է նրա հետաքրքրասիրությունների շրջանակը: Գրքերի ընտրությունը գերազանցապես կատարվում էր գաղութահայության օրվա պահանջներին բավարարություն տալու նկատառումներով: Անխոնջ լուսավորչի այդ օրերի գործունեությունը հետևյալ կերպ է բնութագրել նրա աշխատակից և բարեկամ Սամուել քահանա Ղալթմազյանը. «Չմիշտ ցանկայ զօգուտ հասարակաց եւ զշինութիւն ազգին. թողեալ զիոգս ընտանեաց եւ զուսկաց, բնակի ի յօտարութեան եւ առ այսպիսի շահեկան զարդիւնաւորութեան տքնի»:

Կարճ ժամանակից Շմավոնյանը վճռում է Մադրասում լույս ընծայել հայերեն մի լրագիր: Բնականաբար, այդ նպատակի իրականացման համար նա պետք է տեղում անհրաժեշտ նյութական և բարոյական նախապայմաններ ունենար: Ժամանակի հնդկահայ գաղութի մտավոր պահանջներն ու զարգացման մակարդակը վստահություն էին ներշնչում նյութական զոհաբերությունների պատրաստ գործչին, և Շմավոնյանը ինչ-որ չափով հավատում էր իր ձեռնարկության հաջողությանը:

Մադրասի և Կալկաթայի հայ մտավորականությունը շփվում էր անգլիացի, ֆրանսիացի վաճառականների ու պաշտոնատար անձանց հետ, կարողում եվրոպական թերթերն ու գրականությունը: Նրանցից ոմանք ծանոթ էին եվրոպական կյանքին և իրենց հայրենակիցների համար քարգանություններ էին կատարում օտար գրականությունից: Հնդկահայ գաղութն ուներ իր քերթողները, անգլիական դպրոցներ ավարտած օտար լեզուների հայ ուսուցիչներ, վաճառական-մտավորականներ, որոնցից մեկը՝ Գրիգոր Մարգար Խալդարը (Մարգարյան Խալդարյանց), Մադրասի հասարակության համար նույնիսկ կերպարվեստի գործերի շարժական ցուցահանդես էր բացել: Մադրասում կանոնավորապես վաճառվում էին Նոր Նախիջևանի տպարանի հրատարակությունները:

Հայ լուսամիտ եկեղեցականներից ոմանք ստանձնել էին երիտասարդ սերնդի կրթության գործը: «Ազդարարի»՝ Կալակթայի թղթակիցը, հիշատակում է ուսուցիչ Աբիսողոմ Մուբարատյանի անունը, որն ուսուցանում էր «ամենայն անկիրթ համբակաց եւ պատանեաց»: Մադրասի հայ մանուկները և չափահաս երիտասարդներն ու օրիորդները սովորում էին քիֆլիսեցի համբավավոր մանկավարժ, գիտնական և բանաստեղծ Տեր Սամուել Ղայթմազյանցի դպրոցում: Մադրասի «իմաստասէր, երջանիկ, սէգ ու բարեջան» աշակերտության համար է, որ իբրև ուսումնական ձեռնարկներ Շմավոնյանի տպարանում Ղայթմազյանցի ղեկավարությամբ տպագրվում են Պաղտասար Դպիրի «Մայրենի լեզուի քերականությունը», Պորփյուրի «Գիրք ներածութեան» փիլիսոփայական ձեռնարկի քարգմանությունը, Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանաց» աշխատությունը: Ավելի ուշ, 1803 թ., Շմավոնյանը կրկին «... ի վայելումն կրթասէր մանկանց» հրատարակում է անգլերեն-հայերեն «Փոքրիկ բառագիրը» (Սկրտում Սիմեոնյանի քարգմանությամբ):

Գաղութի մտավոր կյանքը շարունակում էր վերելք ապրել: 1795 թ. Շմավոնյան քահանան ուրախությամբ հաղորդում է ընթերցողներին, թե Բանկալայի հայերը գնել են Անգլիայի այն հայկական տպարանը, որտեղ 1752 թ. հրատարակվել էր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: «Ազդարարի» խմբագիրը քաջալերում է այս գործը, որը «պատիւ էր բերում ազգին»: 1796 թ. Կալակթայում հիմնադրվում է հայկական մոռ տպարան: Շմավոնյանը ողջունում է այդ ձեռնարկությունը, տպարանի երախայրիքի տիպը համարում գեղեցիկ, հասարակության և գիտնականների եռանդը՝ գովելի և խրախուսական:

Հնդկաստանի հայ գաղութն ի վիճակի էր բարոյապես սատարելու առաջին խմբագրին, բայց նա ուներ և այլ գորավիզ: Էջմիածնից իբրև նվիրակ Հնդկաստան ժամանած Եփրեմ արքեպիսկոպոսը խրախուսում է Շմավոնյանի հրատարակչական գործունեությունը: Նա ծանոթանալով Պաղտասար Դպիրի քերականության տպագրության ծրագրին, ինչպես նշում է Շմավոնյանը «եղև յատկապէս յորդորող յառաջացուցանելոյ տպեցման գրոյս»: Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովսեփ Արղությանը նույնպես տեղեկանալով Մադրասի մոռ տպարանի հիմնադրման մասին, իր հավատարմատար Հարություն Հակոբյանի միջոցով Շմավոնյան քահանային հանձնարարում է առանձին գրքույկով տպագրել հնդկահայե-

րին ուղղված իր կոնդակները: Ավելին. ստանալով այդ հրատարակությունը, նա հատուկ նամակով շնորհավորում է «յոզնահանճար» Հարություն քահանային՝ նրա նորոգ տպարանի հիմնադրման առիթով և մաղթում, որ այն մնա «հաստատուն եւ անաղօտ»: Հետագայում անդրադառնալով այս հարցերին, Շմավոնյանը խոստովանում է, որ իր ժողովրդի և մասնավորապես երիտասարդության ուսումնատենչությունն է իրեն դրդել ձեռնարկելու հրատարակչական գործունեություն:

Այսպիսով, XVIII դարի 80-90-ական թվականների քաղաքական և մտավոր կյանքի վերելքը հնդկահայ գաղութում սպասկոծում էր հայ լրագրության ստեղծման անհրաժեշտ նախապայմանները: Հարություն քահանա Շմավոնյանի արժանիքը կայանում էր պատմական ժամանակաշրջանի հարուցած պահանջներն ընկալելու և դրանց ընդառաջելու վճռականության մեջ:

Հարություն Շմավոնյանը տեղի վաճառականների առևտրական շահագրգռությունները խրախուսելու համար չէ, որ հրատարակում է իր ամսագիրը (որպիսի կարծիք հայտնվել է մեր բանասիրության մեջ), և «Ազդարարի» ծրագիրը բնավ չի մատնանշում պարբերականի վաճառականամանական դիմագիծը: Դա վաղ շրջանի եվրոպական առևտրական տեղեկագրերին հաջորդած գիտահանրամատչելի և գրական-հասարակական հանդեսի այն նոր տիպն էր, որը նախ և առաջ ելնում էր ժողովրդին լուսավորելու մղումից: Շմավոնյան քահանան միաժամանակ մտահոգված էր ամսագրի օգնությամբ հրատարակելու ասպարեզ տրամադրել հայ հեղինակներին, որոնց նա անձնապես ճանաչում էր, ուստի և վստահորեն առաջարկում էր թղթակցել իր պարբերականին: Այնուհետև, խմբագիրը ծրագրում էր տեղ տալ քարգմանություններին, արտասահմանյան երկրների քաղաքական, պատերազմական իրադարձություններին, հրատարակել լուրեր «... ի տանէ հայոց եւ պարսից»: Սրանից հետո միայն խմբագիրն իր ամսագրում տեղ է հատկացնում շուկայի գների, յուրաքանչյուր ամսվա տոների և լուսնի փուլերի աղյուսակներին, զետեղում նավերի չվացուցակը և մասնավոր հայտարարություններ:

Ընդարձակ այս ծրագրով 1794 թ. հոկտեմբերի 16-ին լույս է տեսնում «Ազդարարի» առաջին համարը:

«Ազդարարը» մեծ տպավորություն է գործում Մադրասի և Կալկաթայի հայության վրա. ամսագիրը տարածվում է, ընտանեկան հավաքույթներում այն կարդում են, առանձին համարները քննարկում: Թղթակիցները խոստովանում են, որ Շմավոնյան քահանան ամսագրի հրատարակությամբ ավելին է խանդավառում երիտասարդությանը, նրան մղում դեպի ընթերցանություն ու գրական աշխատանք: Հիրավի, խմբագիրը հասնում է իր նպատակին. մթնոլորտը գաղութում կենդանանում է, գաղութահայն առևտրականի և արհեստավորի իր ամենօրյա մտահոգությունների հետ ձեռքն է առնում և լրագրողի գրիչը: Սկսվում է մի ժամանակաշրջան, երբ ընտրյալներից բացի գրքի, գիտության, նաև լրագրության աշխարհին անմիջականորեն հաղորդակցվում են հասարակական անհամեմատ լայն շերտերի ներկայացուցիչները, երբ հայրենասիրության, ազգային ինքնաճանաչության, քաղաքացիական առաքինությունների խնդիրները դառնում են հասարակական քննարկման առարկա:

Շմավոնյանը թղթակցություններ էր ստանում Մադրասից, Կալկաթայից, Բասրայից, Չինաստանից, Ֆիլիպիններից, տպագրում լուրեր Երևանից և Շուշիից: Առաջին հայ պարբերականի թղթակիցները գերազանցապես առևտրականներ էին, որոնք իրենք ճանապարհորդությունների ընթացքում հաղորդակից էին դառնում նոր երևույթների ու դեպքերի և դրանց մասին հոդվածներ ուղարկում «Ազդարարին»: Ամսագրին նամակներ և հոդվածներ էին հղում նաև հոգևորականներ, պաշտոնատար անձինք, հայկական դպրոցի դասարանների աշակերտներ: Թղթակիցներից բոլորը չէ, սակայն, որ կարողանում էին իրենց մտքերն արտահայտել գրաբար: Շատերը գրում էին անկատար հայերենով կամ գրաբարի և բարբառի աններդաշնակ մի խառնուրդով, տրտմջում էին իրենց լեզվի տկարությունից և քերթողական արվեստի անհմտությունից: Շմավոնյան քահանան ստացած թղթակցությունները տպագրում էր ինչպես դրանք կային, յուրատեսակ կենդանություն ու աշխուժություն և տեղի հայ գաղութի ազգային երանգը հաղորդելով «Ազդարարին»:

Սակայն «Ազդարարն» ուներ և իր մշտական գրական աշխատակիցները, որոնք խմբագրի հետ մեկտեղ պահպանում էին ամսագրի գաղափարական ուրույն ոգին: Դրանցից ոմանք հանդես էին գալիս գրական

կեղծանուններով («Ուրախակից բարեկամ», «Հայորդի հայ», «Ազգակից»):

Ամսագրին մշտապես աշխատակցում էր «Ուրախակից բարեկամը», որի ծանրակշիռ բանաստեղծությունները ծրագրային առաջնորդողների (խմբագրականների) դեր էին կատարում: Այդ առաջնորդողների հեղինակը կարող էր լինել մեկը, որը բաժանում էր խմբագրի հայացքները և օժանդակում նրան՝ ամենօրյա տքնաջան աշխատանքում: Ըստ մեր ենթադրության՝ «Ուրախակից բարեկամ» կեղծանունը կրել է Շմավոնյանի պաշտոնակից ու տպարանի աշխատանքներին շատ մոտ կանգնած Թադևոս Սոգինյանց քահանան: Դեռևս 1791 թ. Շմավոնյանը տպագրել էր նրա «Ողբ Հայաստանեաց» գրքույկը: Այնուհետև, նրա անվանը հանդիպում ենք Շմավոնյանի հրատարակությունների հիշատակարաններում: «Ազդարարում» տպագրվել են նրա մի քանի բանաստեղծությունները Տեր Թադևոս Տեր-Անդրեասյան Սոգինյանց ստորագրությամբ: Ժամանակի գործիչների թվում չենք նշմարում մեկ այլ մտավորականի, որը լայն աշխարհայացքի հետ մեկտեղ բանաստեղծի գրչին տիրապետելը այնքան վարպետորեն, որքան Սոգինյանցը: Կարծում ենք, որ իբրև Մադրասի հայ գաղութի շատ հեղինակավոր գործիչներից մեկը, միայն նրան էր պատշաճում հանդես գալ առաջին պարբերականի հրապարակախոսի և խրատատուի դերում:

Ամսագրի առաջին համարի ընծայականում նա շնորհավորում էր խմբագրի ջանքերի «ամենացանկալի ծնունդը», ընթերցողներին խնդրում ներողամիտ լինել դեռևս անկատար, բայց բանական թերթի նկատմամբ, օգնել, որ այն ամրանա և ընթերցողներին ներկայանա առավել հասուն տեսքով: Բանաստեղծն ուսանելի խորհուրդներ էր տալիս և «Ազդարարին»՝ չգիտակցելով թերևս, որ անուղղակիորեն մշակում է հայ պարբերական մամուլի գործունեության անդրանիկ ծրագիրը: Այսպես, «Ուրախակից բարեկամը» առաջարկում է ուսումնասիրել այլազգի թերթերի գործելակերպը, ուշադրությամբ հետևել գիտնականների խորհուրդներին, լինել նախանձահույզ և աշխատասեր: Թերթը հրահանգ է ստանում հրապարակել միմիայն հավաստի և դաստիարակչական հոդվածներ, մեծ տեղ տալ գեղարվեստական գրականությանը և ապագա սերնդին փոխանցել նրա նախնիների բարի օրինակները:

Հետագա համարներում «Ուրախակից բարեկամի» բանաստեղծու-

թյուններում զարգացվում է քաղաքական այն ծրագիրը, որը, հարկավ, մշակել էր ամսագրի խմբագիրը: Հայերի քաղաքական անկախության և սեփական պետականության ստեղծման գաղափարն էր այդ, որի իրականացման համար անհրաժեշտ էր համարվում լուսավորության միջոցով հայերին հասցնել ազգային ինքնաճանաչության, նրանց ցույց տալ սպարած կյանքի իմաստը և անցնելիք ճանապարհի նպատակը:

«Հայրդղի հայի» և «Ազգակցի» հրապարակախոսական հոդվածներում ևս արծարծվում էին հայրենիքի ազատության, նրա համար արժանավոր քաղաքացիներ դաստիարակելու հարցերը:

«Հայրդղի հայը» և «Ազգակիցը» գաղութահայության ճակատագրի վերաբերյալ իրենց դատողություններով լրացնում էին «Ուրախակից բարեկամին»: Կյանքը հնդկահայ գաղութում նրանք ընկալում էին իբրև անհեռանկար, առևտուրը՝ անարդյունավետ: Եվրոպական երկրներում ծայր առած և շարունակվող պատերազմական վիճակն ի դերն էր հանում հայերի հույսը, թե նրանք կարող էին իշխող վիճակ ստանալ միջազգային շուկայում: Անհրաժեշտ էր դառնում լրջորեն խորհել հայրենի երկրում արմատներ ձգելու, այդ երկիրն օտար նվաճողներից ազատագրելու հարցերի շուրջ: «Ազդարարի» հրապարակախոսները խորհուրդ են տալիս հայերին՝ վերցնել իրենց գանձերը և գնալ Հայաստան: Հայերը պետք է միաբան լինեն, իմացականության և բանականության առաջնորդությամբ պայքարեն իրենց ազատության, փառքի, պատվի և բարօրության համար: Ինչպես միշտ, հայության քաղաքական ազատության պահանջը զուգակցվում է ազգը լուսավորելու եռանդուն կոչերի հետ:

* * *

Քանի որ պատմական ժամանակաշրջանը թելադրում էր հայությանը համախմբելու և նրանց ազգային ինքնաճանաչության բերելու պահանջները, դրան համապատասխան ձևավորվում էր պարբերականի ոչ միայն հրապարակախոսական, այլև գրական բաժինը: Այս բաժնի նյութերը՝ արձակը, բանաստեղծությունները, գրույցները, իրենց ձևով և բովանդակությամբ նկատելիորեն տարբերվում էին ժամանակի գրաբար գրական ստեղծագործություններից: Բանաստեղծությունները հիմնականում հրապարակախոսական շեշտ են կրում և արծարծում գաղութահայությանը հուզող ժամանակի անհետաձգելի խնդիրները: Առակները և եր-

գլիծական գրույցներն իրենց ակունքներով կապվում են հայ առակագրության դասական օրինակների և միջնադարում տարածված թափառող սյուժեների հետ: Դրանցից ուշադրության արժանի են ձիու և էշի, եղջերուի և առյուծի առակները, ծուլ շինականի, ամբարտավան թագավորի, կամակոր կնոջ մասին հյուսված գրույցները և այլն: Բարոյախրատական ոգով տոգորված բոլոր այս գործերը նախատեսված էին ոչ միայն ընթերցանության համար, այլև ունեին որոշակի դաստիարակչական նպատակներ: Հետաքրքրական է, որ թարգմանական գործերը նույնպես ընտրվում էին մինևույն սկզբունքով: Այսպես, անգլերենից թարգմանված «Պատմութիւն մանկան միոյ...» արկածային վիպակում նկարագրվում է մի որբ տղայի՝ փոքրիկ Ջեկի կյանքի պատմությունը: Ջեկը համառ աշխատանքով հաղթահարում է բազմաթիվ դժվարություններ և իր համար ստեղծում ապահով կյանք. նա աշխատասիրության, մարդասիրության և բարեգործության ուսանելի օրինակ էր տալիս ամսագրի ընթերողներին:

«Ազդարարի» տասնմեկ համարներում հաջորդաբար տպագրվել է Հակոբ Այուբյանցի «Հէյդարալի խանի պատմութիւնը» յուրատեսակ վավերագրական վեպը, որն արկածային ժանրի առաջին օրինակն է մեր գրականության պատմության մեջ: Վեպը նվիրված է XVIII դարի հնդիկ գորավար, բանաստեղծ Սրընգաթան քաղաքի նաբոբ Հէյդարալի խանի կյանքի պատմությանը:

Այուբյանցը Մադրասի լուսավորական շարժման գործիչներից էր, մեկը նրանցից, որոնք քաջալերել էին Շամսոնյանի տպարանի հիմնադրումը: Զբաղմունքի բերումով նա վաճառական էր, ժամանակին առևտրական գործարքներ էր կնքել նաբոբի հետ և նրանից ստացել մի շարք առանձնաշնորհումներ հայ վաճառականների համար: Արյան հեղեղների միջով իր մեծությանն ու փառքին հասած նաբոբի կյանքի պատմությունը հերոսացնելով, Այուբյանցը, պետք է ենթադրել, ցանկանում էր նրա հաջորդների ուշադրությունը հրավիրել հայ վաճառականության վրա, որի երախտագիտական զգացումների երաշխիքը պետք է դառնար հայ հեղինակի գիրքը: Այդ հարկավոր էր, քանզի վերջին տասնամյակների պատերազմները, առևտրական շուկայում անգլիական վաճառականների գրաված ամուր դիրքը, ծավալվող ծովահենության աղետը ձախողում էին հայ վաճառականների երբեմնի խաղաղ ու շահութաբեր գործը:

Այուբյանցի երկը սոցիալական նպատակասլացությունից բացի ուներ և ազգային-դաստիարակչական նշանակություն: Հեղինակը հայ երիտա-

սարդությանը կոչ էր անում հնդկական տերության սահմաններում ապրել համեստությամբ և իմացական կյանքով, գեղեցիկ օրինակ ծառայել ապագա սերունդներին: Այուբյանցն ինքն առաջին օրինակն է տալիս հայ երիտասարդությանը՝ իր ժամանակակիցների կյանքի բարօրության և օտար ավերում նրանց գոյատևմանը նպաստելու համար վիպասանի գրիչ առնելով ձեռքը:

«Ագդարարի» էջերում տպագրված գրական նյութերը մի նոր աստիճանի են հասցնում միջնադարում սկսված հայ գրականության աշխարհականացման ընթացքը, նախապատրաստում հայ մեծ լուսավորիչ Մեսայ Թադիադյանի մոտքը գրական ասպարեզ:

Իբրև հմուտ բանասեր՝ Շմավոնյան քահանան կորստից փրկում է և տպագրում Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի միաբան Խաչատուր Զուղայեցու «Պատմութիւն Պարսից» գիրքը՝ արժեքավոր մի սկզբնաղբյուր Հայաստանի և Պարսկաստանի պատմության համար:

Ամսագրի հրատարակության վերջին շրջանում խմբագիրը մեծ ուշադրություն է նվիրում գիտության նվաճումներին, ընթերցողներին ծանոթացնում բնագիտական նյութերի և ժամանակի նշանակալից իրադարձությունների հետ: Այս առումով գիտահանրամատչելի հոդվածի լավագույն օրինակներից կարելի է համարել օդապարիկի գյուտին նվիրված հանգամանալից տեսությունը: Սա վերահրատարակությունն էր հայր Եղիա Էնտագյանի «Համառօտ պատմութիւն օդապարիկ գնտոյ» աշխատության, որը լույս էր տեսել Վենետիկում 1785 թ.: Շմավոնյան քահանան հաշվի առնելով գրքի մեծ պահանջը և դրա տպաքանակի սակավությունը, իր պարտքն է համարում «Ագդարարի» միջոցով գոհացում տալ հասարակության փափագին:

Մեծ է «Ագդարարի» պատմաճանաչողական արժեքը: 1794-1796 թթ. հրատարակվել է պարբերականի 18 համար, որոնք 771 էջ¹ ծավալի շրջանակներում ներկայացնում են հնդկահայ գաղութի մեկ և կես տարվա յու-

¹ Առաջին 16 թվերի էջերը համարակալվել են հաջորդաբար (1-670), իսկ վերջին երկու թվերը՝ միասին (1-88): Համարակալման մեջ ժամանակին սպրդել են սխալներ. ա) թյուրիմացաբար 599 էջին հաջորդել է 590-ը. բ) թիվ 18-ի 80-րդ էջի հաշվին խմբագիրը պայմանական համարակալումով տպագրել է ևս չորս էջ. գ) հետագայում ընդհանուր համարակալում տալու ժամանակ (մատիտով) սխալմամբ համարակալվել են նաև թիվ 18-ի տիտղոսաթերթի էջերը (724-725), որի հետևանքով էջերի ընդհանուր քանակը դարձել է 773: «Ագդարարի» էջերի ճշգրիտ թիվը 771 է:

րատեսակ ժամանակագրությունը: «Ազդարարի» խմբագիրն ամենամսյա քաղաքական տեսությունների մեջ շարունակ անդրադառնալով եվրոպական երկրներում և Անդրկովկասում ծավալվող պատերազմական իրադարձություններին, ընդգծում է ժողովրդի համար խաղաղ կյանքի անհրաժեշտությունը: «Ամսխիթար ժամանակ», «անարդիւն ժամանակ, որ իսպառ փակեալ կան ի դէմս մեր դրունք եկամտից», «անաջող ժամանակ» արտահայտություններն ավելի հաճախ են տեղ գտնում «Ազդարարի» էջերում: Շմավոնյանի թղթակիցները նկարագրում են միջազգային շուկայում ապրանքների գների անկման հետ կապված անցքերը և իրենց ծանր ապրումները: Այդ օրերի հնդկահայ գաղութի համար շատ բնորոշ է մի փաստ. հայ առևտրականների բարոյական և տնտեսական երբեմնի գործությունը խորհրդանշող «Արմենիան մերչանդ» («Հայ վաճառական») նավը 1795 թ. բռնագրավվում է ծովահենների կողմից, կողոպտվում և նետվում Մալագայի մոտերքը:

Ամեն ինչ չէ, որ խաղաղ էր հնդկահայ համայնքի կյանքում:

Հարություն Շմավոնյանը կշտամբում է Բոմբեյի և Կալկաթայի հայկական գաղութներում քահանաների միջև ծագած խռովության փաստերը, աղաչում, որ քահանաները ճանաչելով իրենց կոչումը՝ խաղաղության օրինակներ տան ժողովրդին:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում և Հնդկաստանի բնաշխարհի ու ժողովրդի բարքերի նկարագրությունները: «Ազդարարի» համապատասխան էջերում հառնում է մի կողմից Հնդկաստանի գեղեցիկ բնության պատկերը, մյուս կողմից օտարների կողմից բռնազրավված ու մասնատված այդ երկրամասի ժողովրդի ողբալի վիճակը:

* * *

1790-ական թվականներն իրենց հետ բերում են նոր մտահոգություններ: Գաղութն ապրում էր իր ներքին, լարված կյանքով: Ծանր ժամանակները հարկադրում են Հարություն քահանա Շմավոնյանին՝ դադարեցնել «Ազդարարի» հրատարակությունը: Պարբերականում հրապարակված մի ծանուցագրից պարզվում է, որ գաղութահայությունը փորձում է կազմակերպել դրամական վիճակախաղ, որի եկամուտը պետք է տրամադրվեր Շմավոնյանի տպարանին, բայց, հավանաբար, այդ ծրագիրը կան չի իրականանում, կան շոշափելի արդյունքների չի հանգեցնում:

«Ագդարարի» դադարից հետո Շմավոնյանը մինչև 1810 թ. լույս է ընծայում ևս մի քանի գիրք և շարունակում է մասնակցել գաղութի հասարակական կյանքին: Առաջին հայկական պարբերականի խմբագիրը վախճանվում է XIX դարի 20-ական թվականներին, նյութական գրկանքների և թշվառության մեջ:

«Ագդարարին» վիճակված չէր երկար կյանք, բայց պարբերականի կարճատև գոյության ընթացքում Շմավոնյանը, այդուհանդերձ, կարողացավ մշակել հայ լրագրային աշխատանքի կազմակերպչական հիմնական սկզբունքները: Խմբագրական մարմնի ստեղծումը, տպագրվելիք նյութերի համատեղ քննարկման կարգը, կապը թղթակիցների հետ և նրանց աշխատանքի խրախուսման ձևերը, ձգտումը՝ արտասահմանյան թերթերից ընտրելու միմիայն հավաստի լուրերը, արժեքավոր ավանդույթներ են, որոնք որդեգրել են հետագա հայ լրագրողները:

«Ագդարարի» հիմնադրման օրվանից անցել է գրեթե երկու դար: Այդ ժամանակամիջոցում հայ ժողովրդի կյանքի անբաժան ուղեկիցներն են եղել պարբերական հրատարակությունները, որոնց թիվը վաղուց անցել է երեք հազարից: «Ագդարարի» վերատպությունը բացառիկ կարևոր մի երևույթ է հայ պարբերական մամուլի գլխավոր պատմության համար:

ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԾԵՐԹԸ ԵՎ ՆՐԱ ԽՄԲԱԳԻՐԸ*

«Ազդարարի» հրատարակության օրվանից անցել է երկու դար: Այդ ժամանակամիջոցում աշխարհի տարբեր երկրներում լույս տեսած երեք հազարից ավելի պարբերականներ իրենց ամենաբազմազան դրսևորումներով հարստացրել են մեր իրականությունը, մասնակից դարձել ազգի հոգևոր արժեքների ստեղծմանը, ապագա սերունդներին հասցրել հայ ժողովրդի կյանքի տարեգրությունը:

Ջարմանալի չէ, իհարկե, որ հայ լրագրությունն սկզբնավորվել է մայր Հայրենիքից հեռու, հնդկական հողում: Նշանակալից այդ իրադարձությունը Հնդկաստանի հայ գաղթօջախի համրային կյանքի զարգացման բարձր աստիճանի և, մասնավորապես, հնդկահայ առաջին լուսավորիչների ազգանվեր գործունեության տրամաբանական արդյունքն էր: Այստեղ է, որ XVIII դ. կեսերից սկսում է կազմավորվել և հետագա տասնամյակներում իր գործունեությունն է ծավալում մեր պատմության մեջ հռչակված հայ լուսավորիչների «Մաղրասի խումբը»: Այդ խմբի հիմնադիրը և ոգին հայ լուսավորիչ, ազգային-ազատագրական շարժման ճանաչված գործիչ Շահամիր Շահամիրյանն էր, որն իր նպատակն էր դարձրել Հայաստանի ազատագրության խնդիրը: Ուշագրավ երևույթ է, որ XVIII դ. 60-ական թվականների սկզբներին 40-ամյա Շահամիրյանը, հայ և անգլիացի ուսուցիչներ վարձելով, զբաղվում է ինքնակրթությամբ և տիրապետելով անգլերենին, սկսում է ուսումնասիրել եվրոպական լուսավորականության գաղափարները: Պատմության անկասելի տրամաբանությամբ, անշուշտ, այդ տարիներին մեկ այլ ականավոր գործիչ՝ Մովսես Բաղրամյանը, որը կրթությունն ստացել էր Նոր Զուղայի նշանավոր Ամենափրկչյան վանքում, շրջագայում էր հայ ազատագրական շարժման առաջամարտիկ Հովսեփ Էմինի հետ և իր ավագ ընկերոջից ուսանում ազատագրական շարժումներին անհրաժեշտ քաղաքագիտության հիմունքներն ու ռազմական գործը:

1762-1767 թթ. ծանր դեգերումներից հետո, համոզվելով, որ այդ պահին Հայաստանում դեռևս հնարավոր չէ ազատագրական շարժումների կազմակերպումը, Բաղրամյանը բաժանվում է Էմինից և մեկնում Մաղ-

* Տպագրվել է՝ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1995, թիվ 2, էջ 3-16:

րաս: Այստեղ նա նվիրվում է լուսավորական-հրապարակախոսական գործունեության, դառնում Շահամիրյանի գաղափարական գինակիցը և նրա որդի Հակոբի դաստիարակը: 1772 թ. Շ. Շահամիրյանը Հակոբի անունով տպարան է հիմնադրում Մադրասում, որտեղ լույս տեսած գրքերում, առաջինը ժամանակի հայ իրականության մեջ, արծարծվում էին եվրոպական լուսավորականության գաղափարները և քննարկվում Հայաստանը օտար նվաճողներից ազատագրելու և բարեփոխելու ուղիները: Այստեղ 1772 թ. տպագրվում է Մ. Բադրամյանի «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» գիրքը, որով դրվում է հայ քաղաքական հրապարակախոսության հիմքը:

Բադրամյանի աշխատությունն ամբողջովին տոգորված էր հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը կազմակերպելու պաթոսով և գործնական հրահանգներ էր պարունակում այդ շարժումը մախապատրաստելու ուղղությամբ: Հեղինակը պարզաբանում էր երիտասարդության, հայ ծնողների և հոգևորականության անելիքները, պրոպագանդում ժողովրդի լուսավորության և նրա միասնականության անհրաժեշտությունը, մատնանշում Հայաստանում ստեղծվելիք ապագա հանրապետական համակարգի կառուցվածքը: Դրան հաջորդում է Մադրասի հայ համայնքի ինքնավարության օրենսգրքի տպագրությունը՝ կազմված Շահամիր Շահամիրյանի ձեռքով («Տետրակ որ կոչի նշաւակ վասն կառաւարելոյ ինչս որբոց և առանց կտակ նմջեցելոց», 1783 թ.): Այդ կանոնադրությունը, որ նախատեսված էր նպաստելու գաղթօջախի ինքնավարության և կենսունակության ամրապնդմանը, իբրև գործող օրենք, կիրառության մեջ է մտել 1784 թ. և գործադրվել մի քանի տասնամյակ: «Նշաւակում» որոշակիորեն նշված էին պետության և եկեղեցու անջատման կարևորությունը, ինքնավարության բարձրագույն ատյանի՝ Մադրասի հասարակաց ժողովի ընտրության սկզբունքները և այլն: Ուշադրության արժանի է նաև Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրության ծրագիրը: Շահամիրյանն այստեղ չի մոռանում խոսել նաև ապագա ազատ հայրենիքում՝ Արարատյան աշխարհում, սեփական օրենքներ հաստատելու անհրաժեշտության մասին և, երազելով այդ օրերը, գրում է. «Երանի՜ և բազմիցս երանի արանցն յայնոցունց, որում գտանիցին այն ոսկեգոծ ժամանակն երջանկութեան»²:

² *Աղիլալբեգյան Թ.*, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 269:

1788-1789 թթ. տպագրվում է Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց» մեծատաղանդ աշխատությունը, Հայաստանի ապագա պետության Սահմանադրության նախագիծը: Առաջին բաժնում քննության առնելով ազատագրված Հայաստանում ստեղծվելիք պետականության բնույթը, Շահամիրյանը նախապատվությունը տալիս է հանրապետական համակարգին: Երկրորդ բաժնում սահմանվում է Հայաստանի պետական բարձրագույն մարմնի ընտրությունների կարգը: Բազմապիսի խնդիրների հետ մեկտեղ գրքում բարձրացվում են խոսքի, գործի և մտքի ազատության, եկեղեցին պետությունից և դպրոցը եկեղեցուց բաժանելու հարցադրումները: «Որոգայթ փառացը» համարելով «Հայաստանի ապագա կազմակերպության վերաբերյալ մեծակերտ ուտոպիա», հնդկահայ գաղթօջախի լուսավորական շարժման պատմության լավագույն հետազոտող Թադևոս Ավդալբեգյանը Շահամիրյանին համարում է «Ֆրանսիական մեծ հեղափոխության գործիչների արժանավոր զինակիցը՝ քնած Արևելքում»³:

Այս պարագաներում բոլորովին պատահական չէր, որ երբ երկարամյա ճանապարհորդություններից հոգնած Հովսեփ Էմինը հեռանում է Անդրկովկասից և Ռուսաստանից, Մադրասն է ընտրում իբրև, ազատագրական շարժումների նախապատրաստման նոր ծրագրի մշակման հուսալի կայան: 1773 թ. նա հասնում է Մադրաս և շարունակում մտորել իր նոր ծրագրերի և դրանց իրականացման շուրջ: Նա միաժամանակ իր քարոզներով ոգևորում է տեղի ազգակիցներին, որոնցից մի քանի մեծահարուստ հայեր նույնիսկ խոստանում են նյութապես օժանդակել նրան՝ կրկին Անդրկովկաս վերադառնալու և մարտական ջոկատներ կազմակերպելու համար: Հայտնի է, որ Հայաստանի ազատագրման՝ Էմինի մադրասյան ծրագիրը նույնպես ձախողվում է. սակայն, ազգային մեծ գործչի շփումները տեղի հայության հետ, նպատակին հասնելու նրա կամքի անսասան ուժը խանդավառում են մարդկանց, երիտասարդությանը ուսուցանում ազգային-ազատագրական պայքարին նախապատրաստվելու միջոցները:

Հնդկահայ լուսավորիչների ծավալած գործունեության շնորհիվ գաղթօջախի հասարակական կյանքը մտնում է զարգացման իր նոր փուլը: Այս օրերին է, որ Եկատերինա երկրորդ կայսրուհին, ընդառաջելով

³ Նույն տեղում, էջ 272:

Միմեոն կաթողիկոսի խնդրանքին, 1768 թ. հուլիսի 30-ի հրովարտակով Ռուսաստանի հայ գաղթօջախների հոգևոր գործերի տնօրինությունը հանձնում է Էջմիածնի Աթոռին⁴: 1773 թ. Հովսեփի Արղությանը նշանակվում է Ռուսաստանի հայկական թեմի առաջնորդ: Նա սերտ կապեր է հաստատում Հնդկաստանի հայ գաղթօջախի հետ և տեղի պատվավոր քաղաքացիներից ոմանց հանձնարարում լինել իր ներկայացուցիչը: Արղությանը ջերմ բարեկամական կապեր է հաստատում Շահամիրյանի հետ և վերջինիս ծանոթացնում ռուսական կայսրության բարձրաստիճան գործիչների հետ: Շահամիր Շահամիրյանը, որ Հայաստանի ազատագրման հարցում վճռական նշանակություն էր տալիս հայ-վրացական ռազմական դաշինքին, այժմ արդեն գտնում է, որ այդ դաշինքը կարող է հաջողության հասնել միմիայն ցարական կառավարության հովանավորությամբ: Այն բանից հետո, երբ Հովսեփի Արղությանը պաշտոնապես զվտավորում է նախ դրինահայության, ապա և Մոլդավիայի ու Բեսարաբիայի հայության գաղթը Ռուսաստան և մասնակցում Նոր Նախիջևան ու Գրիգորովպոլիս քաղաքների հիմնադրմանը (1780 և 1792 թթ.), կապերը Ռուսաստանի և հնդկահայերի միջև ավելի գործնական են դառնում: Ռուսաստանի հայոց առաջնորդն իր կոնդակներում պատմում էր հայաբնակ նոր քաղաքներում իր լուսավորական ձեռնարկումների մասին (դպրոցներ, եկեղեցիներ, տպարան) և հնդկահայերի օժանդակությունն էր խնդրում: Արղությանը միաժամանակ նրանց տեղյակ էր դարձնում նորահիմն քաղաքների բնակչության նկատմամբ ռուսաց կայսրուհու մեծ ուշադրության արտահայտություններին և նրանց հուսադրում Հայաստանի ազատագրության հետ կապված հետագա առավել նշանակալից հեռանկարներով: Ոգևորված այս ամենով, հնդկահայերը շոշափելիորեն մոտ էին տեսնում հայրենիքի ազատագրումը թուրք-պարսկական բռնակալական լծից:

1780-ական թվականների սկզբին Մադրասի առաջավոր քաղաքացիները իրենց զավակների կրթության և համայնքի լուսավորական գործի ծավալման նպատակով Պարսկաստանի և Հնդկաստանի հոգևոր թեմի առաջնորդից մի արժանավոր քահանա են խնդրում: Մկրտիչ արքեպիս-

⁴ Միմեոն կաթողիկոսն ի նշան երախտագիտության հատուկ մաղթանք է գրում ռուսական թագավորների արևշատության համար, որը մինչև 1917 թ. կատարվում էր Ռուսաստանի տարածքում գտնվող բոլոր հայկական եկեղեցիներում:

կոպտը նպատակահարմար է գտնում Մադրաս ուղարկել իր տաղանդավոր քահանաներից մեկին՝ շիրագցի Հարություն Շմավոնյանին, որն արդեն յոթերորդ տարին էր, ինչ ճգնում էր պարսիկ դերվիշների մենաստանում, Բաբաբուհ (լեռների հայր) կոչվող լեռան այրերից մեկում: Քահանան կանչվում է Նոր Զուղա և հինգ տարով գործուղվում Մադրաս:

1784 թ. ժամանելով Մադրաս, Շմավոնյանն ստանձնում է Սուրբ Աստվածածին եկեղեցու ավագ քահանայի պաշտոնը: Շուտով նա այնպես է կապվում նոր միջավայրի, տեղի քաղաքացիների և նրանց հետաքրքրական առօրյայի հետ, որ հետագա իր ամբողջ կյանքը, 40 տարի, անց է կացնում այդ քաղաքում: Ժամանակակիցների հուշերից երևում է, որ Շմավոնյանն իր գործունեությամբ արժանանում է տեղի քաղաքացիների հարգանքին ու սիրուն: Մադրասի համաքաղաքացիներին նա սովորեցնում է բրուտագործության արհեստը, բամբակից թուղթ է ստեղծում, հնարում է ձիթիան մեքենա, ոսկեթել գառ է հյուսում, տպարան հիմնադրում: Հետագայում նա պատմում է, որ մեկ անգամ «ազնոամիտ աղայ Շամիր Սուլթանում՝ այրն հանճարեղ» դիմելով իրեն, ասում է. «Տէր հայր, լսեմ շնորհալի միտս ունիս, նոսր գիր մի ՆՈՒՒ՝ պակասե՛լի տպարանի մերմէ, արդ կարո՞ղ ես յորինել, քանզի՝ ցանկալի է ինձ այդ տպարան, վասն անուան որդոյ իմոյ»⁵:

Շմավոնյանը ծանոթ չէր տառերի ձուլման արվեստին, բայց հանձնարարությունը պարտավորեցնող էր, և նա մեծ հաջողությամբ տառամայրը պատրաստում է տպարանի համար: Կարճ ժամանակից նա հմտանում է նաև այդ գործում և լրջորեն մտածում սեփական տպարան ստեղծելու մասին: 1789 թ. Շմավոնյանն ստանձնում է իրերի անբարենպաստ բերումով Շահամիրյանի՝ լրության մատնված տպարանի տնօրինությունը, վերաշինում է այն, իր ձեռքով նոր տառատեսակներ ձուլում, հները կարգավորում և ձեռնամուխ լինում նաև հրատարակչական գործունեության⁶: Որ Շմավոնյանը վաղուց էր նախապատրաստված այդ գործի համար, երևում է նաև գրքերից մեկի՝ Հիշատակարանի նրա այն խոստովանությունից, թե տպարան ունենալու իղձը միշտ հալել ու մաշել է իր սիրտը, սողորել դրա նկատմամբ ունեցած փափագը: Ինչպես երևում է Շմավո-

⁵ *Մարմոնյուել*, Բելիսարիոս, Մադրաս, 1809, էջ 283:

⁶ Տե՛ս *Խաչատրյան Հ.*, Մադրասի տպագրատան պատմությունից // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1984, թիվ 3:

նյանի հրատարակած գրքերի ընտրությունից և դրանց կցված ծրագրային առաջաբաններից կամ վերջաբանից, Շմավոնյանի տաղանդը փայլատակել է նաև հրատարակչական գործում, քեև Շմավոնյան-հրատարակիչը դուրս է մնացել մեր պատմաբանների և բանասերների ուշադրության ոլորտից:

Շմավոնյանի տպարանում 1789-1809 թթ. տպագրված գրքերը հիմնականում ընտրվում էին կամ իբրև դպրոցական ձեռնարկներ կամ այն նպատակով, որպեսզի նպաստեին երիտասարդության ընդհանուր զարգացմանը և ազգասիրական դաստիարակությանը: Դրանցից էին՝ Ներսես Շնորհալու «Յիսուս որդին», Պաղտասար Դավրի «Գիրք քերականութեան» ձեռնարկը, Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանաց», «Գիրք Պորփիրի», փիլիսոփայական գրքերը, ֆրանսերենից՝ Մարմոնտելի «Բելիսարիոս» պատմական վեպը, եբրայերենից՝ աստվածաշնչյան «Էկզեստիկեա» կամ «Գիրք անուանեալ ղեկաւար մանկանց» գիրքը և այլն:

1791 թ. Շմավոնյանն առանձին գրքույկով տպագրում է Հովսեփ Արդուքյանի կոնդակները: Ռուսաստանի քեմի առաջնորդն այդ կապակցությամբ շնորհավորում է «հոգնահանճար» Հարություն քահանայի տպարանը և մաղթում, որ այն լինի պայծառ և հաստատուն: Շմավոնյանի հրատարակչական գործունեությունը խրախուսում է նաև Մադրաս ժամանած Էջմիածնի նվիրակ Եփրեմ արքեպիսկոպոսը:

Արդեև հրատարակչական գործունեության սկզբնական փուլում Շմավոնյանին մեծ նվիրվածությամբ օգնում էր գաղթօջախում ձևավորված լուսավորական գործիչների երկրորդ սերունդը, որը շարունակում էր Շահամիրյանի և Բաղրամյանի ստեղծած խմբակի ազգանվեր գործի ավանդույթը: Այս գործիչներից աչքի էին ընկնում Մադրասում մեծ հեղինակություն վայելող Տեր-Թադեոս Տեր-Անդրեասյան Սոգինյանցը, առևտրական և արձակագիր, Շմավոնյանի տպարանի աշխատակից Հակոբ Այուբյանցը, երիտասարդ վաճառական և բանաստեղծ Մեք Սամյանը, տպարանային աշխատող և թարգմանիչ Մկրտում Սիմեոնյանցը, Շահամիրյանի թոռը, նրա վաղամեռիկ Հակոբ որդու գավակը՝ Նազարը:

1791 թ. Շմավոնյանը տպագրում է Թ. Սոգինյանցի գրքույկը, որը կրում էր «Տետրակ որ կոչի Ողբ Հայաստանեայց» խորագիրը: Գրքույկի գաղափարական ուղղվածությունը, հայ ժողովրդի վիճակի և նրա ապագա բախտի շուրջ հեղինակի խորհրդածությունները, Մայր Հայաստանի

բանաստեղծական կերպարի ստեղծումը և պոեմի դիմառնական հյուսվածքը, այլև խորագիրը, որ հիշեցնում է «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» գիրքը, վկայում են նախորդ սերնդի հնդկահայ հրապարակախոսական մտքի հետ Սոգինյանյցի հայացքների ուղղակի կապի մասին: Սոգինյանցն այդ գրքույկում գետեղել է նաև Վոլտերի «Ռուսաստանի պատմությունը Պետրոս Մեծի ժամանակներում» գրքից մի հատված և իր ձոնը՝ նվիրված Պետրոս Առաջինին («Գովեստ կայսերն Պետրոսին»):

Հնդկահայ գաղթօջախի հասարակական կյանքի աշխույժ մթնոլորտը, Հայաստանի մոտալուտ ազատագրության հեռանկարը և այդ կապակցությամբ ազգը ինքնաճանաչության հասցնելու անհրաժեշտությունը Շմավոնյանին թելադրում են հայերեն թերթ հրատարակելու միտքը: Տպագրական աշխատանքի փորձը և օգնական գործիչները վստահություն են ներշնչում նրան, և վճիռը կայացվում է: 1794 թ. օգոստոսին Շմավոնյանը տպագիր մի ծանուցում է տարածում, ուղղված Մաղդասի «Բարեպաշտ պարոնաց և մաքրակենցաղ տիկնաց», որում հայտնում էր առաջիկայում «Ազդարար» անվանումով ամսագիր հրատարակելու որոշումը: Նա խնդրում էր բաժանորդագրվել՝ ծանուցագրի վրա նշելով անունը և պահանջվող ամսաթերթի քանակը. գինը սահմանված էր 1 հուն (ռուսական 2,5 ռ.):

Հոկտեմբերի 16-ին լույս է տեսնում հայկական պարբերաթերթի առաջին համարը⁷: Պատմական այդ իրողության առիթով պրոֆ. Լեոն գրել է. «Այդ այն մեծ օրն էր, երբ հայ ազգը, կարելի է ասել հաստատապես, մտնում էր քաղաքակիրթ ազգերի ընտանիքի մեջ»⁸: Թե որպիսի լրջությամբ էր Շմավոնյանը ձեռնարկել լրագրական գործը, երևում է «Ազդարարի» առաջին համարի մուտքի խոսքից («Առաջաբանություն»): Ամսագրի խմբագիրն այստեղ ներկայացնում է հստակ մի ծրագիր, որի համաձայն, նա առաջին հերթին պետք է տպագրեր դաստիարակչական հոդվածներ և այդ բնույթի թարգմանական նյութեր: Այնուհետև պիտի ջանար հորդորել գիտնականներին (անշուշտ նաև գրողներին), որպես-

⁷ 1960-ական թվականներին մեր և արտասահմանյան հայագիտական գրադարաններում պահպանվում էր «Ազդարար» ամսագրի հավաքածուի մի քանի օրինակ միայն: Խորին շնորհակալությամբ պետք է նշենք, որ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ջանքերով «Ազդարարի» հավաքածուն 1970 թ. վերատպվեց և դրվեց գիտական շրջանառության մեջ:

⁸ *Լևոն*, Հայոց պատմություն, հ. երրորդ, Երևան, 1946, էջ 1049:

զի նրանք հրապարակեին իրենց աշխատությունները: Այս երկու հիմնական խնդրից հետո միայն նա ծանոթացնում է ամսագրի կառուցվածքին (արտասահմանյան լուրեր, Անդրկովկասում ծագած պատերազմական իրադարձությունների կապակցությամբ՝ «ջանալ առ ձեռս զլուրս ինչ ՚ի տանէ Հայոց և Պարսից, զայնպիսի, որ չիցէ ձեր լռեալ» և այլն): Հիմնական այս բաժիններից բացի, եվրոպական թերթերի մամուլությամբ Շմավոնյանը «Ազդարարում» պետք է զետեղեր ապրանքների շուկայական գները, առևտրական լուրեր, հերթական ամսվա տոների օրացույցը, մավերի չվացուցակը և այլն:

Գիտակցելով իր ձեռնարկած գործի կարևորությունը՝ Շմավոնյանը «Առաջաբանութեան» մեջ իր ամսագիրը «Նոր հորինվածք և միանգամայն նոր երևույթ է» համարում իր դարում, ուստի ընթերցողներից խնդրում է բարձր չափանիշներով («քանոնիս իմաստութեան») ամսագրի նյութերը քննելու փոխարեն «քաղցրութեամբ նայիլ զանարժան վաստակս զայս և եթէ հնարաւոր օգնական լինիլ պայծառութեան ձեռնարկութեանս, առ ՚ի մխիթարութիւն ազգին մերոյ» (Ազդ., 1794, թիվ 1, էջ 5):

Հայ իրականության մեջ իր նախորդը չունեցող «Ազդարարը» զարմանք է պատճառում կոտ հրապարակախոսական ուղղվածությամբ, որի հիմքում ընկած է առաջին սերնդի լուսավորիչների արծարծած հիմնական խնդիրը՝ Մայր հայրենիքի ազատագրման և սեփական երկրում արժանապատվորեն ապրելու խնդիրը: Այդ նպատակին հասնելու միջոցները, թեև տարբեր մակարդակներով, քննարկվում էին թղթակիցների և հրապարակախոսների հոդվածներում ու նամակներում:

Ամսագրի հրապարակախոսները հիմնականում չորսն էին, որոնցից իր անունով հոդվածները ստորագրել է Թադեոս քահանա Սոգինյանցը: «Բարեկամ» և միաժամանակ «Ուրախակից» ծածկանունով ստորագրել է երիտասարդ բանաստեղծ, վաճառական և տաղանդավոր հրապարակախոս Մեթ Սամյանը: «Հայորդի հայ» և «Ազգակից» ծածկանունները դեռևս վերծանված չեն, թեև կարծիքներ են հայտնվել, թե այդ երկու ծածկանուններով ստորագրել է ամսագրի խմբագիրը, ինչպես և ասվել է, թե «Հայորդի հայը» Բաղդամյանի, իսկ «Ազգակիցը»՝ Շահամիրյանի ծածկանուններն են եղել:

Թադեոս Սոգինյանցը համաքաղաքացիներին ծանոթ էր և՛ իբրև ավագ քահանա, և՛ 1791 թ. տպագրված «Ողբ Հայաստանեայց» պոեմով,

որի մասին խոսք եղավ արդեն: Այդ պոեմը, որ գրված է Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» գրքի անմիջական ազդեցությամբ, աչքի է ընկնում բուռն հուզականությամբ, բանաստեղծական պատկերների քարնությամբ ու հայրենասիրական ջերմ շնչով: Սոգինյանցն այդ պոեմում Մայր Հայաստանի անունից սրտահույզ խոսքով դիմում է հայրենակիցներին, նրանց հորդորելով թողնել ծուլության ախտը և մտնել «քաջության հանդես»: Նորոգումն անհնար մի բան չէ, գրում է բանաստեղծը, պետք է օրինակ առնել եվրոպական ազգերից, անգլիացիներից, իսպանացիներից, որոնք նույնպես, ժամանակին քնից արթնանալով, զգացել են ազատության քաղցրությունը և, հետևելով իմաստության, մեծ ջանքերի գնով ձեռք բերել այն: Ժամանակն է, որ հայերը նույնպես զգաստանան և կարողանան տեր կանգնել իրենց ժառանգությանը՝ հայրենի երկրին:

«Ազդարարի» հրատարակությունը, որին մեծապես օժանդակել էր և Սոգինյանցը, ոգևորում է նրան: Ամսագրի երկրորդ համարում նա մի բանաստեղծությամբ շնորհավորում է «Ազդարարի» ծնունդը, այն համեմատում աստվածաշնչյան աղավնու հետ, որը ձիթենու շյուղով ավետում է ազգի նորոգման լուրը: Հովսեփ Արղությանի կոնդակների թարմ տպավորության տակ նա հաղորդում է, որ Աստված քաղցրացրել է ռուսաց կայսրուհու աչքը հայերի վրա և ուրախությունը կիսում է ընթերցողների հետ:

Ճայթեաց 'ի մեզ լոյս ի յարևմտե,
զշնորհս ողորմութեան վեհագոյն գահե,
կայսեր ըռուսաց Եկատերինե,
յաղթող թագուհւոյն կայսերազարմե:

Խոսելով հայերի նկատմամբ կայսրուհու ցուցաբերած ուշադրության մասին, Սոգինյանցը մաղթում է, որ նրա Բարձրության գահը հաստատուն մնա:

Քրիստոսի ծննդյան և նոր տարու առիթներով գրած իր չափածո խոսքում Սոգինյանցը, եթե ծերերի համար Ամենաբարձրյալից խոհեմություն է խնդրում, երիտասարդների համար ողջախոհություն, իսկ մանուկների համար գիտության սեր, միտք ու հանճար, ապա հանուն ազգի՝ փրկության գորավոր միջոցներ է աղերսում, գրական ուղի հարթելով Մ. Թա-

դիադյանի նշանավոր «Տէ՛ր կեցո զՀայս» բանաստեղծության համար⁹:
Նա գրում է.

Ով տէր ողորմած, Աստուած մարդասէր,
Որ քով գթութեամբ անուանեցար սէր,
Անկեալ մեր ազգիս անօգնականի,
Ձեռամբ քով կանգնեա՛ն յարո՛ մեզ Տէ՛ր,
Ժողովեա՛ ՚ի մի զի ենք յոյժ ցրտեալք,
Անտերունջ հոտից գոլով նմանեալք¹⁰:

Թեև «Ազդարարի» էջերում Սոգինյանցի տպագրած հրապարակախոսական բանաստեղծությունների թիվը սահմանափակ է, բայց նա մշտապես օգնում է Շմավոնյանին և հենց իր բանաստեղծություններից մեկում ներումն խնդրելով ընթերցողներից տաղաչափական օրենքների դեմ մեղանշելու համար, այնուամենայնիվ հավաստում է իր հավատարմությունը նրանց. «ցորքան ժամանակ՝ մնայ կենդանի, պատրաստի ծառայ մայ ձեզ լինիցի»:

«Ազդարարի» հրապարակախոսներից բանաստեղծական իր տաղանդով, հարցադրումների լրջությամբ և մամուլի գործերի լավատեղյակությամբ առանձնանում էր նոր ջուղայեցի երիտասարդ բանաստեղծ Սեթ Սամյանը, որը գրում էր «Բարեկամ» ծածկանունով: Ազգային կյանքի առաջընթացի շահագրգռությամբ տոգորված նրա չափածո հոդվածները յուրատեսակ քարոզներ ու ծրագրեր էին, գրված ընթերցողներին միանգամայն մատչելի հայերենով: «Ազդարարի» առաջին համարում տպագրված իր ծավալուն հոդվածում նա շնորհավորում է ամսագրի բանական ծնունդը և մատչում, որ այն լինի երկարակյաց և արժանանա հայրենիքում շարունակվելու բախտին: Առաջին հայ լրագրողը հայ առաջին պարբերաթերթին խորհուրդ է տալիս ուսումնասիրել օտարալեզու լրագրողների աշխատանքի ոճը և հասկանալ, թե նրանք ինչպե՞ս են հասել այն մակարդակին, որ կարողանում են հաշվել երկնքի աստղերը:

⁹ «Հայ նոր գրականության պատմության» առաջին հատորում գետեղված «Մեսրոպ Թադիադյան» բաժնի հեղինակ, բանասիրական գիտությունների թեկնածու Ռուզան Նանույանը, հենվելով բանասեր Ա. Ալպոյաճյանի «Կրկնված սխալներ» հոդվածի վրա, այդ բանաստեղծության հեղինակ է համարում «Հայելի կալկաբյան» օրաթերթի խմբագիր Հովհ. Տեր-Հակոբյանին:

¹⁰ «Ազդարար», 1796, թիվ 16, էջ 670:

«Ազդարարը» պետք է լինի նախանձահույզ և աշխատասեր, գրում է նա, կարողանա ունկնդրել խրատներին, շարունակաբար գրական գործեր հրատարակելով, ընթերցանության նյութ տա ազգի անդամներին և որ կարևորն է, լինի ճշմարտախոս:

Մեփական տան, Հայաստանի ազատագրության գաղափարը, հայրենի հողի վրա ազատ կյանք ստեղծելու բաղձանքը դարձյալ ու դարձյալ զբաղեցրել են «Բարեկամի» միտքը, նրա բանաստեղծական խոսքին տալով համազգային ակնկալիքներին համապատասխան հնչեղություն: Այս իմաստով հետաքրքրական է նրա 6-րդ հոդված-բանաստեղծությունը, որում ներկայացվում է գաղութահայության փրկության ծրագիրը: Այն, պետք է ենթադրել, մշակված էր Հ. Շմափոնյանի, քերես նաև Թ. Սոգինյանցի մասնակցությամբ: Վկայակոչելով հնդկահայ վաճառականների վերջին տարիների անհաջողությունները Ֆիլիպիններում, Ինդոնեզիայում, Չինաստանում և այլուր, նա հայտնում է, որ եթե նախկինում հայերը մեկ հարյուրին հարյուր էին շահում, ապա այդ օրերին այնպիսի խոշոր կորուստներ ունեին, որ ասես, կամովին իրենց ունեցվածքը նետում էին կրակի մեջ: Ժամանակն է գիտակցել, որ օտար հողը չի կարող հայրենիք դառնալ, ուստի բանաստեղծը հանձնարարում է «Ազդարարին»՝ ասել հայերին, որ նրանք անտեղի են վատնում իրենց ունեցվածքը, որովհետև և՛ ժամանակներն են փոխվել, և՛ մարդիկ: Նրանց պետք է տալ հետևյալ վճռական խորհուրդը.

Առեք զգանձ ձեր դուք ի միաբան,
Գնացեք իսկույն աշխարհն Հայաստան,
Զի այն է ձեր տուն և ձեր է միայն
Արժան է լինիլ և ձեր գերեզման¹¹:

Հայրենիք գնալու համար, սակայն, նրանք պետք է նախ իրենց հողի տերը դառնան: Նա համոզմունք է հայտնում, որ Հայաստանի ազատագրման գործը կիրականացնեն քրիստոնեական պետությունները, և մատնանշում է այն միջոցները, որոնց պետք է դիմեն հայերը.

Խորհուրդ արարեք մտօք տքնութեամբ,
Եվ հայցոածագիր տուք խոնարհութեամբ,
Քրիստոսադավան մեծ թագաւորաց,

¹¹ Նույն տեղում, 1795, թիվ 6, էջ 74:

Ձի փրկեսցեն ձեզ ի բռնաւորաց:
Գրեցեք նոցա զայս միաբերան,
Ձի աշխարհն ձեր է՝ բնակարան,
Տո՛ւք վկայութիւն հատորք Սուրբ Գրոց,
Որ երկիրըն այն, ասէ՛՝ է՛ հայոց¹²:

«Բարեկամն» այդ ծրագիր-հողվածում ներկայացնում է նաև ապագայում հայրենի երկրի բարեշինության, կրթական գործի ծավալման, գիտությունների, արհեստների և երկրագործության զարգացման մի ընդարձակ ծրագիր:

Հարություն Շմավոնյանը շատ բարձր է գնահատել իր «վսեմախոհ, պատվական» աշխատակցին. նրա գրավոր վաստակը համարել իբրև պարզ հայելի: Նրան ուղղված իր ջերմ խոսքում խմբագիրը նշում է, որ «Բարեկամը» իբրև լրագրող՝ եղել է «հանդիմանող և սաստող», այլև «գոգող ու սփոփիչ»: Նա գտնում է, որ «ռիտության, իմաստության և քարգմանչի շնորհները նրան տրված են ի վերուստ»: Այս գնահատականը հիմք է տալիս մեզ ասելու, որ Մեք Սամյանը «Ազդարարի» համար նաև քարգմանություններ է կատարել օտար լեզուներից: Թադեոս Սոգինյանը իր հերթին «Ողջունատոութիւն հանդերձ օրհնութեան» խորագրով մի բանաստեղծություն է նվիրել «Բարեկամին», որում նրան անվանում է «քաղցրաձայն արի խոսնակ»: Հասակը թեև մանկական, բայց նա խրատներ է տալիս ազգին՝ իմաստուն ալևորի նման¹³:

Հետաքրքրական երևույթ է այն, որ մեր առաջին պարբերաբերքի էջերում ծավալվել է նաև բանավեճ, որը նվիրված էր ժամանակի ամենահիրատապ խնդրին՝ հայության գոյավիճակին և նրա հետագա անելիքների: Այդ բանավեճն ինքնին վկայում է հնդկահայ գաղթօջախի մտավորականության քաղաքացիական ակտիվության մասին: Բանավեճի մասնակիցների հողվածները տպագրվել են «Հայորդի Հայ» և «Ազգակից» ծածկանուններով, որոնք, ինչպես առիթ ունեցանք նշելու, վերծանված չեն առ այսօր:

«Հայորդի Հայ» ստորագրությունը կրող չափազանց հանգամանալից հողվածի հեղինակը հրապարակախոսական խոսքի փայլուն միջոցներով և համեմատություններով կշտամբալից խոսք է ուղղում իր ազգակից-

¹² Նույն տեղում, էջ 75:

¹³ «Բարեկամը» 1794 թ. 23 տարեկան էր:

ներին, նրանց վեհերոտ ու պասիվ պասիվածքի համար: Հոդվածագիրը, որ հեռու է հակակրոնական քարոզներ կարդալու մտքից, աղոթքների միջոցով Տիրոջից բարիքներ հայցելու փոխարեն նրանց կենդանի գործի է կոչում: Առանց դրան նա անհնար է գտնում հասնել ապահով կյանքի, փառքի կամ ազատության: Պատմությունից և եվրոպական գրականությունից քաղված մի շարք օրինակներով, ժողովրդական խորիմաստ գրույցների միջոցով նա փորձում է խոսքը հասցնել ընթերցողին, ինքնաճանաչության հասցնել նրան: Իր հիմնական միտքը նա հողվածի վերջում ձևակերպում է հետևյալ չափածո տողերով.

Հավատացեք հայք պակասութիւն ձեր,
Սիրով ջանացեք միաբանութեան,
Ժողովեցարուք ՚ի քննութիւն ձեր,
Կշռեցեք զձեզ ընդ այլոց ազգաց,
Ճանաչեցեք ձեզ անաչառութեամբ,
Խորհեցեք անդէն ըզել փրկութեան,
Եւ գտջիք յայնժամ ամենայն բարի¹⁴:

Հետևեցիք հռոմեացիներին և աշխարհի այլ լուսավոր ազգերին, գրում է նա, որոնք աշխարհին օրենքներ են տվել, չէ՞ որ իրենց պատմության որոշ փուլերում նրանք մույնպես հասել են անկման եզրին, բայց արիացել են միաբանությամբ և ազատագրվել՝ «սակաւ ջանի»: Եվ այսպես, «Հայորդի Հայը» խնդրում է իր ընթերցողներին. եղեք միաբան, սիրեցեք միմյանց, խորհեցեք և ելք որոնեցեք, ահա այնժամ միայն ձեր աղոթքները տեղ կհասնեն:

Ամսագրի 11-րդ համարում «Հայորդի Հայի» հարցադրումներին առարկում է «Ազգակիցը»: Նրա համոզմամբ միմիայն աշխատանքով հնարավոր չէ բարձրացնել ազգը. ժողովրդին նախ հարկավոր է կրթել, ուսում տալ նրան, որովհետև «ամենայն առաքինական և իմաստնական գործն կախեալ կայ ի ձեռս ուսմանց»: «Նախ ուսումնարան, ապա վայելչութիւն», գրում է նա: «Հայորդի Հայի» ընդդիմախոսը միաժամանակ զանգատվում է ժամանակի բարքերից, սոցիալական անհավասարության հռոշի հետևանքներից: Մարդիկ պատիվ են տալիս ունևորներին և անարժան անձանց, իսկ ստորին դասին պատկանողներին, եթե մույնիսկ

¹⁴ «Ազդարար», 1795, թիվ 10, էջ 312:

նրանք օժտված են մեծ արժանիքներով, անարգում են: Այս առիթով բանավիճողը վկայակոչում է ֆրանսերեն լեզվով «տաղօրեն» ասված բարոյախրատական մի ոտանավոր, որը մեջ է բերում հողվածում, իր թարգմանությամբ¹⁵:

Պատիւ մարդկայնոյ ոչ են ծննդական,
Ոչ հարկ մեծատանց, ոչ փոքուց խափան,
Ընտրեալք են նոքա, զոր ջանիւ հոգան,
Կեալ պարկեշտ վարուք առաքինական,
Այնու որոշի գպատիւ ինքնական,
Ոչ եթ մարդ բնութեամբ, այլ և բանական¹⁶:

Այն, որ «Ազդարարի» հրապարակախոսը եվրոպական լուսավորականության սկզբունքների լավատեղյակությամբ մերժում է քաղաքացիների արժանիքների գնահատման անարդար չափանիշը, մեկ անգամ ևս վկայում է Մադրասի գաղթօջախի առաջավոր անհատների զարգացման պատշաճ աստիճանի, միջազգային իրադարձությունների և քաղաքականության՝ նրանց իրազեկության մասին:

«Հայորդի Հայը» շտապում է պատասխանել «Ազգակցին»: Մրամիտ մի արտահայտությամբ նա այն միտքն է հայտնում, թե զարմացած է նրա քաջասրտությունից, որովհետև «Ազդարարի» ծննդյան օրվանից մինչ այսօր, նրա սահմաններում «Ազգակիցը» առաջինն է երևացել «գինատրեալ»: Այնուհետև նրա հողվածին պատասխանում է ըստ էության: Նա նշում է, որ ուսման կարևորության հարցում իրենք չեն հակադրվում, որովհետև այն, ինչ նա գրել է հստակ ոճով, ինքը տգիտությունը ողբացել է «մթին երկարաբանութեամբ»: «Հայորդի Հայը» բացատրում է, որ ջանացել է այն միտքը հայտնել, որ «ուսումն ի վերայ աշխարհի է, և ոչ՝ ի երկինս, ուստի գտանել ջանան ի ձեռն անհիմն աղօթից», մի բան, որ հաստատվում է իր հողվածին կցված յոթ տեղ չափածո խոսքից: Նա գրում է, թե դրանով ինքը ցանկացել է օգնել ընթերցողներին, հասնելու ինքնաճանաչության և հասկանալու, որ ուսման, փառքի, հարության և ազատության գործում եղած թերությունները ոչ միայն կարելի է վերացնել, այլև այդ արժեքները ձեռք բերել և պահպանել:

Ինչ վերաբերում է սոցիալական անարդարությունների խնդրին, ապա

¹⁵ Յավոք, ֆրանսիացի բանաստեղծի ինքնությունը հայտնի չէ մեզ:

¹⁶ «Ազդարար», 1795, թիվ 11, էջ 366:

«Հայորդի Հայը» դրսևորում է այդ հարցի մասին ունեցած իր կայուն սկզբունքները: Աշխարհի ստեղծման օրվանից առ այսօր, գրում է նա, բաժանումը կատարված է, պատիվները տրվում և տրվելու են հարուստներին. այդ նրանց անկապտելի իրավունքն է: Սակայն աղքատներին մույնպես կարելի է և պետք է պատվել, եթե նրանք ունենան քաղցր բարք, խոհեմություն, պարկեշտություն և այլ բարեմասնություններ: Այլապես, եթե «Ազգակցի» ցանկացածով լինի, ապա «պարտ է քեզ դնիլ հիմն մնան ֆրանսու, գի յետ պատրաստելոյ խոհարարին զկերակուրն, բազմեսցի ընդ Տեառն իւրում ՚ի սեղանի և լիցի հաւասարութիւն ամենեցուն»¹⁷ :

Սույն բանավեճը, որն իր լրջությամբ աներկբայորեն բարձրացրել է ամսագրի բարոյական կշիռը, միաժամանակ գաղթօջախի հայ մտավորականության գաղափարական խմորումների արտահայտությունն էր:

«Ազդարարի» առաջին համարում տպագրվել է նաև Շահամիր Շահամիրյանի հոդվածը, որը չնայած գրված էր մամակի ձևով, բայց աչքի էր ընկնում իր հրապարակախոսական ուղղվածությամբ: Նա պատասխանում էր անգլիացի բժիշկ Ջեմս Անդրսանի՝ մոտ անցյալում իրեն ուղղված այն հարցին, թե ովքե՞ր են հայերը, և ո՞րն է նրանց լեզուն: Այսպիսով, հայ լրագրության ծննդյան օրն իսկ Շահամիրյանը և Շմավոնյանը նպատակային ձևով ներկայացնում են իրենց ազգությունը, ա՛յն ազգությունը, որը սերում է Նոյից, խոսում Ադամի լեզվով, ապրում Նոյից ժառանգություն ստացած Արարատյան երկրում, իբրև բնիկ ժողովուրդ: Շահամիրյանը, ասես, անուղղակիորեն օրհնում էր ամսագրի ծնունդը, նրան շնորհում ազգի մեծության և ազնվության վկայաթուղթը:

Շմավոնյանն իր ստորագրությամբ թեև հոդվածներ չէր տպագրում, բայց առանձին հոդվածների առիթով նրա գրած ծանոթությունները, պատասխանները մամակներին, բացատրությունները, երբեմնապես նաև անստորագիր հոդվածները, հնարավորություն են տալիս գաղափար կազմելու նրա ժուռնալիստական սկզբունքների մասին: Անաչառ էր Շմավոնյանը, զգայուն՝ հանրային կյանքում նկատվող թերությունների նկատմամբ: Անասիման ուշադիր՝ երիտասարդ թղթակիցների կամ ուսումնաստենչ պատանիների հանդեպ: Նա մեկ անգամ չէ, որ կշտամբում է հայրենակիցներին, երբեմն քահանաներին՝ գաղթօջախում տեղի ունեցող խռովությունների առիթով: Խմբագրական հոդվածներից մեկում, խո-

¹⁷ Նույն տեղում, 1795, թիվ 12, էջ 429:

սելով հարևան երկրներում տիրող քաղաքական կացության մասին, նա քննության է առնում նաև հնդկահայերի վիճակը, որը հուսահատական է գտնում: Վաճառականները հաջողություն չունեն, ռամիկները կորցրել են երբեմնի լավ հատկանիշները. առհասարակ ազգը տգիտության մեջ է: Իբրև հրապարակախոս-լուսավորիչ, նա խոսքն ավելի ազդու և տպավորիչ դարձնելու նպատակով ինչ-որ չափով խտացնում է գույները: Մինչդեռ տեսնում ենք, թե այլազգիների ուսման պտուղն իբրև ջահ ինչպես է վառվում խոր գիշերին, այնինչ, երբ նայում ենք մեր ազգին, տեսնում ենք նրան ոչ միայն տառապած, այլև ամբողջովին պատած տգիտությամբ. «...Ո՞վ Հայկ, սկիզբ և հեղինակ ազգիս մերոյ հայկազանս. եթէ հնար իցեր, յառնելն քոյ յայսմիկ դարոյ տեսանել յետեողաց քոց՝ հաւատամք քաջութիւնդ ամենայնիւ սպառազինեալ ոչ բաւեր ընդդիմանալդ տգիտութեան, փոխանակ քաջին Բելայ, գոր տիրեալ կայ մեզ»¹⁸: Շմավոնյան-լուսավորիչն այս հարցադրումներով ձայնակցում էր «Ազդարարի» հրապարակախոսներին և ամեն կերպ ջանում նպաստել իր հայրենակիցների լուսավորության գործին:

«Ազդարարի» հարկադրական դադարից հետո նույնպես Շմավոնյանը շարունակում է իր լուսավորական-հրատարակչական գործունեությունը և, օգտագործելով յուրաքանչյուր գրքի հրատարակության առիթը, դրանց առաջաբաններում կամ Հիշատակարանում հրապարակում է ուսուցողական իր խոսքը: Այն հիմնականում ուղղված էր երիտասարդությանը, որին նա մտավոր լուրջ աշխատանքի էր կոչում:

Մեծ արժեք է ներկայացնում 1797 թ. Մադրասում տպագրված «Գիրք անոանեալ դեկաւար մանկանց» աշխատության «Վերջաբանութիւն գրքոյս առ սիրելի մանկունս հայոց» բաժինը, որը հայոց լեզվի պաշտպանության, կյանքում բարոյական արժեքների կարևորության և հայրենի երկրին՝ Մայր Հայաստանին հավատարիմ լինելու վերաբերյալ մի ավարտուն հրապարակախոսական տրակտատ է: Այստեղ արտացոլվել են մեծ լուսավորչի և մանկավարժի գործնական հայրենասիրական գաղափարները: Այդ վերջաբանում է Շմավոնյանը բարեգործության և ազնվության կոչում մատաղ սերնդին, հորդորում նրան անկեղծ սիրով սիրել իրենց ազգն ու երկիրը: «Մի յուսայք ՚ի սնոտի իրըս աշխարհի, այլ յամենայն գորութենէ ձերմէ յուսացեք պատռելի ազգս և մանուշակաբոյս

¹⁸ Նույն տեղում, 1795, քիվ 8, էջ 209:

երկիրն ձեր և երբեք մի՛ մոռանայցեք ամոթանքն, ... զի զպտուղն աշխարհին մերոյ կթեն ձեռամբ և աշխատանօք մերոյ և վայելեն բռնավորքն մեր»։ Իբրև հայերի թշվառության միակ դարման, նա խորհուրդ է տալիս սիրել ընթերցանությունը «հայոց տառիւ և բառիւ», մանուկներին հասկացնել այս գրքի նշանակությունը, որը լի է իմաստությամբ և հանճարով, բացում է բանականության մտքի աչքը։

Շմավոնյան-հրապարակախոսը միաժամանակ հմուտ խմբագիր էր և հրատարակչական գործի կազմակերպող։ Գործիմաց երիտասարդներից, որոնց անվանում էր վերակացուներ, նա ստեղծել է մեր լրագրության պատմության մեջ առաջին խմբագրական մարմինը, որին էր վերապահված նյութերի ընտրության և դրանք ընդունելու իրավունքը։ Նախանձելի նրբատեսությամբ նա թղթակիցներ էր որոնում, հանձնարարություններ տալիս առևտրական ճանապարհորդության մեկնող համաքաղաքացիներին, իսկ նրանց, որոնք չէին ցանկանում թղթակցել իրենց անուններով, թույլատրում էր օգտվել ծածկանուններից։ Նման հողվածագիրների համար հատուկ արկղ էր կախված եկեղեցու գավթում։

Ազատ ասպարեզ տալով հանդերձ իր թղթակիցներին, Շմավոնյանը բոլորովին չէ, որ իրեն ազատ էր համարում պատասխանատվությունից։ Այդ առումով նա շրջահայաց էր, ինչպես ամեն մի ճշմարիտ խմբագիր։ Այսպես, հավանաբար վերակացուների հանձնարարությամբ տպագրելով Ա. Բ. ծածկանունով ստորագրված մի նամակ, որում խոսվում էր Հովսեփ Էմինի «Կեանք և անցք Յովսեփ Էմին հայի միոյ» գրքի մասին (տպագրված Լոնդոնում, 1792 թ.), Շմավոնյանն անհրաժեշտ է գտնում դրան կցել իր ծանոթությունը, գիտակցելով, որ այդ նամակում արտահայտված անընդունելի մտքերին հետևողներ կգտնվեն¹⁹։ Շմավոնյանը հայտնում է, որ չնայած ժամանակի տղության պատճառով գիրքը չի կարդացել, բայց առաջիկայում այն կկարդա և գրքի նյութը «ամենայն զգուշությամբ» կհաղորդի ընթերցողներին։ Եվ քանի որ Ա. Բ.-ի նամակում Հովսեփ Էմինը քննադատվում էր այն բանի համար, որ իր ազգին հայերեն խրատելու փոխարեն այլոց լեզվով է խոսում «յուր ազգի վատահամբավությունից», Շմավոնյանը կողմնորոշում է ընթերցողներին։ Հովսեփ Էմինին նա ներկայացնում է որպես մի գործչի, որը շրջագայել է բովանդակ Հայաստանում, սիրում և գնահատում է իր ազգը և աշխարհը,

¹⁹ Նույն տեղում, 1794, թիվ 4, էջ 182։

ապրել և կրթվել է խոհեմ ազգերի մեջ, ունի հարուստ կենսավորձ և օժտված է ազգի ընդունակություններով: Նա համոզված է, որ հեղինակն ըստ արժանվույն պետք է ներկայացրած լինի հայոց թագավորության պատմությունը, ինչպես և երախտագիտությամբ արտահայտված՝ քրիստոնյա պետությունների մասին, որոնք պաշտպանում են հայերին և որոնցից մեծ օգնություն է ակնկալվում, որպեսզի «կարողասցուք վայելել զբնական ժառանգութիւնս մեր»: Այնուհետև Շմավոնյանն ամփոփում է. անհնար է, որ օտար լեզվով տպագրված գիրքը այլ իմաստ ունենա: Այս վերջին վճիռը մանավանդ հույժ կարևոր էր, քանի որ Ա. Բ.-ն իր նամակում նշում էր, թե Էմինը օտար լեզվով իր ազգը և ժողովրդին տգետ համարելով և իրեն միայն գիտուն, կարծել է, թե մեծ համբավի կարժանանա: Նրա կարծիքով, Էմինի գրքի հիմնական գաղափարը՝ վերականգնելու հայոց պետականությունը, օտարազգի խոհեմ մտածողները քննելով, «մանկամտածական հնար» կանվանեն²⁰: Այս ամենից հետո զարմանք է հարուցում ակադեմիկոս Արտաշես Կարինյանի այն վճռական խոսքը, թե Շմավոնյանը «Ազդարարի» մեջ բավական որոշակի կերպով նկատում է, որ Էմինի քարոզած գաղափարները ինքը համարում է անիմաստ և անընդունելի: Անցնում է մոտավորապես մի տարի և 1795 թ. Շմավոնյանը նորից տպագրելով մի «Նամակ»՝ նույն չափ որոշակի կերպով ցուցադրում է իր բացասական դիրքը Հովսեփ Էմինի նկատմամբ²¹:

Ինչ վերաբերում է երկրորդ նամակին, որն, ի դեպ, տպագրվել է ոչ թե մեկ տարի, այլ մեկ ամիս անց, 5-րդ համարում (միայն թվականի փոփոխությամբ), ապա այն՝ նույն հեղինակի անլուրջ թղթակցությունն է, որում Էմինի գիրքը՝ «աղքատ», իսկ հեղինակը «փչախոս» է անվանվում: Առհասարակ Ա. Բ.-ի նամակները զավեշտական են թե՛ իրենց ձևի, թե՛ բովանդակության առումներով, և թե՛ արտահայտչական եղանակներով:

Հարություն Շմավոնյանի կազմակերպչական ունակությունների շնորհիվ «Ազդարարը» հարուստ լրատվություն է հրապարակել ինչպես Հնդկաստանի հայ գաղթօջախի առօրյայի, այնպես էլ եվրոպական երկրներում տեղի ունեցող պատերազմական իրադարձությունների վերաբերյալ:

«Ազդարարի» համարներում կայուն տեղ ունեն «Ազդարար» և «Լուրք

²⁰ Նույն տեղում, էջ 184:

²¹ *Կարինյան Ա. Բ.*, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Երևան, 1956, էջ 197-198:

Երոպիո» լրատվական բաժինը, որում հրապարակվում էին եվրոպական թերթերից քաղված նորությունները: Այսպես, բազմաթիվ հաղորդագրություններ են տպագրվել նվիրված Ֆրանսիայի դեմ մղվող կռիվներին մանրամասներին, Լեհաստանի երրորդ բաժանմանը և այլն:

Շմափոնյանը հաղորդումների մի շարք է նվիրել Ադա Մահմեդ Խանի արշավանքներին: Լրատվության պաշտոնական աղբյուր չունենալով, նա կարողացել է Բասրայում գտնել իր «սեփական թղթակցին», որը նամակներ էր ստանում Բաբելոնից, Բաղդադից և նույնիսկ Շուշիից և դրանց բովանդակությունը հաղորդում Շմափոնյանին: Այդ հաղորդաշարը արժանահավատ սկզբնաղբյուր է, որը վկայակոչվում է պատմաբանների կողմից:

«Ազդարարի» հրապարակախոսությունն ուներ ընդգծված ռուսական կողմնորոշում: Հնդկահայ գործիչները Հայաստանի ազատագրման հեռանկարը կապում էին ռուսական կառավարության օգնության հետ և հավատում նրա ազատագրական միսիային: Թե որքան հիմնավոր էր նրանց հավատն այդ ուղղությամբ, երևում է մասնավորապես Հովսեփ Արղությանի՝ 1793 թ. հունիսի 20-ի շատ հետաքրքրական կոնդակի մի խոստովանությամբ ևս: Նկարագրելով 1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ռազմաբեմի իրադարձությունները, որին մասնակից էր և ինքը, Ռուսաստանի հայոց առաջնորդը խորին ցավով հայտնում է գորահրամանատար Գր. Ա. Պոտյոմկինի հանկարծահա մահվան լուրը և ավելացնում. «Ահա որպես աշխարհ, նոյնպես և տառապեալ ազգ մեր, զրկեցալ ի մեծափառ պաշտպանէ մերմէ, **որոյ մտաց չգտումն վասն մեր, էր նորոգութիւն մեծին Հայաստանեայց՝ և կանգնումն անկեալ իշխանութեան նորա**»²² (ընդգծումը մերն է – *Մ. Մ.*):

Արղությանն այնուհետև պատմում է, թե ինչպես է ընդունվել Եկատերինա Երկրորդի կողմից, արժանացել պարգևների և նորահիմն Գրիգորուպոլիս քաղաքի կառուցման համար դրամական օգնություն ստացել: Կարճ ժամանակից նա Սանկտ Պետերբուրգի հայոց եկեղեցում պատարագի հանդիսավոր արարողություն է կատարում և պատկառազոր մադթանք կարդում ի պատիվ կայսերական ընտանիքի: Ինչպես հաղորդում է նա իր կոնդակում, այդ պատարագը շատ մեծ տպավորություն է գործում հրավիրված բարձրաստիճան հյուրերի վրա: 1795 թ. Շմափոնյանը,

²² «Ազդարար», 1794, թիվ 1, էջ 17-18:

իր հերթին հիշեցնելով Եկատերինա Երկրորդի «զանչափելի գթածական ողորմածութեան մասին, առ ազգս մեր», կոչ է անում այդ վերաբերմունքին պատասխանել երախտագիտական խոսքով: Ամսագրի հաջորդ, 16-րդ համարում արդեն, նա հայտնում է, որ հնդկահայերը շնորհակալական գիր են ուղարկել ռուսաց կայսրուհուն:

Եկատերինա Երկրորդի մահից հետո նույնպես հնդկահայերը դիմումներ են ուղարկում և՛ Պավել Առաջինին, և՛ Ալեքսանդր Առաջինին: Պահպանվել են մադրասահայերի՝ հասարակաց երկու ժողովների արձանագրությունները տպագրված Շմավոնյանի տպարանում, որոնք հրապարակել է բանասեր Արամ Երենյանը²³: 1805 թ. նոյեմբերի 17-ին կայացած ժողովում Մադրասի առաջավոր քաղաքացիները որոշում են նամակ ուղարկել Ալեքսանդր Առաջինին և Վրաստանի կառավարչապետին: Ելույթ ունեցողները, գոհունակությամբ խոսելով Վրաստանի և Ղաթաբադի՝ Ռուսաստանին միացման մասին, նշում են, որ միմիայն Ռուսաստանի հովանավորությամբ է, որ կարող է իրականանալ նաև հայերի փրկությունը: Ժողովի նախագահին էր Նազար Հակոբջան Շահամիրյանը. նրանից բացի, խանդավառ ճառերով հանդես են գալիս Թ. Սոգինյանը, Ավետ Մեթյանը, Գրիգոր Սամյանը, Մեթ Սամյանը և ուրիշներ:

Հարություն Շմավոնյանն իր ելույթում այն միտքն է հայտնում, որ ռուսաց գրությունը հայերի նկատմամբ պայծառ է, ինչպես արեգակը: Ռուսաց անհատը կայսրը, ասում է Շմավոնյանը, ազգությամբ հայ չլինելով, սիրում է մեր ազգը և փրկիչ ու առաքյալ է մեզ համար: Հատուկ աղոթքով նա երկար կյանք և հաղթանակներ է մաղթում «հայոց աշխարհի և հայ ազգի պաշտպանին»:

Հաջորդ ժողովում, 1806 թ. հունվարի 28-ին, 35 ժողովականներ հոտընկալս կարդում և ստորագրում են Ալեքսանդր Առաջինին և Վրաստանի կառավարչապետին (իշխան Պ. Ֆիցիանով) ուղղված նամակները: Առաջինը ստորագրել էր՝

«Տեր-Յարութին Շմաունեան Մադրասիս հայոց և Աւագ քահանայ», երկրորդը՝ «Տեր-Թադէոս Տեր-Անդրէասեան Սօգինեանց»:

XIX դարի 10-ական թվականներին թեև Շմավոնյանը թողնում է տպագրական-հրատարակչական գործունեությունը, բայց չի լքում հա-

²³ Տե՛ս Հայ ժողովրդի ազատագրական պայքարի Մադրասի դրոշակակիրները // «Էջմիածին», 1948, թիվ 10-12:

սարակական գործունեության ասպարեզը: Այդ տարիներին նույնպես Եփրեմ կաթողիկոսը սիրով էր վերաբերվում նրան և նրան էր հանձնարարում գաղութահայության մեջ կազմակերպվող հանգանակությունների ու կտակված գումարների պաշտոնական ձևակերպումների հարցերը²⁴: Շատ հետաքրքրական է, որ երբ 1859 թ. Միքայել Նալբանդյանը «Հյուսիսափայլում» հրապարակում է իր նշանավոր նամակը՝ նվիրված հնդկահայերի կտակած գումարների ձեռքբերման հարցին, դրան կից տպագրում է նաև համապատասխան կտակների բնագրերը, այդ թվում նաև Շմավոնյանի նամակը՝ ուղղված Եփրեմ կաթողիկոսին²⁵: 1819 թ. հոկտեմբերի 9-ի թվակիր այդ նամակում հայ հրապարակախոսը հայտնում էր, որ Նոր Նախիջևան քաղաքի լուսավորական ձեռնարկումների օգտին մաղրասահայ Սարգիս Ծատուրը մեծ գումար է կտակել, և ներկայացնում էր այդ կտակի պայմանները: Նա կաթողիկոսի ուշադրությունը հրավիրում էր այդ նվիրատվության վրա, որպեսզի անհաժեշտ ձևակաությունները կատարվեին ժամանակին:

Ահա և հանդիպեցին: Միքայել Նալբանդյանը և Հարություն Շմավոնյանը: Եվ չէր էլ կարող այլ կերպ լինել: Որքան էլ տասնամյակներով հեռու միմյանցից, հայ ժողովրդի երկու նվիրյալները պետք է հանդիպեին: Ազգի քաղաքական վերածնության, նրա կրթության և բարոյանյութական վիճակի բարելավման անկեղծ շահագրգռությամբ ապրող Նալբանդյանը հավատարիմ էր Մաղրասի լուսավորիչների և ազգային գործիչների ստեղծած ազնիվ ավանդույթին:

Եվ նա շարունակում էր ավանդույթը:

²⁴ Շմավոնյանը մեծ համարում ուներ հայոց կաթողիկոսների և Ռուսաստանի թեմի առաջնորդների մոտ: Հ. Արղությանը իր կոնդակներում նրան անվանում է «բազմավաստակ եւ ջանասէր, համեստագարդ Տեր-Հարություն ավագ քահանա Շիրազցի», «Հոգնհանճար Տեր-Հարություն ավագ քահանա, մեր սիրելի որդի»: Եփրեմ կաթողիկոսը Շմավոնյանին դիմում է՝ «Իմ վաղեմնածանոթ հարազատ սիրելի», «Իմ վաղեմի հատուկ հավատարիմ սիրելի» խոսքերով:

²⁵ Տե՛ս Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1980, էջ 362:

ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ*

(«Ազդարարի» 170-ամյակի առթիվ)

Հնդկաստանի Մադրաս քաղաքում, որը XVIII դարի երկրորդ կեսից մինչև հայ առևտրական կապիտալի նշանակալից օջախներից էր, 1794 թ. հոկտեմբերի 16-ին լույս տեսավ առաջին հայ պարբերականի՝ «Ազդարարի» անդրանիկ համարը։ Այնուհետև ամսագիրը կանոնավոր կերպով հրատարակվում է մինչև 1796 թ. մարտ ամիսը։ «Ազդարարը» ջերմ ընդունելություն է գտնում Մադրասի հայկական գաղութում։ Նրա խմբագիր Հարություն քահանա Շմավոնյանին շնորհավորում են և «բանական» գործին հաջողություններ մատնում տեղի հայ գործիչներն ու կրթված վաճառականները։ Ամսագրի հրատարակությունը նրանք դիտում են իբրև «ազգի նորոգման» ավետիս, մտավոր կյանքի զարթոնքի ազդակ։ Հետաքրքրական է, որ առաջին հայ պարբերականի հրատարակությունը նրանք կապում են արևմտյան քաղաքակրթության և ռուսական արևելյան քաղաքականության հետ։

«Ազդարարի» թղթակիցներից մեկը, խոսելով այն ընդունելության մասին, որ գտնում է ամսագիրը հայության շրջաններում, նշում է, թե ամենքը գնում էին այն, կարդում, վիճում, քննարկում բարձրացված հարցերը։ Ակներև է, որ Մադրասի հայկական գաղութում արդեն կար վաճառականներից ու երիտասարդ գործիչներից կազմված մի խավ, որն անտարբեր չէր անցնում «Ազդարարի» հրատարակության փաստի կողքից։ Թերթը հիմնականում ստանում է մտավորականների հավանությունը, որոնք գնահատում են Շմավոնյանի ջանքերը։ «Ազդարարը» հրատարակվում էր որոշակի ծրագրով և սկզբից մինչև վերջին համարը հավատարիմ է մնում այդ ծրագրին։

Ամսագրի քաղաքական գիծը առավել հստակությամբ երևում է հրապարակախոսության բաժնում, որին զգալի տեղ է հատկացված։ Հրապարակախոսությունը «Ազդարարում» շարունակությունն էր Բաղրամյան-Շահամիրյան քաղաքական հրապարակախոսական գծի, որն սկզբնավորվել էր Մադրասում 1772 թ. «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» աշխատության հրատարակությամբ։ Թե՛ այդ գիրքը, և թե՛ Շահամիրյանի «Որոգայթ փառաց» հոշակավոր աշխատությունը՝ հայ իրականության մեջ սկիզբն էին դնում քաղաքական հրապարակախոսության։

* Տպագրվել է՝ «Պատմաբանասիրական հանդես», 1964, քիվ 4, էջ 43-52։

Բաղրամյանը, հանգամանորեն խոսելով հայ ազգի ընդհանրության մասին, բարձրացնում էր նրա ինքնաճանաչության և քաղաքական անկախության հարցերը: Նա երազում էր օտար նվաճողներից ազատագրված Հայաստանը, որը պետք է վերակենդանանար ուսման և կրթության միջոցով:

Շմավոնյանի «Ազդարարը» նույնպես քննարկում է այս խնդիրները: Ամսագրի հրապարակախոսության կենտրոնական թեման է դառնում գաղութահայության ապագայի, նրա հեռանկարների և անելիքների հարցը: Այս խնդիրն ուղիղ գծով առնչվում էր հայերի կացության, առևտրի վիճակի և հեռանկարների հետ: «Ազդարարի» էջերում բազմաթիվ հոդվածներ են հրապարակվել նվիրված հայ վաճառականների գործունեությանը, նրանց ծովային ճանապարհորդություններին, օտար շուկաներում ունեցած հաջողություններին և, գերազանցապես, անհաջողություններին: Դիշտ է, հայ գաղութը Հնդկաստանում շատ հին պատմություն ուներ, և հայ առևտրական կապիտալը որոշակի ուժ էր ներկայացնում այնտեղ, բայց անգլիացիների մուտքը Հնդկաստան փոխում է ուժերի հաշվեկշիռը: Հայ վաճառականներն անգոր էին դիմադրելու քաղաքակիրթ Անգլիայի հզոր առևտրական տների մրցակցությանը: Նրանց վիճակն էլ ավելի ծանրացնում էր միջազգային լարված մթնոլորտը: «Ազդարարի» հրատարակության տարիներին ռազմական գործողություններ են ծավալվում Անգլիայի ու Ֆրանսիայի միջև, փակվում են առևտրական ճանապարհները, առևտուրն անկում է ապրում: Ամսագրի թղթակիցները շարունակ բողոքում էին, թե հսկայական քանակությամբ ապրանքներ մնացել են առանց վաճառվելու, գործերը շատ վատ են չինական շուկայում և այլն: Թե որքան ծանր էր հայ վաճառականների վիճակը օտար շուկաներում, այդ երևում է մի վաճառականի նամակից, որը Չինաստանից ուղարկված էր Մադրաս. «Մնաց արգ առնեմ, որ ինչ ումիտով ի և ինչ ումիտս կտրվեց, բայց սլամաթ խասանք. ոչ ինք սլամաթ խասել, եվ գններ եթե ֆրանկսիզն մեզ բռնել լիներ, շատ ուրախ գննի, քան թե էսպես դառն բազարի չհանդիպի. էն ողորմելության բազարինաք հանդիպել, որ 100-ին 20 պակաս ապրանք ռազիանք ծախելն, էն էլ չի ծախման, բռունք կեսն ծախվելոց, վայ էն ծախսին, որ ծախվելոց, հուսացելամ աստուած, որ մին ողորմություն առի մյուս տարին մնացյալ ապրանքն շախի ծախվի, որ տալես գարարն դուս գոյ, հուս աստված»²⁶:

²⁶ «Ազդարար», 1794, թիվ 3, էջ 138:

Առանձին թղթակցություններից բացի գաղութահայությանը հուզող այդ հարցերն արծարծվում էին «Ազդարարի» աշխատակիցներ «Ուրախակից բարեկամի», «Հայի որդի հայի», «Ազգակցի» և խմբագրի ծրագրային հոդվածներում: **Ուրախակից բարեկամը** իր հրապարակախոսական չափածո հոդվածներում բազմաթիվ փաստերով հաստատում է, որ իսկապես հայ վաճառականները ձախողվում են Չինաստանում, Մանիլայում, Բատավիայում: Հայերի ունեցվածքը ջուրն է նետվում, մինչդեռ նրանց ավանդական հայրենիքում տնօրինում են օտարները: Նա խորհուրդ է տալիս հայերին՝ վերցնել իրենց գանձը և գնալ «Աշխարհն Հայաստան», որը նրանց հայրենիքն է: Այս ծրագրի իրականացման գործում ամսագիրը մեծ դեր է հատկացնում մանուկ սերնդի կրթությանը: Ուսումն ու կրթությունը կօգնեն երիտասարդությանը՝ ծանոթանալու իրենց նախնիների փառավոր գործերին և կթելադրեն ընդօրինակել նրանց:

Հայերին ազգային ինքնաճանաչության բերելու շատ ուրույն ճանապարհ է նշում հրապարակախոս **Հայի որդի հայը**: Նա քննադատում է հայերի կենցաղի մեջ մտած այն դատապարտելի սովորույթը, երբ նրանք լոկ խոսում են իրենց տառապանքների, ազգի դժբախտության մասին, հառաչում են, ողբում և... աղոթում, որ աստված փրկի իրենց: Սակայն մի՞թե աղոթքով կարելի է մի ամբողջ ազգի ճակատագրի հարցը լուծել: Մի քանի օրինակով նա հաստատում է այն ճշմարտությունը, թե ազգային հարցերը լուծվում են միայն վճռական գործողություններով: Նայեցե՛ք, Արամյաններ, գրում է նա, աստված չի կարող հավանություն տալ նրանց, ովքեր անճարակությամբ նստում են և իր անունը տալիս, այլ օգնում է նրանց, ովքեր կարողանում են ոտքի ելնել և իրենց ցանկություններն իրագործել՝ նույն Սուրբ հոգու կողմից մարդուն շնորհված իմացականության և բանականության միջոցով, որը մարդու ծննդյան օրվանից զարգանում է: Անհրաժեշտ է միաբանվել, արիանալ, խորհել և առաջ գնալ, շարունակում է նա, և այնտեղ, ուր կան այս պայմանները, անառարկելիորեն կլինեն՝ ազատություն, փառք, պատիվ և կյանքի ամեն մի բարիք: Այլ ճանապարհ չկա: Հրաշք չի կարող կատարվել: Միաբանություն է պետք, ջանք և աշխատանք²⁷: Ի հաստատումն իր մտքերի, նա վկայակոչում է Ներսես Շնորհալու տողերը.

²⁷ Տե՛ս նույն տեղում, 1795, թիվ 10, էջ 304:

**Ջանիւ հասցես համայն շնորհաց,
Մի ծուկ կենար և դեգերած,
Թէ զանձն քոյ տաս 'ի ճգանց,
Հասցես իմաստըս գերիմաց:²⁸**

Հայի որդի հայի հարցադրումը միակողմանի գտնելով՝ նրա հետ բանավեճի է մտնում Ազգակից²⁹ ծածկանունով հրապարակախոսը: Նա գտնում է, որ հայերն իրենց ամբողջ ուշադրությունը պետք է կենտրոնացնեն ուսման վրա: Հնդկաստանի հայերը վաստակում են այնքան, որ նրանց ունեցվածքի մեկ քառորդով կարելի կլինի մի ազգ բարձրացնել... Ի՞նչն է, ուրեմն, նրանց պակասությունը, եթե ոչ ուսումը: Իր ընդդիմախոսի դեմ պատասխան հոդվածով կրկին համդես է գալիս **Հայի որդի հայը**, որը պաշտպանելով իր դրույթները, հայտարարում է, թե վաստորեն իրենք միևնույն դիրքերում են գտնվում և թե իր նպատակը ևս միևնույնն է՝ ցույց տալ, որ «ուսումն աշխարհի վրա է, և ոչ երկնքում, որտեղ որոնում են այն՝ անհիմն աղոթքների միջոցով»:

«Ազդարարի» հրապարակախոսական գիծը հստակ է. հայերը պետք է մտավորապես բարձրանան, ստեղծեն իրենց մշակույթն ու գրականությունը, քրիստոսադավան պետությունների լեզվով թարգմանեն հայոց պատմությունը, տարածեն այն (առանձնապես բռնավորների անողորմության դրվագները), աղերսագրով դիմեն քրիստոնյա պետություններին, որպեսզի սրանք հայերին փրկեն օտար բռնակալներից:

Այս ամենի փոխարեն նրանք պետք է խոստանան հարկ տալ իրենց հովանավորներին և ընդմիշտ հավատարիմ լինեն նրանց: Այնուհետև, հայրենիքն ազատագրելուց հետո, հայերը պետք է ջանան շենացնել այն, բարեկարգել, ծաղկեցնել արհեստներն ու երկրագործությունը, եվրոպական ազգերի օրինակով դպրոցներ բանան:

«Ազդարարի» հրապարակախոսները, հնդկահայ գործիչները, ըստ արժանվույն, գնահատում էին ժամանակի քաղաքակրթության դերը ազգերի առաջադիմության գործում: Հնդկահայ մտավորականությանն այս

²⁸ [«Ազդարար», 1795, թիվ 10, էջ 308]:

²⁹ Բանասեր Թադևոս Ավդալբեգյանը ենթադրում է, թե **Հայի որդի հայը** ոչ այլ ոք է, եթե ոչ հայ երիտասարդներին քնից սրափեցնող ու արվության կոչող Մովսես Բաղրամյանը: **Ազգակից** ծածկանվան տակ նրա կարծիքով թաքնված է Շահամիր Շահամիրանը (տե՛ս «Նորք», 1924, 4-րդ գիրք, էջ 148):

խնդրում խրախուսում էր Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովսեփ Արդուրյանը: Շմավոնյանին ուղղած մի նամակում նա գրում էր, թե հայերը պետք է կարողանան ուսումնասիրել եվրոպական ազգերի լեզուն, գրականությունն ու գիտությունը, փորձեն ընդօրինակել նրանց, որով կհագեցվի ազգի ծարավը և կկատարվեն հայերի բաղձանքները: «Թերևս այդ միջոցով էլ փրկության առիթ, կամ օգնություն լինի մեր քաղցր հայրենիքին», – ավելացնում է նա:

Հարություն քահանա Շմավոնյանը, հարկավ, բաժանում էր իր թղթակիցների հայացքներն այս հարցերում: Նա նույնպես խորհում էր հայերի անել վիճակի, նրանց պանդխտության, առևտրի անկման, ռամիկների հետամնացության և, մասնավորապես, ազգի տգիտության մասին: Առաջնորդվելով ազգային արժանապատվության բարձր զգացումներով, նա գրում է. «Ծաղրի առարկա ենք դառնում այլազգիների մեջ: Մինչդեռ նրանց ուսման պտուղները փայլում են որպես վառ ջահ՝ զիշերվա մեջ, մեր ազգը ոչ միայն տառապում է, այլև ամբողջովին պատված է տգիտությամբ»: «Ո՛վ Հայկ, – բացականչում է նա, – հայ ժողովրդի սկիզբ ու հեղինակ, եթե դու հանկարծ արթնանայիր մեր դարում և տեսնեիր քո հետևորդներին, ապա աներկբայորեն քո քաջությունը հազիվ թե բավական լիներ դիմադրելու մեր տգիտությանը, որն իշխում է մեզ՝ Բելի փոխարեն»³⁰:

Քաղաքական հասկանալի նկատառումներով Հարություն քահանա Շմավոնյանը «Ազդարարում» տպագրում է Հովսեփ Արդուրյանի՝ հնդկահայերին ուղարկած կոնդակները: Գաղութահայության համար շատ հետաքրքրական էին մայր հայրենիքում հայերի կատարած քայլերը, և, առանձնապես, Եկատերինա կայսրուհու ուշադրությունը հայերի նկատմամբ: Հովսեփ արքեպիսկոպոսը հանգամանորեն պատմում է Նոր-Նախիջևան և Գրիգորիուպոլիս քաղաքների հիմնադրման և Եկատերինա II-ից հայերի ստացած առանձնաշնորհումների մասին: Տպագրվում է և այդ առիթով տրված արքայական հրովարտակը, որը հայերի սիրտը մեծամեծ հույսերով էր լցնում ապագայի նկատմամբ: Գաղութահայությունը տենչում էր ազատագրված տեսնել իր հայրենիքը բռնավորներից և ազատության հույսերը կապում էր ռուսական կայսրության և Հերակլ II-ի հետ:

³⁰ «Ազդարար», 1795, թիվ 8, էջ 209:

«Ազդարարի» հրապարակախոսության մեջ ինչ-որ չափով արտահայտություն են գտել ժամանակի քաղաքական իրադարձությունները: Արտաքին լուրերը, որոնք քաղվում էին եվրոպական թերթերից, պատվում են Ֆրանսիական հեղափոխության, Եվրոպայում ծագած պատերազմական դրության, խռովությունների և ապստամբությունների շուրջը: Ծնավոնյանին այդ հարցերը հուզում են՝ երկրում խաղաղությունը վերականգնելու և կանոնավոր առևտրական հարաբերություններ ստեղծելու առումով: Սակայն Ֆրանսիական հեղափոխության հետևանքները բեկվում են «Ազդարարի» էջերում և այլ պլանով: Ծնավոնյանի չափավոր քրիստոնեական բարոյախոսությունը, իհարկե, չէր կարող որդեգրել ազատության և հավասարության այն հարցադրումը, որն ընկած էր ֆրանսիական հասարակապետության հիմքում: Եվ ահա, **Հայի որդի հայի** դատողությունների մեջ երևան է գալիս հետևյալ միտքը. առարկելով այն թղթակիցներին, որոնք բողոքում էին ժամանակի սոցիալական անարդարությունների, անարժան հարուստներին տրվող մեծարանքի դեմ, նա գտնում է, որ աշխարհի ստեղծման օրվանից բաժանումը կատարված է ի վերուստ և հարուստներն իրենց ունեցվածքի տերն են: Ավելին, նրանք միշտ պետք է մեծարվեն և պատիվներ ստանան, մինչդեռ աղքատները պետք է ձգտեն հարգանքի արժանանալ իրենց առաքինի վարքով, աշխատասիրությամբ ու պարկեշտությամբ: Չէ՞ որ Սուրբ գիրքն էլ նույնն է պահանջում՝ հարգել և պատվել ում հարկն է, այսինքն՝ տերերին: Իսկ եթե ցանկանում եք, որ հարուստները աղքատների հետ վարվեն ինչպես հավասարի հետ,– շարունակում է հրապարակախոսը,– ապա «պետք է օրենքներ ստեղծել ֆրանսացիների նման, այնպես, որ խոհարարը կերակուրը պատրաստելուց հետո սեղան բազմի տիրոջ հետ և լինի հավասարություն՝ ամենեցուն»³¹: Ոգին պարզ է. «Դնել հիմն նման Ֆրանսու», կնշանակե՞ր մեղանշել Սուրբ գրքի պատվիրանների դեմ:

Ամսագրի շուրջ համախմբված հրապարակախոսները հայ իրականության մեջ առաջին անգամ մամուլի օրգանի միջոցով դիմում էին գաղութահայությանը, ցույց տալիս նրա բարոյական և քաղաքական անմխիթար վիճակը, և հայերի հին պատմության ուսումնասիրության միջոցով ու եվրոպական քաղաքակրթության օրինակներով փորձում էին բերել ազգային ինքնաճանաչության:

³¹ Նույն տեղում, 1795, թիվ 12, էջ 429:

«Ազդարարի» էջերում Շմափոնյանը զգալի տեղ է հատկացրել գրական նյութերին. դրանք իրենց բնույթով երեք տիպի են բաժանվում՝ ինքնուրույն, թարգմանական և ֆոլկլորային: Սակայն անկախ այդ բանից, առաջին հայացքից կարելի է նկատել, որ գրական-գեղարվեստական նյութերի ընտրությամբ խմբագիրը հիմնականում հետապնդել է մեկ նպատակ՝ օգնել գաղութահայության դաստիարակության և լուսավորության գործին, նպաստել նրա աշխարհաճանաչողության ընդլայնմանը:

Ինքնուրույն գործերից «Ազդարարում» տպագրվել են Խաչատուր Ջուղայեցու «Պարսից պատմությունը», Հակոբ Սիմոնյան Այուբյանցի «Հեյդարալի խանի պատմությունը», Խոջամալ Սաֆարյանի մշակած առակները, Թադևոս Տեր-Անդրեասյանի և գրական ծածկանուններով ստորագրած մի շարք հեղինակների բանաստեղծություններ:

Խաչատուր Ջուղայեցին հոգևորական էր, որ իբրև նվիրակ Նոր Ջուղայից Հնդկաստան գնալու ճանապարհին վախճանվում է Բասրայում: Շմափոնյանը ստանալով նրա պատմության անավարտ ձեռագիրը, այն կորստից փրկելու նպատակով տպագրում է իր ամսագրում: «Հեյդարալի խանի պատմությունը» իր ակունքներով կապվում է հնդկական գրույցների հետ: Այուբյանը նկարագրում է հնդկական հռչակված գորավար և բանաստեղծ, Սրընգաթան քաղաքի նավաբ Հեյդարալի խանի սխրալից կյանքի պատմությունը:

Այս գործերը առավելապես կապված լինելով հայ պատմական գրականության և հնդկական ժողովրդական գրույցների հետ՝ ժանրային և թեմատիկ որևէ նորություն չէին բերում: Այդ նույնը, սակայն, չի կարելի ասել գրական մյուս ստեղծագործությունների մասին: Մրանք թե՛ իրենց ձևով, թե՛ բովանդակությամբ տարբերվում էին ժամանակի գրաբարալեզու գրական երկերից և եկեղեցական բանաստեղծություններից: Հայտնի է, որ մեր գրականության աշխարհականացման գործընթացն սկսվում է դեռևս XI դարից, երբ գրականության մեջ երևան են գալիս աշխարհիկ մտածողության բազմազան ձևեր, ժողովրդի խոսակցական լեզվի առանձին արտահայտություններ և, ի լրումն այդ ամենի, գրական նոր ժանրեր: Հայ իրականության մեջ և հատկապես միջնադարյան առակներում արդեն նկատվում է քննական վերաբերմունք դեպի կյանքի արատավոր

երևույթները, դժգոհություն՝ սոցիալական անհավասարության, հոգևորականության ներկայացուցիչների, թագավորի և Աստծո նկատմամբ:

«Ազդարարի» արձակը հետաքրքիր է իբրև այս նոր տիպի գրականության արտահայտություն: Դիշտ է, միջնադարյան հայ առակներն ու աշխարհիկ գրույցները ինչ-որ չափով ծանոթ էին հայ մտավորականներին, բայց «Ազդարարն» առաջին տպագիր օրգանն էր, որն անհամեմատ մեծ տպաքանակով հայ ընթերցողների մեջ տարածում էր աշխարհիկ գրականության առաջին օրինակները:

«Ազդարարի» էջերում տպագրված առակներն իրենց ակունքներով կապվում են միջնադարյան հայ ձեռագրերի և միջնադարում լայն տարածում գտած թափառող սյուժեների հետ: Այդ առակներում ջատագովվում են ընկերասիրության և ճշմարտասիրության գաղափարները (Չիու և էշի առակը, Երկու ստախոսների առակը), նշավակվում է ծուլությունը: Անբան և ապիկար մի մարդ գնում է անտառ փայտի, բայց ամեն քայլում ձախողվելով՝ ողբում է իր բախտը և ափսոսում, որ մանուկ հասակից ամձը չի կրթել աշխատասիրության ոգով: Այստեղ հետաքրքրական է մի երևույթ. թեև առակի բարոյականում խոսվում է այն մասին, թե ծուլերին անգամ Աստված չի կարող պաշտպանել, բայց ամբողջ առակը շաղախված է հակակրոնական ոգով: Թափթփված և կարճատես կինը ամուսնու իրերի մեջ կացնի փոխարեն շերեփի է դնում. ամուսինը, երբ մութլուսին փորձում է փայտ կտրել, առաջին իսկ հարվածից թոցնում է շերեփի գլուխը: Նա սկսում է փնտրել կարծեցյալ կացնի գլուխը և մի շերեփի ալյուր է խոստանում Աստծուն, եթե վերջինս օգնելու լինի իրեն: Այդ պահին գտնվում է շերեփի գլուխը և մարդը հուսահատ բացականչում է. «Անգո՛ւթ և անողո՛ր՛մ, փոխանակ կացինը գտնելու, անձս վիրավորեցիր: Շտապով շերեփը բերել և ալյուրն ես պահանջում: Համոզված եմ, որ եթե կացինը գտնեիր՝ քո ձեռքից հավիտյան չէի ազատվի»³²:

Ժողովրդի քննադատող միտքը չի խնայում ամբարտաժան ու դաժան, բայց կարճամիտ թագավորներին: Մի թագավոր բարերարի համբավ է վայելում, մինչդեռ այդ բարերարությունը սոսկ ձևական էր: Պատահում է այնպես, որ նրա զգեստները փոխս են ընկնում և թագավորը հարկադրված է լինում մուրացկանի զգեստներով դուրս գալ բաղնիքից. նրան պալատ չեն ընդունում: Մովսանահ չլինելու համար նա ստիպված է լինում

³² Նույն տեղում, 1794, թիվ 2, էջ 64:

կերակրվել իր «հովանավորած» աղքատանոցի սեղանի փշրանքներով և նոր միայն հասկանում է իր «բարերարության» արժեքը: Եղջերվի և առյուծի առակում քննադատվում են պալատական բարքերը: Սրամիտ եղջերուն քծնելով շողոթորթության սովոր թագավորին, փրկվում է մահից: Առակի բարոյականում ասվում է, թե ովքեր ճարպկորեն կեղծում են արքունիքում, նրանք միշտ խաբում են փոքրիկ խելք ունեցող արքաներին:

Հետաքրքրական է Եզոպոսի առակներից թարգմանված «Մկների ժողովը», որի հիմքում ընկած է միաբանության և համարձակության գաղափարը՝ ընդդեմ ստրկամտության: Հաճախ տեսնում ենք, – ասված է առակի բարոյականում, – թե ինչպես ընդհանուր ժողովներում մարդիկ հեշտությամբ խորհում են դժվար գործերի մասին, բայց կամ նրանց ծրագրածն անկարելի է լինում իրականացնել, և կամ իրենք չեն կարողանում գործը հասցնել մինչև վերջ և մնում են մշտապես հպատակության մեջ³³:

Միջնադարյան Եվրոպայում տարածված երգիծական փոքրիկ պատմվածքներից՝ ֆաեցիներից մեկի թարգմանությունն է կամակոր կնոջ առակը: Ամուսնու հետ վիճելով այն մասին, թե արտը ոչ թե հնձված է, այլ խուզված, կամակոր կինը խեղդվելու պահին անգամ ձեռքը մկրատի ձևով շարժում է՝ պնդելով, թե արտը խուզված է:

«Ազդարարի» արձակ թարգմանությունների մեջ թե՛ ծավալով և թե՛ արծարծած գաղափարներով նորություն էր անգլերենից թարգմանված «Փոքրիկ Ջեկը» վիպակը, որն արկածային ժանրի առաջին օրինակներից էր մեր գրականության մեջ: Թարգմանական արձակ գործերից է և «Սանտոն Բառսիսայի պատմությունը», որը նույնպես իր ոգով ներդաշնակում է ամսագրի գեղարվեստական գործերի ուղղությանը և մի բողոք է կեղծ բարեպաշտության դեմ: Ուշագրավ է նաև արքեպիսկոպոս Կոզոնիայի պատմությունը:

«Ազդարարի» արձակը, թարգմանական թե ինքնուրույն, աչքի է ընկնում նպատակի որոշակիությամբ, խոսքի պատկերավորությամբ, երգիծանքի հարուստ երանգներով: Այն իր մեջ խտացնում է ժողովրդական մտածողությանը հատուկ իմաստության և լավատեսության տարրերը:

Սակայն, «Ազդարարի» գրական բաժինը չի սպառվում միայն արձակի նմուշներով: Ամսագրում տպագրվել են և բազմաթիվ չափածո գործեր, որոնք բանաստեղծություններ չեն այսօրվա հասկացողությամբ,

³³ Նույն տեղում, 1794, թիվ 3, էջ 121-122:

այլ միահանգ, միապաղաղ բանաստեղծություն-հրապարակախոսական տրակտատներ: Այս ժանրով են ստեղծագործել «Ազդարարի» հրապարակախոսները, որոնցից ամենաշնորհալին՝ **Ուրախակից բարեկամը**, ամսագրում զետեղել է 7 բանաստեղծություն: «Ազդարարի» բանաստեղծներն առանձնակի հետաքրքրություն են ցուցաբերում դեպի հայ ժողովրդի քաղաքական անցյալը, գովերգում են իրենց նախնիների վաղեմի փառքը, արծարծում ազատասիրական և հայրենասիրական գաղափարներ:

«Ազդարարում» տպագրվել են նաև դասական ոճի մի քանի բանաստեղծություններ, որոնց արժանիքները ժամանակին չափվում էին նրանց ճարտասանական կատարելության աստիճանով: Բանաստեղծական այս ձևը, սակայն, բնորոշ չէ «Ազդարարի» գրական բաժնի համար: Այդ բաժնի նյութերը հիմնականում հավաստում են հայ գրականության աշխարհականացման փաստը: «Ազդարարը» հայ նոր գրականության ձևավորման նախօրյակի գրական այն առաջին դպրոցն էր, որը զգալի աշխատանք էր կատարում հայ գրականության աշխարհականացման բնագավառում:

Ի՞նչ պատկերացում ունեին «Ազդարարի» գրական աշխատակիցները բանաստեղծական արվեստի մասին: Նրանք գրեթե բոլորը խոստովանում են, որ անձանոթ են քերթողական արվեստի գաղտնիքներին և իրենց ուժերից վեր են համարում կատարյալ գործ ստեղծել: Անգամ «Ազդարարի» մշտական աշխատակից **Ուրախակից բարեկամը** իր օգտագործած սահմանափակ հանգերի շինանյութը նկատի ունենալով՝ իրեն համեմատում է այն մարդու հետ, որը մտածում է 200 աղյուսով բնակարան կառուցել: Նա նույնիսկ խոստովանում է, որ եղել են պահեր, երբ ինքը հուսահատվել է և որոշել այլևս չգրել, բայց կրկին գրիչ է վերցրել, վստահ լինելով, որ ընթերցողները գնահատելով «դիտավորության պատվականությունը», իրեն կներեն տաղաչափական զանցանքների համար: Ստեղծագործական աշխատանքը նա համարում է ոչ թե զվարճություն կամ հաճելի ժամանց, այլ ուսումնառության, մտքի լարված աշխատանքի, ժամանակի էական հարցերի մեջ խորամուխ լինելու դժվարին գործընթաց:

Դժբախտաբար, «Ազդարարի» բանաստեղծներից և հեղինակներից շատերի ինքնությունն այսօր դժվար է վերականգնել, նրանց գրա-

կան ծածկանունները դեռևս չեն վերծանվել: Հայտնի են միայն Թադեոս Տեր-Անդրեասյանի, Խոջամալ Սաֆարյանի, Հակոբ Այուբյանցի անունները: Ամսագրին շատ մոտ կանգնած **Ուրախակից բարեկամը և Հայի որդի հայը** ժամանակի պայծառ մտածողներից էին, բազմակողմանի զարգացած բանաստեղծ-հրապարակախոսներ:

Կասկածից վեր է, որ բազմաթիվ անստորագիր նյութերի, գեղարվեստական գործերի և մշակված առակների հեղինակը Հարություն քահանա Շմավոնյանն էր, որը սովորություն չուներ նամակներից բացի ստորագրել որևէ հոդվածի տակ: Նա էր որոշում ամսագրի գրական ուղղությունը, ընտրում նյութերը, որոնք առաջին հերթին պետք է համապատասխանեին ամսագրի ընդհանուր ոգուն: Շմավոնյանը հեղինակ էր և բազմաթիվ թարգմանական նյութերի, որոնք նույնպես ընտրվում էին մեծ խնամքով: Ի դեպ, մի առիթով խոսելով արտասահմանյան թերթերի գրական նյութերի խայտաբղետ բովանդակության մասին, նա գրում է, թե ինքը չէր կարող անքննադատ կերպով օգտվել դրանցից, որովհետև այդ գործերն «ավելի առասպելաբանություններ, քան բարոյական գրույցներ են»:

* * *

«Ազդարարն» ուներ խմբագրական մարմին, որի անդամները կամ, այսպես կոչված, վերակացուները ուսումնասիրում էին ստացված նյութերը և ապա միայն դրանք թույլատրում տպագրության:

Արտաքին լուրերը խմբագիրը մեծ մասամբ կազմում էր եվրոպական թերթերի նյութերով՝ քննական վերաբերմունք ցուցաբերելով աղբյուրների նկատմամբ:

Շմավոնյանը կարևոր նշանակություն էր տալիս տեղի հայ բնակիչներին թերթի հետ կապելու խնդրին: «Ազդարարի» հրատարակության օրվանից Մադրասի հայոց եկեղեցում դրվում է մի արկղ, որի մեջ քաղաքացիները կարող էին անստորագիր թղթակցություններ գցել: «Ազդարարում» տպագրվում են բազմաթիվ թղթակցություններ, որոնք հանված էին այդ «սնդուկից»: Թղթակիցների թվում կային ամենաբազմազան մասնագիտությունների տեր մարդիկ: Շմավոնյանը, սակայն, չի բավարարվում այն թղթակցություններով, որ ստանում էր սնդուկի միջոցով կամ անձնական խրախուսանքների գնով: Իբրև գործին քաջահմուտ մարդ,

նա իր կապերն օգտագործելով ձեռք է բերում այն բոլոր հետաքրքրական նամակները, որոնք ստացվում էին Չինաստանից, Ֆիլիպիններից, Բասրայից, Ռուսաստանից... Այս ճանապարհով նա հարուստ ինֆորմացիա է տպագրել առևտրական շուկայի, ծովահենների կողմից աղետի ենթարկված հայ վաճառականների, Կովկասի իրադարձությունների և, մասնավորապես, Աղա Մահմեդ խանի արշավանքների մասին: «Ազդարարում» տպագրվել են բազմաթիվ առևտրական հայտարարություններ, հաղորդումներ՝ ժողովների, վիճակահանության պայմանների, առևտրականների հիվանդության մասին, դատական նիստերի նկարագրություններ, Մադրասի գաղութի հայերի առօրյան լուսաբանող լուրեր, մահերի, ծննդյան և ամուսնությունների լուրեր, նավերի չվացուցակը, լուսնի լրման փուլերը և այլն: Շատ արժեքավոր են շուկայում ապրանքների գների մասին եղած ամենամսյա հաղորդումները:

Հետաքրքրություն են ներկայացնում և այն սակավաթիվ նյութերը, որոնք վեր են հանում ժամանակի հասարակական փոխհարաբերությունների պատկերը Հնդկաստանում: Այդ իմաստով ուշագրավ են հայազգի Ստեփանոս Գուլամբյանի թղթակցությունները, որտեղ խոսվում է Մադրասի նահանգապետ լորդ Հոբերթի և նրա շքախմբի երկու այցի մասին Մուրչուտ՝ Ստեֆան Պապամի բամբակի պլանտացիաները: Այստեղ նկարագրվում են անգլիական գաղութարարի իշխանական երթը (փղերի և ուղտերի քարավաններով), նրան ցույց տրված շքեղ ընդունելությունը, ճաշկերույթները, տեղացիների ուժերով տրված պարահանդեսները և այլն³⁴: Հնդկահայ գաղութի վաճառականներից մի քանիսի հետաքրքրասիրությունների լայն շրջանակի համար բնորոշ է մի փաստ. հայ վաճառական Գրիգոր Մարգար Խաղարը, որ մի հայտարարությամբ ազգակիցներին հրավիրում էր իր խանութը գինիներ գնելու, երկրորդ հայտարարությամբ նրանց ուշադրությունը հրավիրում է իր պատկերասրահի վրա: Նա հայտնում է, որ մի անգլիացուց ձեռք է բերել նկարների և արձանների մի հարուստ հավաքածու, որը շաբաթական երկու օր ցուցադրելու է մուտքի վճարով (մուտքի տոմսակն արժեք 1 հուն, այնքան, որքան «Ազդարարի» մեկ ամսվա բաժանորդագինն էր): Նա հայտնում է, որ մեկ ամիս հետո ցուցահանուհւն տեղափոխելու է այլ երկիր: Հայտարարության մեջ նշվում էր, որ ի թիվս այլ արձանների և պատկերների (որոնք

³⁴ Նույն տեղում, 1794, թիվ 2, էջ 91:

նկարագրվում են), ցուցադրվելու են «Վոլտեր և Ռոսիո գերահռչակ հեղինակք, այսինքն գրողք, գրյանց Ֆռանսայո»:

Հարություն Շմավոնյանը իր ժամանակի զարգացած և լայն մտահորիզոնի տեր գործիչներից էր, գիտեր մի շարք լեզուներ, ուներ բարձր ճաշակ, լավ էր պատկերացնում լրագրային գործը և նվիրված էր դրան: Նա մեկն էր այն եզակի գործիչներից, որոնք ըմբռնում են ժամանակի պահանջը և քայլում ժամանակի հետ. մամակներից մեկում նա այն միտքն է հայտնում, թե տեսնելով իր շրջապատի մտավորականության գովելի իղձը, ինքը տպարան է հիմնել և իրեն վարձատրված է գգում՝ ժամանակակիցների քաջալերությամբ:

Հայ ժողովրդի հեռանկարները Շմավոնյանը անվերապահորեն կապում էր քաղաքակրթության և գիտության յուրացման, ժողովրդի մտավոր զարգացման հետ: Այս գաղափարները նա հայտնում էր և՛ իր հոդվածների, և՛ անձնական մամակների միջոցով: Այսպես, ուսումնածարավ իր թղթակցի մամակին ի պատասխան, որը հայտնում էր, թե իր ուսման փափագը չի կարող «գրչաւ ի սմա նշանակել», Շմավոնյանը մի շարք խորհուրդներ է տալիս, որոնք ուղղված էին առհասարակ երիտասարդությանը: Հիշեցնելով Պլատոնի և Արիստոտելի օրինակը, նա գրում է. «Ովքե՞ր էին Արիստոտելը և Պլատոնը, որոնց անունները հիշում ես. մի՞թե նրանց ժամանակ հարուստներ չկային, որոնք փառավորվում էին կյանքում. սակայն նրանք ովքե՞ր էին, և ո՞րն է նրանց գործը: Տես, որ նրանք անցան իրենց անցողիկ փառքով, հագիվ արժանանալով տաաը տարվա հիշատակության, իսկ նյութապես զրկված գիտնականները մինչև այսօր դպրության պատմության անմահների շարքում են գրված³⁵:

Հետևելով իր ժամանակի գիտական մտքի նվաճումներին, Շմավոնյանը հայ ընթերցողներին հանգամանորեն ծանոթացնում է իր օրերի մեծ նորության՝ օդապարիկի բռնիքի մանրամասներին: Հողվածի վերջում, որը Հ. Եղիա Էմտազյանի «Համառօտ պատմութիւն օդապարիկ գնտոյ» գրքույկի արտատպությունն էր, հեղինակը իր հայրենակիցներին կոչ է անում շարունակ ձգտել բարձունքների, տիրապետել գիտությանը, բարձրանալ օդապարիկից էլ վեր, ավելի վեր, քան աստղային համակարգությունները, թռչել և հասնել հայրենի աշխարհը: «Ահա այսպիսի անգուգական բարձրության փափագելով,- գրում է Էմտազյանը,- ջանա-

³⁵ Նույն տեղում, 1795, թիվ 11, էջ 377:

ցեք աստվածային վարք ստանալ, որպեսզի մեր այս աշխատանքն էլ ոչ թե անօգուտ, այլ պտղաբեր լինի»:

«Ազդարարը» ունի իր ուրույն և անփոխարինելի տեղը հայ պարբերական մամուլի պատմության մեջ: Այն ուսանելի դպրոց է եղել հետագա շրջանի հայ ժողովրդագրի համար: Առաջին հայ պարբերականը լինելուց բացի, «Ազդարարը» մնում է որպես XVIII դարի վերջի հնդկահայ իրականության պատկերն արտացոլող պատմական աղբյուր:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇՄԱՎՈՂՅԱՆ*

Հայ առաջին պարբերականի հիմնադիր Հարություն Շմավոնյանը Պարսկաստանի Շիրազ քաղաքից էր, իր ժամանակի կրթված մտավորականներից մեկը, քաջատեղյակ հայ հին և միջնադարյան մշակույթի պատմությամբ: 1777 թ. կորցնելով երկու զավակներին, Շմավոնյանը թողնում է աշխարհիկ կյանքը և նվիրվում ճգնակեցության: Նա ուսումնասիրում է պարսից և արաբական լեզուները և գրականությունը, փիլիսոփայական և աստվածաբանական ուսմունքները, փորձում է խորամուխ լինել բնության գաղտնիքների մեջ:

1784 թ. Շմավոնյանը գնում է Մաղրաս: Կարճ ժամանակամիջոցում նա իր հայրենասիրությամբ, գիտելիքներով և առաքինի վարքով այնքան է սիրելի դառնում տեղի հայ համայնքին, որ վճռում է ընդմիշտ հաստատվել Մաղրասում և այստեղ աշխատում է ամբողջ 40 տարի:

Հարություն Շմավոնյանը մի քանի գործակիցների օգնությամբ շարունակում է Մաղրասի հայկական գաղութում հաստատված լուսավորական ավանդույթները: Հմտանալով տառեր ձուլելու արհեստի մեջ, նա 1789 թ. հիմնադրում է Մաղրասի երկրորդ հայկական տպարանը, որտեղ լույս ընծայված առաջին գրքույկը «Մարիանե կուսին վկայաբանությունն» է: Նրան օգնելու համար Կալկաթայից Մաղրաս է գալիս Սամուել քահանա Դայթմազյանցը, որի խորհրդով Շմավոնյանը հրատարակում է այնպիսի գրքեր, որոնք պիտանի լինեին տեղի հայ դպրոցների համար: Դրանք էին Պաղտասար Դպիրի «Գիրք քերականութեան», Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանաց», Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» և այլ աշխատություններ: Տպարանի հիմնադրման սկզբնական շրջանում այդտեղ տպագրվել են և հնդկահայերին ուղարկված Հովսեփ Արղությանի կոնդակները, Թադեոս Սոգիմյանցի «Տետրակ, որ կոչի Ողբ Հայաստանեաց» գրքույկը և այլն:

1794 թ. հոկտեմբերին Հարություն Շմավոնյանը հիմնադրում է հայկական առաջին պարբերականը՝ «Ազդարար» ամսագիրը: Սկսվում է նրա գործունեության երկրորդ և ամենավեր արգասալից ժամանակաշրջանը:

Ամսագրի առաջին համարի խմբագրականում դիմելով ընթերցողնե-

* Տպագրվել է՝ Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դարեր, Երևան, 1976, էջ 567-574:

րին, Շմավոնյանը նրանց ծանոթացնում է իր նախաձեռնության շարժառիթներին և ծրագրին: Թեև ամսագիր հրատարակելու գաղափարը Շմավոնյանն ընդօրինակել էր անգլիական գործիչներից, որոնք այդ օրերին սկսել էին թերթ հրատարակել Մադրասում, բայց նա ջանում էր պատասխանել բացառապես հայ իրականության առաջադրած հարցերին: Նման նպատակը իր կնիքն է դնում ամսագրի բովանդակության վրա: Ի տարբերություն եվրոպական երկրներում սկզբնավորված առաջին թերթերի, որոնք խոշոր քաղաքների առևտրական բյուլետենների դեր էին կատարում, «Ազդարարը» ուներ հարցերի առավել լայն ընդգրկում, և փաստորեն դառնում է գիտամասսայական և գրական-հասարակական պարբերականի նախատիպը:

Ամսագրի առաջին բաժինը նախատեսված էր գեղարվեստական գրականության համար (ինքնուրույն և թարգմանական): Դրան հաջորդում էր պատմաբանասիրական բաժինը, որտեղ զետեղվում էին ընտիր նմուշներ պատմական գրականությունից: Երրորդ բաժինը նվիրված էր արտասահմանյան, այդ թվում Անդրկովկասի քաղաքական լուրերին, իսկ վերջինը՝ համայնքի կյանքին:

Խմբագիրը իր շուրջն է համախմբում մի քանի խանդավառ երիտասարդների (որոնց կոչում էր վերակացուներ) և կազմակերպում խմբագրական մարմին: Սահմանվում է հատուկ կարգ, որի համաձայն՝ տպագրվելիք նյութերը կանխապես պետք է ստանալին խմբագրության հավանությունը:

Քաղաքական և պատերազմական լուրերը Շմավոնյանը քաղում էր եվրոպական թերթերից, նյութի ընտրության գործում հանդես բերելով քննական մոտեցում:

Հարություն Շմավոնյանը հսկայական եռանդ և ժամանակ է նվիրել խմբագրական աշխատանքներին: Ամսագրի հրատարակության հիմնական ծանրությունն ընկած էր նրա վրա:

Իր խմբագրական գործունեության ընթացքում Շմավոնյանը մի նոր աստիճանի է հասցնում հնդկահայ գաղութում ստեղծված քաղաքական-հրապարակախոսական միտքը: «Ազդարարի» էջերում զետեղված հրապարակախոսական հոդվածների, գիտամասսայական նյութերի և գեղարվեստական գրականության միջոցով նա հանգամանորեն քննարկում է իր ժողովրդի լուսավորության, դաստիարակության, քաղաքական

ազատության հետ կապված խնդիրները: «Ազդարարի» խմբագրի լրագրական գործունեությունը հետապնդում էր մի սևեռուն նպատակ՝ արքնացնել ժողովրդի քաղաքական ինքնագիտակցությունը, նրան լուսավորել եվրոպական քաղաքակրթության ոգով և հաղորդակից դարձնել ժամանակի մտավոր շարժմանը:

Իր ծրագրային հոդվածներից մեկում Շմավոնյանը եվրոպական երկրների քաղաքական դրության ֆոնի վրա քննարկում է հայության դրությունը: Ամենուր խռովություններ են և պատերազմներ. Հնդկաստանի վերջին դարի պատմության չնչին մասն է անցել առանց արյունահեղության: Խռովությունները խանգարում են Եվրոպայի անդորրը. Պարսկաստանում կյանքը հոգևարքի մեջ է. Վրաստանի ժողովրդին անհանգստացնում է ամբարիշտ հարևանը: Ինչ վերաբերում է հայերին, ապա նրանք հետին թշվառության մեջ են. վաճառականությունը, որ առերևույթ բարվոք վիճակում է, գուրկ է եկամտից և, ինչպես պատկերավոր ձևով արտահայտվում է Շմավոնյանը, եթե «ի խոր հայիս, հիմն ի վերայ աւագի գտանի»: Հարուստները չեն ձգտում բարի գործ կատարել, աղքատներն անգոր են, իսկ ժողովրդի ընդհանուր տգիտությունը նրան մարդկության մեջ ձգել է հետին աստիճանը:

Չգաստացնելու համար իր հայրենակիցներին՝ հրապարակախոսը դիպչում է նրանց արժանապատվությանը. «Տեղի կատակարկութեան լինիմք 'ի մէջ այլազգաց. մինչդեռ նայիմք առ պտուղն ուսմանց այլազգաց փայլէ իբրև զջահ վառեալ 'ի մէջ գիշերի, և մինչ դառնամք նայիլ ազգն մեր՝ տեսանեմք ոչ թէ միայն տառապեալ՝ այլև պատեալ տգիտութեամբ բոլորովին»³⁶: Շմավոնյանը ձգտում է օգնել իր ժողովրդի գեթ մտավոր կյանքի բարվոքմանը: Իր ընթերցողներին նա ներշնչում էր այն միտքը, թե պետք է պայքարել գիտություն և իմաստություն ձեռք բերելու համար և չընկնել հարստության ետևից: Հարուստները ոչինչ են իմաստունների համեմատությամբ, գրում է նա, չէ՞ որ Արիստոտելի և Պլատոնի ժամանակ նույնպես հարուստներ են եղել: Նրանց անունները ջնջվել են, այնինչ պատմությունը անմահների գրքում է գրել Պլատոնի և Արիստոտելի անունները:

Տարիներ անց, երբ Շմավոնյանը դադարեցրել էր լրագրական գործունեությունը, իր տպարանի հրատարակություններից մեկի առաջաբանում

³⁶ «Ազդարար», 1795, թիվ 8, էջ 209:

կրկին սրտագին գրույց է բացում ընթերցողների հետ: Հրապարակախոսը հորդորում է նրանց՝ սիրել իրենց ազգն ու հայրենիքը, չտարվել սնոտի ցանկություններով ու հարստությամբ: Նա խորհուրդ է տալիս չմոռանալ հայրենի աշխարհը, որը ոտնակոխ է լինում բռնավորների կողմից, չդավել հայերին և չմոռանալ մայրենի լեզուն, կոչ է անում հայերին՝ պահպանել իրենց բարբառն ու Արարատյան աշխարհը:

Հարություն Շմավոնյանը «Ազդարարի» հրատարակության երևույթը իրավամբ համարել է «նորոգ ոգոածք» և «ամենայնիւ նոր՝ յայսմիկ դարոջ»: Հայ գործիչներին իրավեր կարդալով օժանդակելու իր ձեռնարկության պայծառությանը, Շմավոնյանը համոզված էր, որ այդ միջոցով մխիթարում է ազգին: Պետք է ենթադրել, որ նրա գործակիցները նույնպես ոչ միայն գիտակցում էին մամուլի նշանակությունը, այլև հստակ պատկերացում ունեին ամսագրի խնդիրների մասին: «Ազդարարի» մըշտական աշխատակից «Ուրախակից բարեկամը», իբրև ողջերթի խոսք, «Ազդարարին» խորհուրդ է տալիս ուսումնասիրել այլալեզու թերթերի աշխատանքի ոճը, լինել աշխատասեր ու նախանձախնդիր, տպագրել միմիայն հավաստի լուրեր, մեծ տեղ տալ դաստիարակչական հոդվածներին և գեղարվեստական գրականությանը:

«Ազդարարը» զարգացնում էր ոչ միայն հայերի լուսավորության, այլև քաղաքական ազատագրության ծրագիրը: Այսպես, «Ուրախակից բարեկամը» առաջնորդողների կշիռ ստացած իր բանաստեղծություններում հանգամանորեն քննարկում է Հայաստանի ազատագրման հետ կապված հարցերը³⁷: Քաղաքական այդ ծրագիրը «Ազդարարի» հրապարակախոսը խաբսխում էր ռուսական հզոր պետության բարյացակամության և օգնության վրա: Նոր Նախիջևան և Գրիգորուպոլիս քաղաքների հիմնադրումը (1792 թ.), տեղի հայության ստացած առանձնաշնորհումները, այլև Հովսեփ արքեպիսկոպոսի հավաստիացումները ռուսական արքունիքի՝ ղեպի հայերն ունեցած մարդասիրական նկատառումների վերաբերյալ, ամրապնդում էին գաղութահայերի հույսերը: Մյուս կողմից, Արևելյան Հայաստանին սահմանակից քրիստոնյա վրացական թագավորության առկայությունը ներշնչում էր այն հավատը, թե Հայաստա-

³⁷ Հավանաբար «Ուրախակից բարեկամ» կեղծանունով «Ազդարարին» աշխատակցել է Մադրասի լուսավորական շարժման գործուն մասնակիցներից մեկը՝ քահանա և գրող Տեր-Անդրեասյան Սոգինյանցը:

նի ազատագրումից հետո երկրի ներքին կազմակերպչական հարցերը կլուծվեն վրաց Հերակլ Երկրորդ թագավորի աջակցությամբ:

«Ուրախակից բարեկամը» շարադրում է և իր ծրագրի երկրորդ մասը. հայերը պետք է վերցնեն իրենց գանձերը և գնան Հայաստան: Այնտեղ նրանք պետք է զարգացնեն երկրագործությունն ու արհեստները, երկրում ստեղծեն նյութական բարիքներ, դպրոցական լայն ցանց, իրենց գավակներին կրթեն աշխատասիրության և ուսումնատենչության ոգով:

Հայ ժողովրդի առջև ծառացած մեծ խնդիրները քննարկելիս բանավիճում էին ամսագրի թղթակիցներ «Հայրդղի հայը» («Հայ որդի հայի») և «Ազգակիցը»: «Հայրդղի հայը» հիմնավորապես քննարկելով հայերի անհաջողությունների պատճառները, նրանց կշտամբում է անգործունեության և այն բանի համար, որ իրենց սպասելիքները կապում են Աստծո շնորհների հետ: Աղոթքները և բարի ցանկությունները չեն կարող փրկել մարդկանց, եթե վերջիններս խուսափեն աշխատանքից. նա գրում է. «Միաբանիլ, արիանալ, խորհիլ և առաջանալ հարկ է, և ուր այսոքիկ գտանի, աներկբայապես գոյ և անդ ազատութիւն, փառք, պատիւ և ամենայն ցանկալիք կենաց» (թիվ 10): Նա կոչ է անում մանուկ սերնդին դաստիարակել ջանասիրության ոգով, որը միայն կարող է երաշխիք լինել հայերի բարօր կյանքի և նրանց ազատության իղձերի կատարման համար: Բոլոր ազգերին շնորհները ի վերուստ բաժանված են հավասարապես, շարունակում է նա, մարդիկ պետք է իրենց ձեռքով բարիքներ ստեղծեն և ոչ թե աղոթքով խնդրեն աստծուց:

«Ազգակիցը» առարկում է «Հայրդղի հային»: Նրա կարծիքով աշխատանքը հարցի լուծման միակ և վերջին ճանապարհը չէ: Պետք է կրթել սերունդը, լուսավորել ժողովրդին: Հայերի ձախտրոդությունները նա բացատրում է նրանով միայն, որ իր հայրենակիցները ուսում չունեն, նրանց ունեցվածքով կարելի էր մի ազգ բարձրացնել, բայց ավաղ... նրանք ծանոթ չեն կրթության բարիքներին՝ միաբանությանը, ճշմարտությանը, ընկածին օգնելու անհրաժեշտությանը: Դիշտ է, օտար դպրոցներում կրթված հայ երիտասարդները բարի օրինակ են տալիս իրենց շրջապատին, բայց գաղութի մեծ մասը չգիտե բարեգործություն անել և չի կարող հասկանալ նաև իր քարոզները³⁸:

³⁸ Հայտնվել է այն կարծիքը, որ «Հայրդղի հայ» գրական կեղծանունը պատկանում է Մովսես Բաղրամյանին, իսկ «Ազգակից» կեղծանունը՝ Շահամիր Շահամիրյանին

56

«Ազդարարի» հրապարակախոսները թեև բանավիճում են, բայց, ինչպես նկատել են բանասերները, նրանց ելակետը նույնն էր: Հայերին հարկավոր էր հասցնել ազգային ինքնաճանաչության՝ կրթության, լուսավորության, աշխատանքի և բարոյական բարձր առաքինությունների ոգով նրանց դաստիարակելու ճանապարհով: Իր ամսագրով Շմավոնյանը ձգտում էր իրականացնել այդ ծրագիրը: Նա «Ազդարարի» էջերում զետեղել է բնագիտական գրույցներ, հոդվածներ նվիրել Ֆրանսիական հեղափոխությանը և լեհական դեպքերին: Ռուսաստանից և Կովկասից ստացած նամակները նրան հնարավորություն էին տալիս գաղութահայությանը ծանոթացնելու հեռավոր հայրենիքում տեղի ունեցող քաղաքական անցուղարձին:

Հարություն Շմավոնյանը մեծ նշանակություն է տվել գեղարվեստական գրականությանը և դրա միջոցով ջանացել է դաստիարակել իր ընթերցողներին: Ամսագրի տպագրության հնարավորությունը նա օգտագործել է՝ կորստից փրկելու հայ հեղինակների աշխատությունները (Խաչատուր Ջուղայեցու «Պատմություն Պարսից», Հակոբ Այուբյանցի «Հեյդարալի խանի պատմությունը»): Ամսագրի էջերում նա զետեղել է նաև թարգմանական գրականության մի շարք նմուշներ: Նրա գործունեությունը մեծապես խրախուսվում էր Ռուսաստանի հայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանի կողմից, որն իր կոնդակներում ընդգծում էր հայերին եվրոպական քաղաքակրթությանը հաղորդակից դարձնելու անհրաժեշտությունը: Ազգը չի ծաղկի առանց դրան, գրում էր նա և նույնիսկ հույս հայտնում, թե դա կօգնի վերագտնելու հայրենիքը:

«Ազդարարի» հրատարակության գործը թեև խանդավառությամբ է ընդունվում, այնուամենայնիվ, չի հարատևում: Ամսագիրը բաժանորդագրությամբ չի ապահովում խմբագրի կատարած ծախսերը (բավական է հիշել, որ առաջին տարվա բաժանորդների թիվը միայն 28 էր): Եվ ընդամենը 18 համար լույս ընծայելուց հետո 1796 թ. Շմավոնյանը դադարեցնում է «Ազդարարի» հրատարակությունը: Նրա լուսավորական գործունեությունը, սակայն, չի ընդհատվում. նա դեռևս կարող էր օգտվել տպարանի ընձեռած հնարավորություններից: 1771 թ. հրատարակած մի գրքի առաջաբանում նա համոզմունք էր հայտնում, թե տպարանը կվառվի իբրև ճրագ և լույս կտա իմաստություն փափագողներին:

Հարություն Շմավոնյանը ընթերցողներին հանձնարարում էր կար-
դալ նաև թարգմանական գրականության ընտիր օրինակները: Այսպես,
երրայեցերենից թարգմանված «Գիրք անոանեալ Դեկավար մանկանց»
աշխատության մասին գրում է, թե այն լի է իմաստությամբ և հանճարով:
Այդ գիրքը կբանա մարդկանց մտքի աչքերը, գրում է նա, կլուսավորի
հոգու գորությունը, մարդկանց կտա գիտություն և հանճար, որոնք շատ
ավելին արժեն, քան ոսկին ու պատվական ակները:

Իր գործունեության երրորդ և վերջին շրջանում Հարություն Շմավո-
նյանը զբաղվում է միայն հրատարակչական գործունեությամբ: 1797 թ.
վերջապես նա լույս է ընծայում Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանացը»,
որի տպագրության աշխատանքները սկսվել էին դեռևս 1794 թ.: Շմավո-
նյանի լուսավորական գործունեությունը տալիս է իր արդյունքները: Գա-
ղութում հանդես են գալիս գործիչներ, որոնք նվիրվում են տպագրական
գործին: Այսպես, Շմավոնյանի նախկին գործակիցներից մեկը՝ Սկրտում
Սիմեոնյանը, 1803 թ. իր ուսուցչի տպարանում հրատարակում է անգլե-
րեն-հայերեն «Փոքրիկ բառագիրը», որը նվիրված էր ազգի կրթասեր
անդամներին: Այդ գրքի բնաբանը միանգամայն ներդաշնակում է Շմա-
վոնյանի սկզբունքներին, ինչպես չմշակված հողը չի կարող պտղաբեր
լինել, այնպես էլ չհղկված միտքը չի կարող փայլել:

Գաղութահայ Սամուել Մուրադյանը թարգմանել է տալիս ֆրանսիացի
վիպասան Մարմոնտելի «Բելիսարիոս» պատմավեպը, որը տպագրվում
է 1809 թ.: Նույն տարին՝ արդեն ծերացած Շմավոնյանը տպարանի տնո-
րիությունը հանձնում է իր շնորհալի աշակերտ Սկրտում Սիմեոնյանին
և այլ «նորոգ ուսյալ» գործիչների, բայց շարունակում է մասնակցել գա-
ղութի հասարակական կյանքին:

Հնդկահայ գաղութի առաջատար գործիչները XIX դ. սկզբին շա-
րունակում էին զբաղվել հայերի քաղաքական ազատագրման հարցով:
Նրանք պարբերաբար ժողովներ էին գումարում, որտեղ քննում էին Հա-
յաստանի ազատագրման հեռանկարները և համապատասխան գրու-
թյուններ կազմելով, ուղարկում էին ռուսաց և Վրաստանի թագավորնե-
րին: Այդ ժողովներում նրանք խմբագրում են Ալեքսանդր Առաջինին և
Հերակլին ուղղված նամակները, որոնք կարդում և ստորագրում են հո-
տրնկայա: Հարություն Շմավոնյանի ստորագրությունը առաջինն էր (35-
ից): Նրա ճառն աչքի է ընկնում շեշտված ռուսական կողմնորոշման ոգով

և տոգորված է հայության փրկության անվերապահ հավատով:

Հարություն Շմավոնյանը վախճանվել է 1824 թ.: Հայ լուսավորչի մասին ժամանակակիցները խոսել են մեծ հիացմունքով, ընդգծել նրա անսահման նվիրվածությունը իր ժողովրդին: Այսպես, Շմավոնյանի մերձավոր բարեկամը, տաղանդավոր ուսուցիչ և բանասեր Ղայթմազյանցը նրա մասին գրում է. «Զմիշտ ցանկալ զօգուտ հասարակաց և զշինութիւն ազգին, թողեալ զհոգս ընտանեաց և զավակաց, բնակի ի յօտ արութեան և առ այսպիսի շահեկան զարդիւնաւորութեան տքնի»³⁹:

³⁹ «Գիրք Պորփիրի», Մաղղաս, 1793, էջ 14:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇՄԱՎՈՂՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ*

Այս տարվա հոկտեմբերի 16-ին լրացավ հայ լրագրության հիմնադրման 175 տարին: Առաջին հայ խմբագիրը՝ Հարություն Շմավոնյանը, ոչ միայն կարողացավ կռահել իր օրերի համար կենսական անհրաժեշտություն դարձած՝ պարբերական մամուլի ստեղծման կարևորությունը, այլև հաջողությամբ իրականացրեց հայերեն առաջին պարբերականի հրատարակման գործը:

Շմավոնյանի լուսավորական գործունեությունն սկսվում է XVIII դարի 80-ական թվականների վերջին, երբ նա նյութական զոհաբերությունների գնով և գրեթե իր ձեռքերով ստեղծելով հայկական տառերը, հիմնադրում է Մադրասի երկրորդ հայկական տպարանը: Այնուհետև, գերազանցապես նրա ծախքով տպագրվում են մի շարք գրքեր, որոնք ընդառաջում էին գաղութահայության պահանջներին: Իբրև ուսումնական ձեռնարկներ, համապատասխան մանկավարժական-մեթոդական ցուցումներով, հրատարակվում են Պաղտասար Դպիրի «Գիրք քերականութեան», «Գիրք Պորփիրի», Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանաց», «Գիրք անոանեալ ղեկավար մանկանց» աշխատությունները: Ներսես Շնորհալու «Յիսուս որդին» Շմավոնյանը տպագրում է՝ հաշվի առնելով այդ գրքի մեծ պահանջը գաղութում: 1792 թ. առանձին գրքով, իսկ հետագայում նաև «Ազդարարի» էջերում տպագրվում են Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի կոնդակները: Ռուսաստանի հայության հոգևոր առաջնորդի հավաստիացումները ռուսական արքունիքի բարյացակամության մասին՝ հայ հրապարակախոսն ընկալում է բուռն ոգևորությամբ: Նա հայտարարում է, թե Եկատերինա II-ի ուշադրության արտահայտություններն իրենք կարողում են փափագմամբ: Հաշվի առնելով կայսրուհու «զանչափելի գթածին ողորմածութիւնը», Շմավոնյանը «Ազդարարի» միջոցով առաջարկում է երախտագիտական թուղթ առաքել նրան:

Շմավոնյանը բաժանում էր Շահամիրյանի ջերմ ցանկությունը՝ հայերին փրկված տեսնել Հերակլ II-ի օգնությամբ: «Ազդարարի» խմբագիրը ոչ միայն ամսագրի հերթական տետրակների, այլև իր տպարանի գրե-

* Տպագրվել է՝ «Պատմաբանասիրական հանդես», 1969, թիվ 4, էջ 130-146:

քե բոլոր հրատարակությունների տիտղոսաթերթերի վրա նշում էր՝ «'ի քազատութեանն օգոստոսափայլ տեառն երկրորդի Հերակլայ Բագրատունոյ 'ի Թիֆլիս»։ Ավելին, 1797 թ. «Գիրք անոսնեալ դեկավար մանկանցը» նա տպագրում է Շահամիր Շահամիրյանի ծախքով և խնդրանքով՝ «'ի պատիւ արփիափայլ Գիօրգի ժառանգ որդւոյ քազատութեան վրաց Բագրատունոյ»։

Իբրև հրապարակախոս և լուսավորիչ՝ Շմավոնյանին շարունակ հուզում էին ժողովրդի բարոյական և քաղաքական վերածնության խնդիրները։ «Ազդարարի» էջերում նա քննարկում է գաղութահայության տնտեսական անհեռանկար վիճակը, կշտամբում իր հայրենակիցներին՝ անհոգության համար։ Հայ իրականությունն անհաղորդ է մնում եվրոպական քաղաքակրթությանը, ահազանգում է նա, այստեղ իշխում է տգիտության Բելը։ 1794 թ. հիմնադրելով առաջին հայկական պարբերաթերթը, Շմավոնյանը ձեռնոց է նետում նոր ժամանակների Բելին։ Ամսագրի առաջաբանում, իբրև մտահոգ այգեպան, խմբագիրը բողոքում է քե՛ գետնի և քե՛ սերմի պակասությունից, բայց գիտակցելով իր ձեռնարկած գործի պատմական նշանակությունը («նորոգ ոգոածք և, համարձակին ասել, որ ամենայնիւ նոր՝ յայսմիկ դարոջ»), Շմավոնյանը վճռում է չընկրկել։ Նա իր խնդիրն է դարձնում ընթերցանության նյութ հրամցնել հասարակությանը և դրդել գիտնականներին՝ հանդես գալ ամսագրի էջերում։

Թե որքան ժամանակին էր Շմավոնյանի քայլը, հաստատում են այն բազմաթիվ նամակները, որոնց հեղինակները հայտարարում էին, քե «Ազդարարը» վառել է ուսման տենչն ամենքի և առավելապես երիտասարդների մեջ։ «Երանի է ինձ զի ունիմ որդիք և ժողովուրդք ուսումանսերք», – պատասխան նամակով քթակիցներին է դիմում Շմավոնյանը և կրկին կոչում ընթանալու ուսման և իմաստասիրության ճանապարհով։

Հայերի լուսավորության և քաղաքական ազատության հարցերն ամսագրում արծարծվում են «Հայրդի հայ» («Հայ որդի հայի») ստորագրությունը կրող հրապարակախոսական երկու հոդվածում, որոնք ըստ Թ. Ավդալբեկյանի ենթադրության՝ պատկանում էին Մովսես Բաղրամյանի գրչին։ Այդ քեզը նա հիմնավորում է երկու հեղինակի լեզվի, ոճի, գաղափարների և ոգու նմանության փաստով։ Հաշվի առնելով Բաղրամյանի անվան շուրջ ստեղծված անվստահության մթնոլորտը (նա բանադրված էր Սիմեոն կաթողիկոսի կողմից), Ա. Կարինյանն անհավանական է հա-

մարում նրա հրապարակախոսական նոր ելույթի հնարավորությունը և կարծում, որ «Հայորդի հայ» գրական կեղծանունը պատկանում է Հ. Շմավոնյանին⁴⁰:

Ամեն դեպքում, այդ հոդվածները ծանրակշիռ հրապարակախոսական ելույթներ են, որոնց տիրական շեշտը չէր կարող պատկանել շարքային որևէ քոթակցի: Միայն գաղութի հայության մեջ առաջնակարգ դիրք ունեցող գործիչը կարող էր ազգին դիմել՝ «Հայեցարուք, Արամյանք» կամ «Ազգ իմ» կոչականներով, որոնք եթե մի դեպքում մտերմիկ շեշտ են պարունակում, այլ պարագաներում ազգին կշտամբելու կամ ուսուցանելու կոչումն ունեն:

Մենք կարծում ենք, որ Բաղրամյանի շուրջ ստեղծված քաղաքական անվստահության մթնոլորտն է թերևս պատճառ դարձել, որ նա «Ազդարարում» հանդես գար գրական կեղծանունով: «Հայորդի հայի» հոդվածների հոգեհարազատությունը Բաղրամյանի հրապարակախոսությանը՝ վեր է կասկածից: «Հայորդի հայը», ինչպես և Բաղրամյանը, պահանջում է ազգային ինքնաճանաչության հասցնել հայերին, մանուկ սերնդին դաստիարակել աշխատասիրության և միաբանության ոգով: Առանց այդ ամենի, գրում է նա, ունայն բան կլինի ասել, թե գնացեք ձեր երկիրը, նվաճեցեք այն և կառավարեցեք: Նախ ջանքեր պետք է թափել, գործին ձեռնամուխ լինել, պայքարել: Չէ՞ որ հռոմեացիները պայքարի ու վճռակա-նության գնով միայն կարողացան ազատվել բռնակալ Մեքստոս Տարկ-վինիուսից, վկայակոչում է նա «Լուկրեցիայի» օրինակը:

1797 թ. «Ազդարարի» դադարից հետո տպագրված գրքերից մեկի վերջաբանում Շմավոնյանը ևս Բաղրամյանի ոգով շարունակում է խորհրդածել հայերի լուսավորության շուրջ: Հայ մանուկները պետք է ճանաչեն իրենց հայրենի երկիրը, սիրեն այն, սիրեն մայրենի լեզուն: «Աղաչեմ զձեզ, եղբայրք՝ անկեղծ սիրով սիրեցեք յազգ՝ և յաշխարհն ձեր», միաբան եղեք, կոչում է նա, ամբողջ գործությամբ հուսացեք [տենչացեք] ձեր ազգը և «մանուշակաբոյս երկիրն ձեր»: Հիշեցեք շարունակ, որ «գպտուղն աշխարհին մերոյ կթեն ձեռամբ և աշխատանօք մերոյ և վայելեն բռնավորքն մեր»: Իբրև այս թշվառությունը դարձանելու միջոց նա առաջարկում է սիրել ընթերցանությունը՝ հայկական տառով ու բա-

⁴⁰ Տե՛ս *Ազդարարի* թ., Ֆրանսիական մեծ հեղափոխությունն ու ժամանակակից հայերը // «Նորք», 1927, գիրք Դ, էջ 148; *Կարինյան Ա.*, նշվ. աշխ., էջ 224:

ռով, անադարտ պահել մայրենի լեզուն և խորանալ ուսման ու գիտության մեջ⁴¹։ Նույն թվականին լույս ընծայելով Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանացը», Շմավոնյանը նշում է հայ մատենագիրների աշխատությունների տպագրության իր ծրագրերի մասին, որոնք հույս ունեն իրականացնել «օժանդակութեամբ ազգասեր և բարեմիտ անձանց ազնուականաց՝ բանասիրաց և բարեպաշտից»։

Շմավոնյանը, որն օժտված էր նաև կազմակերպչական ակնհայտ ձիրքով, իր շուրջն է համախմբում Մաղրասի հայ մտավորականությանը և երիտասարդներին, նրանց կապում տպարանի աշխատանքների հետ, մասնակից դարձնում ամսաթերթի հրատարակության գործին։ Իր անձնական օրինակով նա ոգևորում էր բարեկամներին, առօրյա աշխատանքի բովում դաստիարակում հայ առաջին լրագրողների սերունդը։ Շմավոնյանի անձնուրաց գործունեությունը հետևյալ կերպ է բնութագրում նրա աշխատակից և բարեկամ Ս. Ղայթմազյանը. «Երջանիկ սրբակրոն տեր Յարութիւնը... զմիշտ ցանկալ զօգուտ հասարակաց և զշինութիւն ազգին, թողեալ զիոգս ընտանեաց և զաւակաց, բնակի ՚ի յօտարութեան և առ այսպիսի շահեկան արդիւնավորութեան տքնի»⁴²։ Այդ միտքը, կարծեք, հաստատում է Շմավոնյանը, երբ գրքերից մեկի հիշատակարանում խնդրում է Աստծուց կարողություն տալ իրեն՝ «վաստակել միշտ անձանձրոյթ, յաղագս ամենապայծառ ազգին հայոց, մինչև է զատեալ՝ հոգիս ՚ի մարմնոյ»⁴³։

Մեր բանասերները գրել են Հարություն Շմավոնյանի մասին, սակայն, դեռևս ամբողջ խորությամբ չի ուսումնասիրվել այն գործիչների վաստակը, որոնք հսկայական նպաստ են բերել Շմավոնյանի լուսավորական ձեռնարկումների իրականացմանը։ Կանգ առնենք նրա շուրջը համախմբված այդ գործիչների գործունեության վրա։

Սամուել քահանա Տեր-Փիլիպոսյան Ղայթմազյանց.– «Ազդարարի» 4-րդ համարում տպագրված է մի անստորագիր նամակ, ուղղված ոմն «Բանասերի»։ Նամակագիրը հայտնում է, թե ընդառաջելով «քանի մի եղբարց» խնդրանքին, ուղարկում է իր ուսուցիչ, հանգուցյալ Սամուել Ղայթմազյանցի կյանքի և գործունեության պատմությունը, «Ազդարար-

⁴¹ Տե՛ս «Գիրք անուանեալ ղեկաւար մանկանց», Մաղրաս, 1797, էջ 263-285։

⁴² «Գիրք Պորփիրի», Մաղրաս, 1793, էջ 14։

⁴³ Պաղպատար Դպիր, Գիրք քերականութեան, Մաղրաս, 1791, էջ ՈԺԷ։

րի» միջոցով այն ապագա սերունդներին հաղորդելու համար: Նամակին հետևում է անանուն աշակերտի ծավալուն հոդվածը, որը պետք է ենթադրել՝ գրված էր խմբագրի հանձնարարությամբ:

Սամուել Ղայթամզյանը Հնդկաստան էր հասել «յաշխաքիէն հայոց մեծաց», «Թիֆլիս մայրաքաղաքից»: Սկզբում նա աշխատում է Բոմբէյում, ապա 1791 թ. հուլիսին փոխադրվում Մադրաս: Եթե հաշվի առնելու լինենք այստեղ նրա գործուն մասնակցությունը տպարանի աշխատանքներին, ապա թերևս հիմք կունենանք մտածելու, թե այդ տպարանի հիմնադրության հանգամանքն է նրան դրդել Բոմբէյից տեղափոխվելու Մադրաս:

Շմավոնյանը խոստովանում է, որ տպարանի հիմնադրության առաջին տարիներին ինքը մենակ էր և հուսահատ: Մադրաս ժամանելուց անմիջապես հետո Ղայթամզյանցն իր հիմնական աշխատանքների հետ մեկտեղ կիսում է Շմավոնյանի տպարանական հոգսերը, Հարություն քահանայի արտահայտությամբ՝ դառնում նրա օգնականը և թիկունքը:

Շմավոնյանը մեծամեծ հույսեր էր կապում իր քանքարավոր աշխատակցի հետ, հավատալով, որ նա կպայծառացնի իր տպարանը և իբրև ճրագ կվառվի՝ լույս տալով իմաստության փափագողներին: Իսկապես, ինչպես հայտնում է կենսագիրը, Ղայթամզյանը հորդորում է Շմավոնյանին՝ իբրև ուսումնական ձեռնարկ հրատարակել Պաղտասար Դպիրի «Քերականութիւնը», որից միմիայն մեկ օրինակ կար Մադրասում: Այնուհետև, Մադրասի ուսումնասեր երիտասարդության համար, Շմավոնյանի հետ նա ձեռնամուխ է լինում «Գիրք Պորփիրի» փիլիսոփայական ձեռնարկի հրատարակությունը («Աշխատասիրութեամբ սրբագրեցեալ ՚ի Տէր-Սամուելէ որդոյ տէր Փիլիպպոսի Ղայթմազեցոյ»): Մեր կարծիքով, Պորփյուրի գրքի ուշագրավ առաջաբանը ևս պատկանում է Ղայթմազյանցի գրչին⁴⁴:

Շմավոնյանը և Ղայթմազյանը 1793 թ., կրկին երիտասարդության համար, ձեռնարկում են տպագրել Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանացը»: Այդ օրերին Ղայթմազյանը խիստ ծանրաբեռնված էր և մանկավարժական աշխատանքներով: Մադրասում նա հիմնադրել էր իր դպրոցը և պարապում էր տարբեր հասակի բազմաթիվ աշակերտների

⁴⁴ Ի թիվս այլ հարցերի, այստեղ գնահատականի խոսք է ասվում Շմավոնյանի հասցեին, որ բնականաբար, չէր կարող գրվել վերջինիս կողմից:

ու օրիորդների հետ: Մահախոսականի հեղինակը, որը Ղայթմազյանցի ավագ աշակերտներից էր, պատմում է այն անսահման սիրո և պատասխանատվության մասին, որով նա վերաբերվում էր իր գործին: Ամբողջ երեք տարի Ղայթմազյանցն աշխատում էր Մադրասում և «ոչ երբեք տեսաք զնա աններկայ ՚ի ժամանակի, ոչ հիվանդությունն արգելեաց՝ և ոչ զանազանություն եղանակաց»⁴⁵: Աշակերտները շարադրություններ են գրում, վերլուծություններ կատարում, ուսումնասիրում ճարտասանություն: Նրանք հիացած էին իրենց ուսուցչի անբավ գիտելիքներով, եռանդով, նրա բանաստեղծական տաղանդով: Ճարտասանության բոլոր օրինակները չափածո էր գրում, մի մանուկի ծննդյան առիթով հանպատրաստից թելադրում է մի բանաստեղծություն, որը մեջ է բերվում «Ազդարարում»: Նա աշակերտներին ստիպում էր ոտանավորներ գրել և երբ նրանք դժվարանում էին, «նա առժամայն գրեր վասն իւրաքանչիւրոց զանազան բանիւ»:

Ղայթմազյանցը թեև ուներ բազմաթիվ բանաստեղծություններ և ձեռագիր աշխատություններ, որոնց տպագրությունը երագում էր, Պորփյուրի գրքի տպագրությունից հետո ընտրում է Դավիթ Անհաղթի աշխատությունը. նա աշակերտներին խոստանում է այդ գրքի տպագրությամբ զմայլեցնել նրանց... Այդ օրերին Սամուել քահանան հիվանդանում է, սակայն մույնիսկ հիվանդ վիճակում նա ամեն օր սրբագրում էր մամուլները և հորդորում «գործակալներին»՝ արագացնել գիրքը: Նա միաժամանակ շարունակում էր ուսումնական պարապմունքները փոքրերի հետ (ավագներն ընդհատում են դասերը՝ չխանգարելու համար ուսուցչի խմբագրական աշխատանքները): «Չայս ամենայնի նեղութիւնն՝ հազիւ համբերել կարէ այր առողջ, մինչ սա ընդիմանայր, գոյով հիվանդ», – պատմում է երախտապարտ աշակերտը⁴⁶:

Մահվան օրը, 1794 թ. ապրիլի 27-ին, Ղայթմազյանցը կանչում է իր չորս սիրելի աշակերտներին և նրանց սովորեցնում, թե «որպիսի ջանիւք և զգուշութեամբ ջանասցուք արարտել զգիրքն»⁴⁷:

Ղայթմազյանցի կատարած աշխատանքի մասին Շմավոնյանը գրում

⁴⁵ «Ազդարար», 1794, թիվ 4:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Թեև գրքի տպագրությունը մոտենում էր վախճանին, բայց «Գիրք սահմանացը» լույս է տեսնում միայն 1797 թ.:

է. «Մինչ ընթերցանութեամբ զմայլիցիք... և գերափայլիցիք մտօք զհառութեամբ տրին իմաստից... յիշեսցիք ՚ի հոգևոր մաղթանս ձեր զ՚ի Քրիստոս հանգուցեալ քիֆիզեցի Տէր Սամուել շնորհապէրճ քահանայն տէր Փիլիպպոսեան, որ նախկին հեղինակ եղև տպեցեալ գրեանց ՚ի մերումս տպարանի, արպէս և տոյն «Գիրք սահմանաց», անձանձիր և բազմատքուն աշխատանօք սրբագրեաց ՚ի կենդանութեան իւրում մինչև ցկէտ մահոանն, և մինչդեռ կայր ՚ի մահիճս, տակաւին սրբագրութիւնն տրին ունէր ՚ի ձեռին»⁴⁸:

Սամուել Ղայթմազյանցի բանաստեղծություններից մեկը նրա աշակերտները տպագրում են «Ազդարարում»։ Պա ակրոստիքոս էր՝ մվիրված Շմավոնյանի տպարանին նյութապես օժանդակող Մարութ Հովսեփյան Փռնչյանցին⁴⁹։ Բանաստեղծությունը գրված է ճարտասանական փայլուն հնարանքներով և կրկին անգամ ապացուցում է Ղայթմազյանցի տաղանդն իբրև բանաստեղծի, փիլիսոփայի, լեզվաբանի։

Սակայն, նա ավելի մեծ էր իբրև բանաստեղծ և մանկավարժ։

Երբ Պաղտասար Դպիրի «Քերականությունը» և Պորփյուրի գիրքը հրատարակվում են ուղղագրական բազմաթիվ սխալներով («բստ խակութեան տպագարատան»), նա հուսահատվում է։ Նրան առանձնապես մտահոգում էին Պորփյուրի գրքի կետադրական սխալները, որոնք աղավաղում էին իմաստը։ «Հառաչէր միշտ ՚ի կենդանութեան իւրում, շարունակում է Ղայթմազյանցի աշակերտը, յատկապէս զի անուն իւր էր նախընթաց նոցին, և մշտապէս յուսայր և ասէր մեզ, զի տպելոց է զայնս կրկին անգամ»⁵⁰։ Գիտնական-բանասերի այս ցանկությունը, որ սակայն, չի իրականանում, վկայում է Մադրասի կուլտուրական շրջանակի գիտական նշանակալից մակարդակը, քերսև Մխիթարյանների դպրոցին մմանվելու նախաձեռնությունը։ Ինչ վերաբերում է Սամուել Ղայթմազյանցի գրական-բանասիրական ժառանգությանը, ապա մնում է ավստոսալ այդ կորուստը, որը միակը չէ հայ ժողովրդի մշակույթի պատմության համար։

Տէր Թադեոս Տէր-Անդրեասյան Սոգինյանց. Շմավոնյանի գործա-

⁴⁸ «Գիրք սահմանաց սրբոյն Դավիթ Անհաղթ փիլիսոփայի՝ հայոց իմաստասիրի», Մաղրաս, 1797, էջ 657։

⁴⁹ Տե՛ս «Ազդարար», 1795, թիվ 8։

⁵⁰ Նույն տեղում, 1794, թիվ 4։

կիցներից մեզ է հասել ժամանակի հայ մտավորական և բանաստեղծ Թադեոս քահանա Սոգինյանցի անունը: Ինչպես ի հայտ է գալիս Շմավոնյանի հրատարակություններից մեկի հիշատակարանից, Սոգինյանցը Նոր Ջուղայից էր, Մադրասում Շմավոնյանի կարգակիցն ու սիրելի բարեկամը: 1791 թ. Շմավոնյանի տպարանում հրատարակվում է Սոգինյանցի գրքույկը, որը կրում էր «Տետրակ, որ կոչի Ողբ Հայաստանեաց» խորագիրը: Գրքույկի գաղափարական ուղղությունը, հայ ժողովրդի վիճակի և նրա ապագա բախտի շուրջ խորհրդածությունները, Մայր Հայաստանի բանաստեղծական կերպարի ստեղծումը և պոեմի դիմադրական հյուսվածքը (այլև խորագիրը, որ հիշեցնում է «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» գիրքը), վկայում են նախորդ ժամանակաշրջանի հնդկահայ հրապարակախոսական մտքի հետ Թադեոս Սոգինյանցի հայացքների ուղղակի կապի մասին:

Հայտնի է, որ Բաղրամյանի գիրքը գրված էր «... Սակս սքափելոյ երիտասարդացն, և մանկանցն Հայկազանց ի վեհերոտեալ և ի հեղգացեալ քնրութենէ քնոյ ծուլութենէն»: Սոգինյանցի գիրքը նույնպես նախատեսված էր «առ ՚ի յորդորումն մանկանց հայոց», և ընթերցողներին սքափեցնելու նպատակ էր հետապնդում: «Սինչև ե՞րբ անկեալ կաս, ո՞վ վատ, կամ ե՞րբ ՚ի քնոյ զարթիցես» Սողոմոնի կոչը բնաբանի է ստանում այստեղ: Ինչպես Բաղրամյանը, Սոգինյանցը երիտասարդությանը ծանոթացնում է Հայաստանի պատմությանը: Հայերը չեն ճանաչում իրենց աշխարհը, որը ծաղկուն մի երկիր էր. նրանք չգիտեն, թե ինչպիսի բարեկեցիկ և պերճ կյանքով էին ապրում իրենց նախնիները: Պանդուխտ հայերը, հուսահատ ու անմիաբան, չեն խորհում հայրենիք վերադառնալու, իրենց ժառանգությունը ձեռք բերելու, սեփական պետություն ստեղծելու մասին: Հարուստներն ապահովել են իրենց կյանքը և հեռու են վերը հիշած հոգսերից, իսկ ուսումից և գիտությունից զրկված ժողովրդի մեծ մասը «ծուլացեալ ու հեղգացեալ» դեգերում է աստ ու անդ...

Սոգինյանցը հեռու է ազգային սնապարծության գայթակղությունից: Սքափ հայացքով նա հայերի ուշադրությունը հրավիրում է հարևան հետամնաց ազգերի վրա, որոնք մեծաքայլ առաջ են ընթանում: «Հեթանոսք տգէտք և անուսումք, բարբարոսք լեռնաբնակք, զարդարեալ են իմաստութեամբ, և փառավորեալ են տերութեամբ և մեք լի ենք ամենայն տրտմութեամբ, վասնզի իմաստութեամբ և իշխանութեամբ նոքա օր ավուր աճին.

և մեք օրըստօրէ պակասիմք, նոքա հարստանան և մեք աղքատանամք, նոքա գորանան և մեք տկարութեամբ կորչիմք, լեալ անօգնական»⁵¹:

Բարեշէն Հայաստանը կործանվել է հայերի մեղքով, նրանք մեղանշել են Աստծո դէմ, մոռացել նրա պատվիրանները... սակայն, նորոգումն անհնար մի բան չէ, պետք է արթնանալ ծուլության քնից, զարդարվել իմաստությամբ: Առանց գիտության և դպրության անհնար է հզորանալ:

Բաղրամյանի օրինակով Սոգինյանցը հայերին կոչում է ուսանել եվրոպական երկրների ժողովուրդների՝ անգլիացիների, իսպանացիների փորձը: Նրանք ծուլությունը թողնելով հետևել են իմաստության ու գիտության ճանապարհին և ճանաչել ազատության բերկրանքը: Հայերը պետք է ընթանան այդ ժողովուրդների ճանապարհով, բայց պահպանեն իրենց ազգային ավանդույթներն ու լեզուն: Սոգինյանցը դատապարտում է գաղութում լայն տարածում գտած այն երևույթը, երբ հայ ծնողներն իրենց զավակներին օտարալեզու կրթություն էին տալիս:

**Այ որդիք իմ՝ մի առնիջիք այդպիսի բան,
Զի գայդ յայտնի՝ պատճառ լինի մեր կորըստեան...**

Հայերը պետք է իրենց տան հիմքն ամուր գետնի վրա դնեն, պայքարեն սեփական տունը ձեռք բերելու համար: Ուրիշի աշխարհը չի կարող հիմնական օթևան լինել նրանց:

Թադեոս Սոգինյանցի «Ողբը» միջնադարյան հայկական պոեմների ավանդական ողբերից շեղվում է իր նպատակապահությամբ: Միայն Հայաստանի կործանման պատճառների կրոնական մեկնաբանությամբ մոտենալով իր նախորդներին, նա բարձրանում է վերջիններից՝ ազգի բարոյական և տնտեսական վերածնության իր հավաստի ծրագրով, որին կենսական նոր ուժեր հաղորդելու դիտավորությամբ նույն գրքույկում գետնորում է Պետրոս I-ի կենսագրական ակնարկը, որը պատկանում էր «գերահռչակ փիլիսոփա» Վոլտերի գրչին: Ակնարկը 1771 թ. անգլերենից թարգմանել էր հայ բանասերներից մեկը, որը և հրապարակում է Սոգինյանցը («Պատմութիւն մեծին Պետրոսի Ալեքսիովմի կայսերն և լուսավորչին ազգին ռուսաց»):

Նախաբանում ասվում է, թե «Պատմութիւնը» շահավետ կարող է լինել «բանական մտաց համար»: «Գոլ մեզ օրինակ ազգն ռուսաց,– գրում է

⁵¹ «Տետրակ, որ կոչի Ողբ Հայաստանեաց», Մաղդաս, 1791, էջ 5:

Սոգինյանցը,– եթե որպես ընտելք և սիրողը եղեն ուսման և ՚ի ձեռն մարգ-
չի և որպէս փայլին այսօր գրեթէ պերճք և կորովիք և յաղթօղբ գտան ՚ի
մեջ ամենայն ազգի և փայլին ամենայն երջանկությամբ սեթևեթեալք և
բեղուն բարգավաճեալք, որ և տէր զորացուցէ զնոսայ: Եվ զմեզ զդուռն
ողորմութեան բացցէ»⁵²:

Պետրոս I-ի կենսագրությունը ներկայացնելով հայ ընթերցողին և
կրկին հավաստելով, թե «այսօր ազգն ռուսաց որպիսի պայծառութեամբ
կեան ՚ի վերայ աշխարհի», Սոգինյանցն այդ ամենը բացատրում է գի-
տության և լուսավորության արմատավորմամբ: Ահա թե ինչու հայերը
նույնպես պետք է ջանան բանալ դպրոցներ, ազգի օգտի և ընթերցանու-
թյան համար տպագրել հնագույն պատմությունները (որոնք նրան կօգ-
նեն ճանաչելու իր անցյալը և կնպաստեն ժողովրդին միավորվելու): Այդ
դեպքում միայն, հույս է հայտնում բանաստեղծը, «վերստին նորոգումն
և ժողովումն ցրտեալ ազգիս լինիցի, և զարթուն ՚ի ծանր քնոյ, և ՚ի ծու-
լութեան»: Սոգինյանցը Պետրոս I-ի կենսագրական ակնարկի հետ հրա-
պարակում է և ռուսաց թագավորին նվիրված իր ներբողը⁵³:

ԳՈՎԵՍՏ ԿԱՅՍԵՐՆ ՊԵՏՐՈՍԻ

**Կայսրս բարի և իմաստուն
Յորժամ եղև սա բանիբուն,
Ազգն խաւար, անիմաստուն,
Զարթոյց ՚ի քնոյ, արար արթուն:
Բանիւ իւրով ուշիմացեալ,
Բոյս նորատունկ ազգին եղեալ,
Փառք կայսրութեան ՚ի բաց ձգեալ,
Պանդխտութեամբ սպասատրեալ:
Լեզուաւ բազմաւ իմաստացեալ
Արհեստօք լի յետըս դարձեալ,
Խփեալ մտաց քող պատառեալ
Եւ քան զբազումս առաւելեալ:
Նսեմ վարուք խաւարացեալ
Լուսավորեաց զանձինս մուկեալ,**

⁵² Նույն տեղում, էջ 22:

⁵³ Նույն տեղում, էջ 27:

Չբնաղ սիրոյ պտուղ տունալ Ջան ետ ազգին արիանալ:

Հայրենակիցներին ազատության և արիության ոգով դաստիարակելու նպատակով Սոգինյանցն իր գրքույկում գետեղել է նաև Եզոպոսի առակներից մի քանիսը: Դրանցից ուշադրության արժանի են առավելապես երկուսը: Գայլը նախանձում է շան ապահով ու կուշտ կյանքին: Շուրը խոստանում է նրան տանել իր տիրոջ մոտ, եթե թողնի իր գայլությունը: Համաձայնությունը կայացվում է, բայց երբ գայլը հասկանում է, որ ինքը պետք է շղթավաժ ապրի (ինչպես շունը), հրաժարվում է շան առաջարկից: «Առակս ցուցանե, թե ազատութիւնն է մեծագին, քան զամենայն ինչ, և սիրելի»⁵⁴:

Սպառազինված ձին մեկնում է պատերազմի դաշտ, խոզը հեզնում է. ա՛յ իմնար, ինչո՞ւ ես գնում, կսպանվես: Չին ասում է. իսկ դու ժամանակդ անց կացրու տիղմի և կեղտի մեջ, որպեսզի հետո սպանվես դանակով, առանց որևէ փառքի: «Առակս նշանակե, թե լավագոյն է մեռանիլ փութով և փառավորապէս, քան ապրիլ երկար, ամօթով և նախատանօք»⁵⁵:

Տեր Թադեոս Սոգինյանցի գրական-հրապարակախոսական գործունեությունն ավելի է ծավալվում «Ազդարարի» հրատարակության տարիներին: Այս ժամանակաշրջանում նա հանդես էր գալիս իբրև ամսագրի գլխավոր աշխատակիցը, որի հոդվածները որոշում էին «Ազդարարի» գաղափարական ուղղությունը: Նա, սակայն, իր ազգանունով ստորագրել է մի քանի բանաստեղծություն միայն:

«Ազդարարի» առաջին յոթ համարում տպագրվել են ոմն «Ուրախակից բարեկամի» բանաստեղծությունները, որոնք ծրագրային առաջնորդողների նշանակություն ունեին: Այդ բանաստեղծություններն ակնհայտ են դարձնում, որ «Ուրախակից բարեկամը» հրապարակախոսական ելույթներից բացի մասնակցում էր նաև խմբագրական աշխատանքներին, մշտապես քաջալերում Շմավոնյանին, գաղութահայության մեջ բարձրացնում ամսագրի վարկը: «Ուրախակից բարեկամը» անվերապա հորեն գաղութի լուսավոր մտավորականներից էր, Շմավոնյանի զինակիցը, որն իրեն իրավունք էր վերապահում հանդես գալ իբրև դաստիարակ և բարոգիչ: Մադրասի հայկական հասարակության մեջ մենք չենք տես-

⁵⁴ Նույն տեղում, էջ 29:

⁵⁵ Նույն տեղում, էջ 30:

նում «Ուրախակից բարեկամի» մտավոր և բարոյական նկարագիրն ունեցող մի գործչի, որը հանիրավի մոռացված լինելը: Ենթադրում ենք, որ այդ գրական կեղծանունով ստորագրել է Սոգիմյանցը, թերևս հետևելով իր օրերի եվրոպական թերթերին:

«Ուրախակից բարեկամն» է, որ «Ազդարարի» առաջին համարում հայ ընթերցողներին ծանոթացնում է անդրանիկ պարբերականին, խնդրում նրանց ներողամտությունը՝ ամսագրում տեղ գտած թերությունները նկատելու դեպքում և օժանդակությունը՝ կատարյալ դարձնելու այն: Կրկին «Ուրախակից բարեկամն» է, որ իր հարուստ կենսավորձի օգնությամբ այնպիսի խորհուրդներ է տալիս «Ազդարարին»⁵⁶, որոնք դառնում են ոչ միայն հայ առաջին ամսագրի գործունեության ծրագիրը, այլև որդեգրվում են հետագա տասնամյակների լրագրողների կողմից: Այնուհետև, «Ազդարարի» հրապարակախոս-տեսաբանն արծարծում է հայ իրականության համար մի շարք կենսական խնդիրներ, իր հարցադրումներում հարազատ մնալով խմբագրի քաղաքական ուղղությամբ և «Ողբ Հայաստանեաց» պոեմի գաղափարախոսությամբ: «Ուրախակից բարեկամը» քննարկում է հայերի մտավոր զարգացման, տնտեսական դրության և քաղաքական ազատության հետ կապված հարցերը: Նա ամսագրի օգնությամբ ենթադրում էր իր ժողովրդին հասցնել ազգային ինքնաճանաչության:

**Ազդ առնել պարտիս դու որդւոց հայոց,
Ներկայ աւերումն և փառք անցելոց,
Եվ միշտ յորդորել նոցայ արթընուլ,
Զվարըս նախնեաց յանձին զգնուլ**⁵⁷:

Հայերի նախնիները սիրում էին ուսումնառել, ունեին բազմաթիվ գիտնականներ և փիլիսոփաներ: Ժամանակակիցները պետք է հետևեն նրանց օրինակին և ուսումնասերությամբ ոգին հասցնեն ապագա սերունդներին: Միաժամանակ նա խորհուրդ է տալիս՝ ընթերցողներին հասկացնել ժամանակի արժեքը: Ժամանակի կորուստը բանաստեղծը համարում է կյանքի կորուստ:

⁵⁶ «Ուրախակից բարեկամն» իր բանաստեղծություններում շարունակ դիմում է «Ազդարարին», շնչավորում այն:

⁵⁷ «Ազդարար», 1794, թիվ 3:

Ինչ վերաբերում է գաղութահայության տնտեսական դրությանը, ապա «Ուրախակից բարեկամ»-Սոգինյանցը խիստ մռայլատես է: Առևտուրն սպառել է իրեն, հայերին արդեն խաբում են միջազգային շուկայում, ուստի նրանք լքողներն պետք է խորհեն ապագայի մասին: «Ողբ Հայաստանեացի» ծրագրով բանաստեղծը հայերին խորհուրդ է տալիս վերցնել իրենց գանձերը և գնալ Հայաստան, զարգացնել տնտեսությունը, արդյունաբերությունը, փող կուտակել և դրա տոկոսներով դպրոցական լայն ցանց ստեղծել: Ի՞նչ միջոցով հայերը պետք է տիրեն իրենց հայրենիքին: Սոգինյանցն իր հույսերը կապում էր քրիստոնյա թագավորների հետ, պահանջում նրանց լեզուներով թարգմանել նվաճողների անողորմության պատմությունը և արդար վրեժի կոչել բարեկամներին: Երբ նրանք կօգնեն Հայաստանն ազատագրելու բռնակալներից, հայերը մշտապես երախտապարտ կլինեն ազատարարներին և հարկ կվճարեն նրանց: «Ուրախակից բարեկամ»-Սոգինյանցն արդեն տեսնում էր նորոգ կյանքի լույսի ճառագույնը ռուսական գահից: Եկատերինան սպեղանի է դնում հայ ժողովրդի վերքերին՝ արժանանալով բանաստեղծի ջերմ բարենախնայունքներին:

Իր ժողովրդի երջանիկ և բարօր կյանքի բաղձանքը Թադեոս Սոգինյանցն արտահայտել է ծննդյան տոների առթիվ գրած մի բանաստեղծությամբ, որը, մեր կարծիքով, ինչ-որ չափով դարձել է հանրահայտ «Տեր կեցոյի» նախօրինակը⁵⁸: Մեկ այլ բանաստեղծության մեջ «Ուրախակից բարեկամը» խնդրում է Աստծուց՝ գերության փոխարեն ազատություն տալ հայերին, մոռացնել տալ պանդխտության ցավը և օգնել նրանց՝ հեռավոր ափերից հասնելու «'ի տուն սեփական»⁵⁹:

Սկսած 5-րդ համարից, «Ուրախակից բարեկամը» խոսում է հրաժեշտի մասին: Նա հայտարարում է, թե հուսահատվել է. իր տգիտությունը, բազմաթիվ մարդկանց կշտամբանքները խանգարում են գրել նախկին

⁵⁸ Ո՛վ Տեր ողորմած Աստուած մարդասէր,
Որ քով գթութեամբ անուանեցար սէր,
Անկեալ մեր ազգիս անօգնականի,
Չեռամբ քով կանգնեա... և յարո՛ւմեզ Տեր,
Ժողովեա՛ 'ի մի գի եմք յոյժ ցրուեալք,
Անտերունջ հօտից գոյով նմանեալք...
Տե՛ս նույն տեղում, 1795, թիվ 16:

⁵⁹ Նույն տեղում, 1794, թիվ 4:

քաղցրաբան ոճով: Իրենց այցերով շատ են խանգարում և անբան շաղակրատները, որոնք հսկայական ժամանակ են խլում: Շմավոնյանը խրախուսում է իր «վսեմախոհ» և պատվական քոթակցին: Ձգացված խմբագրի դրվատական խոսքից՝ «Ուրախակից բարեկամը» շնորհակալություն է հայտնում և 7-րդ համարում տպագրում վերջին բանաստեղծությունը: Կարո՞ղ էր մի հրապարակախոս, որ ուխտել էր կյանքը նվիրել «Ազդարարին», վերը հիշված պատճառներով հեռանալ թերթից և ապրել պասիվ հայեցողի դերում: Ո՛չ, իհարկե: Գիտակցելով իր օրերի լուսավորական շարժման մեծ նշանակությունը, «Ուրախակից բարեկամն» «Ազդարարը» համարում էր ազգի նորոգման խորհրդանիշ, նրա բարոյական կյանքի վերածնունդն ավետող մի նոր աղավճի: Թերթը, նրա հայացքով, հայերի քաղաքական ազատությունը նախապատրաստող ծանրակշիռ մի գործոն էր, իսկ 1794 թ.՝ մի բացառիկ տարի, որը հայ ազգին «Ազդարար» էր պարգևել: «Ուրախակից բարեկամը» հոգու բոլոր թելերով կապված էր «Ազդարարի» հետ. մի բանաստեղծության մեջ իբրև լիրիկական զեղում՝ նա գրում է, թե այն ժամանակ, երբ խոր գիշերով ամենքը մնջում են, իսկ ոմանք պարապ-սարապ թափառում, «Ազդարարի» սերն իրեն բանտարկել է սենյակում՝

**Ուր կտոր մի թուղթ թանակ և գրիչ,
Ունեցայ մտաց իմ մարմնացուցիչ⁶⁰:**

Սոգինյանը չի մեկուսանում գործունեության ասպարեզից: Ամեն բանից առաջ կայունանում է «Ազդարարը». արդեն 5-րդ համարից խմբագիրն սկսում է հրատարակել Խաչատուր Ջուղայեցու «Պարսից պատմութիւն» ծավալուն գործը: 8-րդ համարից սկսվում է Հակոբ Այուբյանցի «Հեյդարալի խանի պատմությունը» վեպի տպագրությունը: Այս երկու ստեղծագործությունը զբաղեցնում են ամսագրի տետրակների գրեթե 2/3-ը: Մյուս էջերում զետեղվում էին բազմազան մամակներ, հաղորդումներ, լուրեր արտասահմանյան թերթերից, հայտարարություններ: Սոգինյանն առժամանակ կարող էր չթղթակցել «Ազդարարին», բայց միայն առժամանակ: Հետագա համարներում կրկին տպագրվում են նրա բանաստեղծությունները: Ի դեպ, շատ հետաքրքրական է այն երևույթը, որ

⁶⁰ Նույն տեղում, 1795, թիվ 5:

հենց նա և ո՛չ թե մեկ ուրիշն է մի նամակ-հարցում հղում «Ուրախակից բարեկամին», ցանկանալով իմանալ նրա լռության պատճառը: Նամակ-բանաստեղծությանը կրկին բանաստեղծությամբ պատասխանում է իբրև թե «Բարեկամի բարեկամը» և հայտնում, թե «Ուրախակից բարեկամը» չի գրում ծանր հիվանդության պատճառով. սա միամիտ հնարանք էր: Եթե այդ ճշմարիտ լիներ, խմբագիրն ընթերցողներին կծանուցաներ իր գլխավոր աշխատակցի հիվանդության լուրը: Հավանաբար, Շմալոնյանի խորհրդով «Ազդարարի» հրապարակախոսը պետք է հրաժեշտ տար իր կեղծամականը և հանդես գար սեփական անունով⁶¹: Սակայն, ի՞նչ հիմքեր ունենք պնդելու երկու հեղինակի նույնությանը վերաբերող այս վարկածը: Արդեն նշեցինք, որ «Ուրախակից բարեկամի» մակարդակի մի զարգացած և հայրենասեր գործիչ հազիվ թե անծանոթ մնար սերունդներին, երբ այսօր մեզ համար պարզվում են Մադրասի գաղութի նշանավոր անձանց ազգակցական նույնիսկ ամենահեռավոր կապերը: Շմալոնյանի հոգատար ձեռքով սերունդներին են հասել տպարանի գրեթե բոլոր աշխատակիցների և բանվորների անունները. Մի՞թե նա կարող էր մոռանալ իր զինակից բանաստեղծին: Այնուհետև, և որ կարևորն է, «Ուրախակից բարեկամի» գաղափարները նույնանում են «Ողբ Հայաստանեաց» պոեմի թեզերի հետ, զարգացնում դրանք հրապարակախոսական նոր միջոցներով: «Ուրախակից բարեկամը» մի տեղ հայտնում է, որ ինքը կրթությունը տանն է ստացել, մի բան, որ թելադրում է նրա քահանայի որդի լինելու միտքը: Այդ միտքը նա հաստատում է մեկ այլ բանաստեղծության մեջ, որտեղ պատմում է, թե մանուկ հասակում հայրն իրեն սովորեցրել էր ասել Համբարձման փոխը և ինքը մեկ անգամ այն մեծ հաջողությամբ կատարել է եկեղեցում՝ արժանանալով ամբոխի գովության համբույրին⁶²: Թվում է, թե Եզովպոսի առակների մեծ գնահատող Սոգինյանցի միջոցով էր, որ «Ուրախակից բարեկամի» բանաստեղծությանը կից «Ազդարարում» զետեղվում է անագատ ժողովրդին միաբանության և վճռականության կոչող «Սակս խորհրդոցն մկանց» առակը⁶³:

Կարելի է անց կացնել մեկ այլ զուգահեռ: «Ողբ Հայաստանեաց»

⁶¹ Երբ XIX դարի 60-ական թվականներին Կոզմա Պրոտկով կեղծանունը կրող բանաստեղծները վճռում են թողնել այդ անունը, «Սովրեմենիկ» ամսագրում տպագրվում է Պրոտկովի «մահախոսականը»:

⁶² Հիշենք, որ Սոգինյանը քահանայի որդի էր:

⁶³ Տե՛ս «Ազդարար», 1794, թիվ 3:

պոեմի «վերջաբանութեան» մեջ խոսելով իր գրքի արժանիքների մասին, Սոգինյանցը դրանց պայմանական լինելը բացատրում է հետևյալ բանաստեղծական պատկերի միջոցով. «Որովհետև ամենայն նորատունկ ծառոց կանուխ պտուղն քաղոք երևին ՚ի յաչս տեսողացն (թեև իցեն անախորժ և տհաս), նոյնպես գնորագոյն պտուղս իմ եղեալ առաջի ձեր՝ յուսամ, զի քաղոք երևեսցի և մի ունայն համարեսցիք: Վասնզի ամենայն արհեստք և գիտութիւնք օրըստօրէ յառաջանան»⁶⁴:

Տարիներ անց «Ազդարարի» հրապարակախոս «Ուրախակից բարեկամը» հետևյալ գնահատականն է տալիս ամսագրի առաջին համարում տպագրված և ընթերցողների գովասանքին արժանացած բանաստեղծություններին: Դրանք նման են՝

**«... Մրգաց, որք նոր երևին,
Տան համ քաղցրութեան մաս տերևին,
Այլ մինչ բազմանայ ոչ որ հարցանէ,
Եվ ոչ որ ուտէ զայն ամենևին:
Ոչ բան իմ էր քաղոք և ոչ գրութիւն,
Այլ եղանակին գանազանութիւն,
Յորմէ ընկալավ անշուք իմ գրիչ,
Քո և համայնից բարի հաճութիւն»**⁶⁵:

Ուրիշ մի գրող, հինգ տարի անց, հազիվ թե կրկներ Թադեոս Սոգինյանցի գրքի տողերը: Միևնույն անձնավորությունը միայն կարող էր համանման երևույթները գնահատել իր կողմից ստեղծած գեղարվեստական մտածողության ուրույն չափանիշով:

Այն փաստը, որ «Ուրախակից բարեկամը» խոստովանում է տաղաչափական արվեստի մեջ իր տկարությունը, նրան չի հեռացնում բանաստեղծ Սոգինյանցից: Բանն այն է, որ բոլորը, անգամ Շմափոնյանը, բազմիցս խոստովանում են, որ իրենք չեն ուսանել քերթողական արվեստը: Շմափոնյանն իր ամսաթերթի առաջին համարում հայտարարում էր, թե ո՛չ ինքը և ո՛չ իր օգնականները հմուտ չեն քերթողական արհեստին: Սոգինյանցը «Ողբ Հայաստանեացի» առաջաբանում ընթերցողներից խնդրում է գրքի թերությունները վերագրել իր տհասությանը և այլն:

⁶⁴ «Տետրակ, որ կոչի Ողբ Հայաստանեաց», էջ 31:

⁶⁵ «Ազդարար», 1795, թիվ 15:

«Ուրախակից բարեկամն» այդ միտքն արտահայտում է այնքան պատկերավոր, որ անուղղակիորեն հերքում է իր իսկ հայտարարությունը, ինչպես անկարելի է 200 աղյուսով ավարտուն և լիարժեք շենք կառուցել, նույնքան անհմար է լեզվական սահմանափակ բառամթերքով իսկական բանաստեղծություն ստեղծել: «Այսպիսի գործ հարկաւորութիւն բազումս նիւթոյ պահանջէ, և ես ոչ ունիմ յաւելի, քան թե որպէս առակն իմ ցուցանէ երկու հարիւր աղիւս, և ո՛չ ինչ նիւթ շարայարելոյ, և աղքատութիւն իմ ոչ խոստանայ գնել յաւելի»⁶⁶:

Հարկավ այս խոստովանությունները և գեղումներն ավելի պետք է բացատրել հեղինակների բարձր պատասխանատվության զգացումով, քան ավելորդ համեստությամբ:

Անկախ այն բանից, թե հետագայում հայ բանասիրությունը կհաստատի այս վարկածը, թե կմերժի այն՝ հայտնաբերելով «Ուրախակից բարեկամի» ինքնությունը հաստատող անժխտելի փաստեր, Սոգինյանց-գործչի դերն անգնահատելի է XVIII դարի վերջի գաղութահայ լուսավորական շարժման մեջ: Պատահական չէ, որ Հարություն Շնավոնյանը դեռևս 1793 թ. սկզբին ապագա սերունդներին պատգամում էր բարի հիշել Թադեոս Տեր-Անդրեասյան Սոգինյանց քահանային, որը «միշտ ունի ջանասիրութիւն սակս բարութեան բազմաց»⁶⁷:

Հակոբ Միմեռնյան Այուբյանց.– Հակոբ Այուբյանցը ծագումով Նոր Ջուղայից էր, վաճառական, բնակվում էր Մաղրասում: 1791 թ. նա գրում է մեզ հասած միակ վեպը, որը կոչվում էր «Գիրք զբոսանաց» և թուղթք քաղցրալուրթ յորս ընթեռնանին վարք, արարմունք և բարքն ճարտարագունէլ բանաստեղծի, նաբոբ Հեյդարալի խանի, և մեծ սպարապետի հնդկաց Սրընգաթան քաղաքի»: Շնավոնյանն Այուբյանցի վեպը տպագրում է «Ազդարարի» 8-18-րդ համարներում: Ամսագրի դադարեցման հետևանքով վեպի վերջին գլուխը չի տպագրվել և չի հասել մեզ:

Առաջաբանում Այուբյանցը պատմում է վեպի գրության հանգամանքների մասին: Բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայերը, շարադրել են իրենց ազգի պատմությունը՝ «վասն վայելման ապագայիցն»: Նա հիշատակում է 42 հայ պատմիչների անուններ՝ Ագաթանգեղոսից մինչև

⁶⁶ Նույն տեղում, 1795, թիվ 6:

⁶⁷ «Գիրք Պորփիրի», էջ 11:

իր ժամանակները, ապա Հ. Շահամիրյանի «Պատմագիր յորդորակը»⁶⁸: Այուբյանցը մեջ է բերում և հայ պատմիչների թարգմանած աշխատությունների ցանկը (18 անուն): Վստահելով իր ընթերցողների ներողամտությանը, նա նույնպես վճռում է գրել իր ժամանակի հնդիկ մեծ սպարապետ, նաբոբ Հեյդարալի խանի կյանքի պատմությունը, «առ ՚ի յօգուտ մերագներից և նորաբողբոջ դեռավարժից», որպեսզի նրանք սովորեն, թե ինչպես պետք է համեստաբար և իմաստությամբ ապրեն հնդկական տերության սահմաններում: Այուբյանցը հեռու էր իր գործը կատարյալ տեսնելուց: Նախնի մատենագիրների աշխատությունները որակելով իբրև ոսկեղեն և արծաթեղեն անոթներ, նա իր «Պատմությունը» «բեկանելի խեցեղեն» է համարում... Չնայած դրան, նա պատահական մեկը չէր, որին անհանգստացնում էր գրական փառքի հասնելու մարմաջը: Լեոն նկատում է, որ իր ժամանակի համար բանասիրական հազվագյուտ գիտելիքներով օժտված այդ գրողը մեր իրականության մեջ առաջինն է շարադրել հայ պատմիչների դեռևս անտիպ գործերի մատենագիտական ցանկը: Պետք է ենթադրել, որ նա քաջ իրազեկ էր նաև Շահամիրյանի տպարանի հրատարակությունների բովանդակությանը, որոնց ոգով ձեռնարկել էր իր վեպը՝ օտար ափերում ժամանակի հայ սերնդի գոյատևմանը նպաստելու մտադրությամբ: Այն փաստը, որ Շմավոնյանն իր գրքերից մեկի հիշատակարանում Այուբյանցին համարում է «առաջին յորդորող գործարանիս», ցույց է տալիս հայ վիպասանի գործունեության լուսավորական միտվածությունը:

Ծանոթանա՞նք Այուբյանցի կյանքին՝ այն ժլատ արտահայտությունների միջոցով, որոնք ցրված են նրա վեպի առանձին էջերում:

Հեյդարալի խանի պատմությունն ընդգրկում է 1717-1782 թթ. ժամանակահատվածը: Վիպասանը հանգամանորեն շարադրում է կիսաիրական, կիսաֆանտաստիկ այդ պատմությունը, ջանալով իր հերոսի ահավոր խորամանկությունը ներկայացնել իբրև խորագիտություն, արյունարբու բարբը՝ զորավարի խիզախություն: Դժմարտությունն այն է, հավանաբար, որ նոր վախճանված նաբոբի կյանքի պատմության շա-

⁶⁸ Հայտնի է, որ մինչև 1908 թ., երբ լույս է տեսնում Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանը («Դիվան հայոց պատմության», Ը, 1908), «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» գրքի հեղինակ համարվում էր Հակոբ Շահամիրյանը (տե՛ս *Ltn*, նշվ. աշխ., էջ 1033):

րադրմամբ Այուբյանցը ձգտում էր նրա հետնորդների ուշադրությունը հրավիրել տեղի հայկական հատվածի վրա, նրա համար ձեռք բերելու նպատակով այն արտոնությունները, որոնք ժամանակին նա ստացել էր, բայց չէր կարողացել դնել իրական հողի վրա: Պարզվում է, որ 1778 թ. դեկտեմբերին Այուբյանցն ընդունվում է Հեյդարալի խանի կողմից և հայ վաճառականների համար արտոնություններ խնդրում՝ նրա տիրապետության սահմաններում:

«... Խոստացաւ տալ ազգի իմոյ, զոր ինչ խնդրիցեմ,— գրում է Այուբյանցը,— և խնդրելն ՚ի մեր քանի հատոր իրք վաճառելոյ և գնելոյ և ազգն մեր ազատ լինիցեն ամենայն հարկաց և մաքսաց: Եվ նայ առատապէս շնորհեաց զխնդրելիս իմ, բայց ոչ կարացի կատար յասուցանել...»⁶⁹:

«Պատմությունից» երևում է, որ Այուբյանցը հաճախ է ճանապարհորդել Հեյդարալի խանի քաղաքությունում և օտարազգի վաճառականների հետ ընդունվել նրա պալատում: Հեյդարալի խանն այնքան լավ գիտեր Այուբյանց-վաճառականին, որ նույնիսկ պատերազմական թոհուրոհի մեջ, մի անգամ, երբ պաշարում է անգլիացիների տիրապետության տակ գտնվող Վելուր քաղաքը, նամակով այդ քաղաքում գտնվող Այուբյանցից «երկու տասան շուշա» վարդաջուր է խնդրում: Ստանալով անգլիացի քաղաքապետ Ջոն Վուքլի թույլտվությունը, Հակոբ Այուբյանցն ապրանքն առաքում է և գինն իսկույն ստանում:

Եթե վեպի սկզբնական հատվածներում հեղինակն ընկնում է չափազանցությունների մեջ, ակնհայտորեն տուրք տալով լսած հրաշապատում գրույցներին, վերջին դրվագները նկարագրում է առավել հավասարակշռված: Այստեղ բախվում են անգլիական, ֆրանսիական և հնդկական իշխանավորների շահերը, հաղթում են հզոր բանակ, զենք և հետախուզություն ունեցող կողմերը:

Հակոբ Այուբյանցի վեպը զուտ վիպական հյուսվածքից բացի ուշադրություն է գրավում իր ճանաչողական արժեքով: Հետաքրքրական են այն հատվածները, որտեղ նկարագրվում են տեղական, ազգային կյանքի առանձնահատկությունները: Ահա թե ինչպիսի վառ երանգներով է վիպասանը նկարագրում Հեյդարալի խանի հաղթական մուտքը Բենկլուր քաղաքը: Ժողովուրդը ցնծագին աղաղակներով դիմավորում է նրան:

«Ես ևս ելի ընդ յառաջ նորա, զի անդ բանկէի. յիրաւի տեսաք զարմա-

⁶⁹ «Ազդարար», 1795, թիվ 13:

նալի փառք, ինքն էր բազմեալ ՚ի մէջ գահի և գահն էր բարձրեալ ՚ի վերայ փղի և շուրջանակի պատեալ կալեալ կային չորս հազար արս տիգաւորս. և յետս նոցայ էր հինգ հարիւր փիղս զարդարեցեալս. յետս փղաց էին ամենայն զօրքն և յառաջ իւր էին թնդանօթս և չորս հազար ձիաւարս, ունելով ՚ի ձեռին իւրեանց հրացանս արծակելով և յետս նոցա հինգ հարիւր արք եւրօպացիք հեծեալս, ունելով ՚ի ձեռին իւրեանց սուր մերկ և այլ բազում հետևակքս բացեալ դռօշակօք. արծակէին թնդանօթս, հարկանէին զարապանս թմբկօք և պարիւք, մեծաւ հանդիսիւ մուծին ներքս քաղաքին. իրաւի էր տեսիլ զարմանալի և փառաց նորա»⁷⁰:

Նույն պաթոսով Այուբյանցը նկարագրում է մաքրոյի վեհաշուք մուտքը Սրընգաթան, նրա Քերիմ որդու հարսանյաց հանդեսը և այլն:

Հակոբ Սիմեոնյան Այուբյանցի վեպը, սակայն, իբրև այդպիսին, շատ պարզունակ կառուցվածք ունի: Այն շարադրված է առանց ժանրային պայմանականությունների. լեզուն անկանոն է, կիսագրաբար, կիսաբարբառային, հար և նման «Ազդարարի» թղթակիցների լեզվին: Երբեմն ընդհատելով նկարագրությունը, հեղինակը թույլ է տալիս գեղումներ, բողոքում աղբյուրների ոչ հավաստի լինելուց («ճշմարիտ ոչ գիտեմ որն իցէ ճշմարիտն ՚ի միջի սոցայ»): Մեկ այլ հատվածում անհարկի ընդհատելով սյուժետային գիծը, պատմում է փողոցային մի դիպվածի մասին, ապա և իսկույն ավելացնում, թե այդ «չէ ՚ի շարս բնական պատմութեանս մեր», բայց իբրև զարմանահրաշ փաստ հարմար է գտնում «քանի մի տողիւք աստ ճառել»:

«Հէյդարալի խանի պատմութիւնը» ժանրային և լեզվական առումով որքան և անկատար է, ընթերցվում է լարվածությամբ և բավականաչափ հստակ պատկերացում տալիս ժամանակի Հնդկաստանի ժողովուրդների կյանքի, պատերազմներից և սովից ավերվող ֆեոդալական այդ հսկայական պետության առօրյայի, օտար նվաճողների Հնդկաստանում ունեցած իշխանության մասին:

Հակոբ Այուբյանցի վեպը, որ ժամանակագրական առումով նախորդում է Ս. Թադիադյանի արկածային ժանրի գործերին, հարստացնում է հայ նոր գրականությունը, դրա նախապատմությունը հասցնում XVIII դարի վերջին քառորդը: Վաճառական, գրող, հասարակական գործիչ, բանասեր՝ այսպիսին էր Շամվոնյանի հայրենակիցը և նրա անխոնջ ժա-

⁷⁰ Նույն տեղում, 1795, թիվ 14:

մանակակիցը:

Խաչիկ Ծատուրյան Չարիֆյան և ուրիշներ.– Իր հրատարակությունների հիշատակարաններում Շմավոնյանը ներկայացնում է աշխատակիցներին՝ բանասերների, գրաշարների, տպարանային բանվորների, որոնցից շատերը նրա հետ աշխատում են տպարանի գոյության ամբողջ ժամանակամիջոցում: Ի՞նչն էր կապում այդ անձանց տպարանի հետ. հազիվ թե նյութական ակնկալությունները, որովհետև տպարանի նյութական վիճակն աննախանձելի էր և աշխատակիցների հիմնական զբաղմունքը, այնուամենայնիվ, մնում էր առևտուրը: Ինչպես Սոգինյանցը և Այուբյանցը, Շմավոնյանի գործակիցներից շատերը Նոր Ջուղայից էին, որտեղից բերել էին Ամենափրկիչ վանքի լուսավորական ավանդույթները: Աշխատանքը տպարանում, որ ոմանք կատարում էին անվճար հիմունքներով, նրանց համար գաղափարական գործ էր, հավասարազոր ազգի փրկության համար պայքարելուն:

Այդ գործիչներից Շմավոնյանը ջերմությամբ է խոսում նոր ջողայեցի Խաչիկ Ծատուրյան Չարիֆյանի մասին, որը տպարանի մշտական և հիմնական աշխատակիցն էր: Շմավոնյանը նրան բնութագրում է իբրև՝ «զնախսկին և յար աշխատողն քաղցրաճաշակ տպարանիս միոյ», «զվաստակակիցը յամայն գործոց տպարանիս»: Չարիֆյանը մասնագետ տպագրիչ էր. «'Ի սկզբանէ աշխատող է և օգնական իմ համայն գործարանիս, մանավանդ փորագրութեան տառից և ո՛չ եթէ միայն հայոց, այլև այլազգաց և պարսից»⁷¹: Շմավոնյանը նրան այլ կերպ չի կոչում, եթե ոչ հոգեծին զավակ, ձեռնաստուն աշակերտ, սիրելի և հարազատ որդի:

Զբաղմունքով Չարիֆյանը վաճառական էր, և ինչպես իր ժամանակակիցներից շատերը, կարողանում էր տպարանային ծանր աշխատանքը զուգակցել առևտրականի անհանգիստ առօրյային: «Ազդարարի» հրատարակության շրջանում նա մի քանի թղթակցություն է տպագրում ամսագրում, որոնցում նկարագրում է իր և իր վաճառական ընկերների արկածալից ճանապարհորդությունը, ծովահենների հարձակման հետ կապված մանրամասները (ի դեպ, աղետի ենթարկված նրա ընկերներից երկուսը նույնպես տպարանի բանվորներ էին):

Խաչիկ Չարիֆյանն առաջին հայ պոլիգրաֆիստներից է, որի անունը

⁷¹ Տպարանի հիմնադրման թույլտվությունը տրված էր պայմանով, որ այնտեղ տպագրվեն մաս արաբերեն և պարսկերեն գրքեր:

մեզ է հասել. նա նաև առաջին լրագրողն է, մեկն իր ժամանակի ֆանատիկոս գործիչներից, որոնք համոզված էին, որ իրենց տքնանքով արագացնում են մայր ժողովրդի երջանկության այգաբայրը:

Պորփյուրի գրքի հրատարակության համար Շմավոնյանը ձեռքի տակ ուներ չորս ձեռագիր, որոնք բոլորը պակասավոր էին: Ձեռագրերը համեմատում և «մեծաւ զգուշութեամբ» ամբողջական բնագիրը պատրաստում է Հակոբ Ջախաթունյանը [Շահխաթունյանց]:

«Ազդարարին» Կալկաթայից թղթակցում էր երիտասարդ վաճառական, շիրագցի Սկրտում Սիմեոնյան Ծմրիկյանցը: Նա ամսագրի համար ծավալում մի վեպ է թարգմանում անգլերենից, որն «Ազդարարի» հրատարակության շրջանում, հավանաբար, ավարտին չի հասնում և մնում է անտիպ: 1800-ական թվականներին Ծմրիկյանցը փոխադրվում է Մադրաս և գործում մասնակցություն ունենում տպարանի աշխատանքներին: 1803 թ. նրա թարգմանությամբ հրատարակվում է անգլերեն-հայերեն «Փոքրիկ բառագիրքը» (5000 բառ ծավալով), «Ի պատիւ Հայկազեան սեռի և ՚ի վայելումն կրթասէր մանկանց»: Սկրտում Սիմեոնյան Ծմրիկյանցը դառնում է Շմավոնյանի տպարանի վերակացուն: Նա 1809 թ. Մարմոնտելի «Բելիսարիոս» պատմական վեպը (թարգմ. Պետրոս վրդ. Պուռնագյան Կարնեցու) հրատարակում է գրեթե միայնակ. գրքի հիշատակարանում այդ մասին նշված է. «... յամենայն գործոց ՚ի շարեւն, թէ կապարաշինութեան և թէ որկեզօծ կազմելն բոլոր գրքոյս՝ միայնակ, թարց օգնականի, աւարտ հասոյց»⁷²:

Հիշատակարաններն ի հայտ են բերում նաև Մադրասի տպարանի այլ աշխատակիցների անունները: Դրանցից են շիրագցի Կիրակոս Կարապետյանը, որին Շմավոնյանը շարունակ կոչում էր իր «արյան առուն» (արյունակից հարազատը). նա տպարանի մշտական աշխատակիցներից էր, քրտնաջան կապարաշարը: Առաջին հայ պոլիգրաֆիստներից են Բաղդասար Հաֆթյանը, Թորոս Թանայանը, թիֆլիսեցի Գևորգ Աղաջանյանը, վրաստանցի Դավիթ Գևորգյանը, Ամենավիրկիչ վանքի միաբան Հակոբ Աղազարյանը, Ստեփանոս Մկրտչյանը, նոր տառերի հորինող Պետրոս Հովհաննես Շիրագցին, Լազարը, Մանուկը, Հակոբը... Անուններ, որոնց հիշատակը Շմավոնյանը մաղթում է, որ անջինջ մնա ապագայում:

⁷² «Բելիսարիոս», Մադրաս, 1809, էջ 285:

Շմավոնյանի տպարանին նյութապես օժանդակում են մադրասա-
քնակ մի շարք հայեր՝ Ավետ Մեթյանը (նրա ծախսով և չորս եղբայրնե-
րի օժանդակությամբ տպագրվել է «Յիսուսի որդին»), Մարութ Հովսեփի
Փռնչյանը, որին են ձոնված տպարանի հրատարակություններից եր-
կուսը, Բարադամ Զալանթարյանը, Մանուկ Հակոբջանյանը, Հարություն
Կարապետյանը և ուրիշներ:

Ամփոփենք. Շահամիրյանի և Բաղրամյանի գործունեությանը հա-
ջորդած տասնամյակներում մտավոր կյանքը շարունակում է վերելք ապ-
րել Մադրասում: Հայկական նոր տպարանի հիմնադրումը, դրա հրատա-
րակությունները, հայ լրագրության սկզբնավորումը Շմավոնյանին ան-
վերապահորեն դարձնում են հայ լուսավորիչներից մեկը: Նա Դայթմա-
զյանցի, Սոգինյանցի, Այուրյանցի, Ջարիֆյանի համագործակցությամբ
ստեղծում է Մադրասի լուսավորական ինքնատիպ կենտրոնը: Մտա-
վորական գործիչների այս սերունդը շփվելով ժամանակի եվրոպական
քաղաքակրթությանը և հնդկահայ քաղաքական հրապարակագրության
անմիջական ներգործությամբ օգնում է գաղութահայության ազգային
ինքնաճանաչության արթնացմանը, նոր որակ հաղորդում հայ մշակու-
թային կյանքի զարգացմանը:

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇՄԱՎՈՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Հարություն Շմավոնյանի և Եփրեմ արքեպիսկոպոսի հրապարակվող նամակները մեկ անգամ ևս հավաստում են այն իրողությունը, որ հայ առաջին պարբերաբերքի՝ «Ազդարարի» խմբագիրն իր ամսագրի հրատարակության դադարումից հետո ևս շարունակել է գործուն մասնակցություն ունենալ հնդկահայ գաղութի հասարակական կյանքում:

Ինչպես նախկինում, XIX դ. առաջին երկու տասնամյակում ևս նա կապված էր Ռուսաստանի թեմի առաջնորդի և Էջմիածնի աթոռի հետ և մեծապես օժանդակում էր Ռուսաստանի նորահիմն հայկական քաղաքների օգտին հանգանակությունների ու կտակների գործի կազմակերպմանը:

1

Քարճրահրաման ուկագի Նորին Կայսերականի Մեծութեան ամենայն ռուսաց՝ և կոնդակօք ընդհանրական զկաթողիկոսացն ամենայն Հայոց կարգեալ ծայրագոյն նոիրակ և առաջնորդ նաև վերատեսուչ և կառավարիչ ամենայն եկեղեցական և հոգևորական գործոց. և պաշտպան ամենայն քրիստոնէական բարեկարգութեանց բնաւից հայոց բնակեցելոց ՚ի ներքոյ ամենաբարձր հովանաւորութեան Ամենաողորմած հզօրեղ Կայսրութեանն ամենայն ռուսաց Եփրեմ Արքեպիսկոպոս:

Ի պատռելի հասարակաութենէ Մատրասու հայոց յիւրաքանչիւր ամս ընտրեալ և կացուցեալ կառավարչացոյ որբոց նոյնոյ քաղաքի. Հայագն բարեպաշտ պարոնաց երէցփոխան անոանելոց տամ զկատարելագոյն կարողութիւն, ընդհանրապէս ՚ի վերայ ամենայն արդեանց յիւրաքանչիւր քաղաքս Հնդկաստանու գտանեցեալ բարեպաշտ հայոց նոիրելոց և կամ կտակելոց յանուն Սուրբ Խաչ վանիցն և ուսումնարանաց և տպարանին հայոց՝ և այլոց բարեկարգութեանց Ազովու Նոր Նախիջևանու, որպէսզի որ որ ի Չէնչ լինիջիք ընտրեալ. ՚ի հասարակաութենէ երէցփոխանք և կա-

* Տպագրվել է՝ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1978, թիվ 7, էջ 91-96:

ռավարիչք որքոց. նոյնք 'ի միասին համագամայն մեզ ևս լինիջիք վէքիլ և փոխանորդ լիալիր իշխանութեամբ, և 'ի կողմանէ մերմէ աշխատասիրեալ 'ի փառս աստուծոյ և 'ի սէր ազգային բարութեան, զվերահասութիւն 'ի գործ ածջիք արիապէս ամենայն օրինաւոր կերպիւ և հասու լիջիք՝ թէ յանուն յիշեալ վանիցն, և ուսումնարանաց և տպարանին, կամ աղքատաց և եկեղեցաց և այլոց բարեկարգութեանց Ազովու Նոր Նախիջևանու և այլոց. յամենայն քաղաքս Հնդկաստանի բնակեալ հայոց յազգէ մերմէ ո՞վ որ՝ զի՞նչ ունիցի նոիրեալ և կամ կտակեալ. տուն, դրամ և կամ այլ ինչ նիւթ, և այնպէս զամենայն արդիւնսն ստացեալ ըստ զօրութեան կտակաց և պայմանագրաց կտակողացն և նոիրողացն զնոյնս. փոյթ ունիջիք նաև վասն անվտակ տնօրինելոյ հաւատարիմ պահպանութեան ենթարկելոյ զմայր դրամսն և զայլ շարժուն և անշարժ կայսն. նոյնպէս և վասն 'ի Քրիստոս ննջեցեալ պարոն Մասեհ Մարտիրոսի տան եկամտիցն: Չորոյ մեծ մասն կտակեալ է Սուրբ Խաչ վանիցն մերոց, և վասն 'ի Չին վախճանեալ պարոն Մատթէոս Յոհաննիսի կտակին, և 'ի Բթաւիայ վախճանեալ պարոն Յարութիւն Չաքարեայի հազար ռուփի կտակին դուք գոլով ընդհանրական վէքիլ և փոխանորդ 'ի դիմաց մերոց, ունելոց էք կարողութիւն վասն յիշեալ երեք գումարին ևս և վասն ամենայն եղելոցն 'ի զանազան քաղաքս 'ի զանազան անձանց նոիրելոց ընդհանրապէս առնել օրինաւոր հետևողութիւն, և ըստ զօրութեան իւրաքանչիւրոցն կտակաց՝ զստանալիսն ստանալ, և վասն մնացորդացն տնօրինել անկորուստ պահպանութիւն և վասն բոլորիցն՝ մի առ մի տալ մեզ զծանօթութիւն կատարեալ պարագայիւք Չերով ստորագրութեամբ:

Եւ զի հաստատուն եղիցի իմ զձեզ կացուցումն ինձ վէքիլ և փոխանորդ, զայս վէքիլագրութիւն կնքեցի կնքով իմով և ստորագրեցի սեպհական ձեռամբ իմով, և վասն առաւել հաստատութեան Գրիգորիպօլու հայոց քաղաքիս հոգևոր կառավարութեան և մաղեստրաթին ևս ետու կնքել և ստորագրել, և գրել 'ի մատեանս դատաստանաց երկաքանչիւրոց, զի այնպէս և դուք յայտնեալ զնոյնս 'ի պատկանեալ դատարանս իւրաքանչիւր քաղաքաց և իշխանութեանց որպէս փոխանորդ մեր խօսեսջիք զխօսելիսն և արասջիք զառնելիսն զինչ և արժան իցէ յաղագս ստանալոյ և յաղագս հաստատուն պահպանութեան ենթարկելոյ յանուն յիշեալ աստոածահաճոյ նպատակաց նոիրեալ զդրամսն և զանշարժ կայսն 'ի յիշատակ յաւիտենական նոիրողացն զնոյնս: Վասն հեռաւորութեան տեղ-

տյն և կասկածանաց ՚ի վտանկէ՝ երեք գրեցաւ և կնքեցաւ սովին օրինակաւ ՚ի վերայ այսպիսի թղթոյ:

Եփրեմ արքեպիսկոպոս

՚Ի 1807, մարտի 20,

՚Ի Գրիգորիայօլ N 135:

Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 18, վավ. 26:

2

՚Ի Հնդիկա Մատրաս

Արժանապատիւ Տէր Յարութիւն հանճարագարդ

Առագ քահանայ Շմաւօնեան.

Իմ վաղեմածանօթ հարազատ սիրելի –

Իրաւացի է առածն իմաստունոյն՝ թէ համբար բարի պարարեն զուկերս, քանզի այն ինչ տխրամած լեալ դիտեաք յաւէտ, թէ արդեօ՞ք լինիցի օր, և լինիցի ժամ, յորում գայցէ ՚ի կողմանցդ համբաւ բարի, որով պարարեսցեն ոսկերք մեր կարօտութեամբ, ցնծութեամբ և ուրախութեամբ. յանկարծ զօրէն լուսապայծառ արեգակն ՚ի սառնամանեաց վայրս ձմերան ծագելոյ, ծագեցաւ ՚ի մեզ լոյս ուրախութեան և համբաւ բարութեան, այն է զուարճացուցիչ գրութիւնք Մատրասու պատռելի որբոց կառավարչաց և երէցփոխանաց. և համօրէն հասարակութեան ՚ի տպարանի քում տպեցելոյ⁷³, և այլոց տեղեաց որք են ՚ի կողմունադ, որովք արդարև ո՛չ սակաւ բերկրեցան սիրտք մեր ցնծութեամբ, լցան աչք մեր տեսութեամբ, զմայլեցան քիմք մեր ընթերցմամբ, և միանգամայն ՚ի սաստկութենէ ուրախութեան ՚ի մօռացօնս եղեն համօրէն կարօտութիւնք մեր, զորս ՚ի բազում ամս կրեաք ակնապիշ ելով հանապազ:

⁷³ «Ազդարարի» հրատարակութեան դադարումից հետո Հ. Շմաւոնյանի տպարանը գործում էր և դարասկզբին, ուր նա շարունակում էր տպագրել ոչ միայն զանազան գրքեր ու ձեռնարկներ, այլև Մաղրասի հայ հասարակութեան պաշտոնական գործընկերները, նամակները և տեղի հայ գործիչների հրավիրած ժողովների արձանագրությունները:

Ուրախացաք յորժ նաև ընդ բազմատեսութիւն բարեկարգութեան հասարակութեան, որք կային և ՚ի ժամանակս մեր և ընդ հաստատութիւն բարեկազմ տպարանիդ, զորս և Տէր հանապազ հաստատուն պահեսցէ, ՚ի ցնծութիւն հոգւոց և մարմնոց մերոց:

Այլ յոյժ զգալի եղև մեզ, իբրև ՚ի հարազատ սիրելւոյդ գթութիւն որպիսածանոյց ո՛չ ստացաք. թէ և բարեկարգ հասարակութեան գրութեամբ գիտելով զառողջութենէ ձեր, և նոցին համայնից ծանօթագոյն սիրելեաց և բարեկամաց մերոց յատակց և հասարակաց, ուրախ եղաք յոյժ բայց արժանաւոր իսկ էր և ձեզ ընդ նոսին հաղորդակցեալ գրել մեզ զանմոռացութիւն սիրոյդ, որով կանխաւ կարեկցեալ էաք ընդ իրեարս, որ պատճառ իցէր ՚ի մեր զբազմապատկական ուրախութիւն, թեև ձեռագրովդ ընդ նոսին մխիթարեաք:

Որպէս և յարգելի եղբայրն մեր զգօնիմաստ նոիրակ Յակոբ սրբազան արքեպիսկոպոսն երբեմնապէս գրելով զորպիսութենէ և զառողջութենէ կողմանցդ սիրելեաց մերոց, և զկարևոր մտերմութենէ և զջատագովութենէ ձերմէ, ո՛չ սա զմայլեցուցիչ ծաղիկս անթիւ ուրախութեան բուսուցանէր ՚ի սիրտս մեր:

Այլ մեր այժմ ՚ի քեն զայս ևեթ հարկաւորի խնդրել զի զպատռելի կառավարիչսն և երէցփոխանսն որբոց, զորս փոխանակ մեր յայդոսիկ կողմունս եղեալ արդեանց ՚ի վերայ որք պատկանիցեն մերում վիճակի և Առաջնորդութեան, ընդհանրական վէքիլ կարգեցաք, զորս և նաև գրեցաք հասարակութեան, գիտելոց ես լիովին, վասն որոյ և զաւելորդ վարկաք վերստին գրել քեզ, միայն դու ևս պարտիս ՚ի սէր մեր և ՚ի պայծառութիւն համազգի սերնդոց քոց, անձանձիր հոգացօղ լինիլ ըստ խոհեմութեանդ այնց իրաց, որք պատկանիցին քումդ աստիճանի, և խոհեմութեան ՚ի յօգուտ հասարակաց լաւութեան և յաւիտենական յիշատակութեան արժանաւոր: Եւ յաւել քան զայս յոյժ սիրոյ կարօտի ողջոյն և օրհնութիւն մատուցեալ ընդ համաշունչ քոյայնոցն.

Մնամ վասն ձեր միշտ բարեացակամ աղօթարար խոնարհ
Նփրեմ արքեպիսկոպոս Հայոցն Ռուսաստանեայց:

25 մարտի, յամի Տեառն 1807,
՚ի Գրիգորիպօլ քաղաքս Հայոց
(երկրորդ օրինակ):

[3. Գ.] Այլն զայս ծանի՛ր իմ հարազատ, զի ըստ բաղձանացս ո՛չ կա-
րելով մեծագոյն սիրոյ և պատուոյ արժանի նախածանօթ սիրելեաց իմոց,
որք են յայոք՝ յատուկ զգիր սիրոյ և օրհնութեան գրել. նմին իրի, հանդէպ
սորին յաղագս յատուկ սիրոյ սեպհական ձեռամբ իմով գրեմ զանուանսն
նոցա, որք են ՚ի սիրագումար ժողովի ՚ի Տետրակի տպեցելոյ. զոր և սէրդ
իմ ցուցեալ նոցա մատուցես ՚ի դիմաց մերոց զկարօտալի սիրոյ ողջոյն
և օրհնութիւն, նաև այլ մնացելոցն մեծաց և փոքունց ընդ համաշունչ ըն-
տանեացն, որով իբր նշանակ լիցի ՚ի մէնջ յատուկ յատուկ գրեցելոց ամ
իւրաքանչիւրսն ըստ պատողութեանցն:

Այսորիկ են անոանք նախայիշեալ սիրելեացն իբրց զորս ողջունե-
ցաք⁷⁴.

Պատուելի պարոնայք.

Տէր Թադէոս Տէր Անդրէասեան.

Սարկաւագ Թադէոս Սարգսեան.

Սարկաւագ Յակոբ Աղազարեան.

Յօհաննէս Շամիրեան.

Նազար Յակոբջան Շամիրեան.

Սարգար Յօհաննէս Բաբամեան.

Սահակ Աբրահամեան.

⁷⁴ Եփրեմ արքեպիսկոպոսի նամակում հիշատակված անունները խիստ կարևոր են մեր բանասիրության համար: Այդ ցուցակի առաջին անունը՝ XVIII դարի վերջի Մադրասի ամենապայծառ գործիչներից մեկը՝ Տեր-Թադէոս Տեր-Անդրէասյան Սոգինյանը, «Ազարարի» գլխավոր աշխատակիցն էր և «Ողբ Հայաստանեաց» պոեմի հեղինակը: 1791 թ. նա թարգմանական մի հոդված և առանձին ներքող էր նվիրել Պետրոս Առաքինի («Գովեստ կայսերն Պետրոսի»)՝ հայերի ուշադրությունը հրավիրելով ռուսաց կայսրի արժանիքների և մեծագործությունների վրա (տես «Տետրակ, որ կոչի Ողբ Հայաստանեաց», Մադրաս, 1791, տես նաև՝ *Միսիբարյան Մ.*, Հարություն Շմավոնյանը և նրա գործակիցները // «Պատմաբանասիրական հանդես», 1969, թիվ 4):

Խաչիկ Ծատուրյան-Ջարիֆյանը Շմավոնյանի տպարանի հիմնական բարձրավեստ տպագրիչներից էր: Սիմեոն Մկրտումյան-Ծմիկյանը (Մկրտում Սիմեոն) տպարանի վերակցուն էր և զանազան գրքերի հրատարակիչը. Ավետ Սեթյանը, Մանուկ Հակոբջանյանը և ուրիշներ՝ նյութապես օգնում էին տպարանին:

Յակոբ Սիմեօնեան իմ աշակերտ.
 լավ մեղեդի ասող.
 Մանուկ Յակոբջանեան Բթալիոյ.
 Վարդան Գասպարեան ևս Բթալիոյ.
 Յակոբ Յարութիւնեան.
 Դաւիթ Շերիմանեան.
 Աւետ Յակոբջանեան.
 Առաքել Դիոնէսիոսեան.
 Աւետ Սարգսեան.
 Մանուկ Աստուածատուրեան.
 Աստուածատուր Յարութիւնեան.
 Մէք Սամեան.
 Աւետ Մէքեան.
 Կիրակոս Յարութիւնեան.
 Գաբրիէլ Յարութիւնեան.
 Ստեփաննոս Յօհաննիսեան.
 Շամիր Զօրէրեան.
 Գրիգոր Սամեան.
 Մէլքում Մանուկեան.
 Յակոբ Յօհաննիսեան.
 Յարութիւն Յովսէփի Մարութեան.
 Յովհան Սկրտիչեան.
 Յովհանջան Յովհաննիսեան.
 Թորոս Կարապետեան.
 Ստեփաննոս Մարգար Բաբամեան.
 Նիկողայոս Յովհաննիսեան.
 Գրիգոր Մէքեան.
 Սիմեօն Սկրտումեան Ծմիլկեանց.
 Ստեփաննոս Ղազարեան.
 Հայրապետ Սկրտումեան Ծմիլկեանց.
 Աբրահամ Յարութիւնեան.
 Խաչիկ Ծատուրեան Զարաֆեան.
 Աւետ Տէր Թադէոս Անդրէասեան.
 Որք են ընդ քեզ քառասուն, որ է քիւ յոյժ խարիրդաւոր:

Որոց բոլորից և այլոցն կենաց և բարեյաջողութեանցն հանապազ ջերմեռանդ աղօթարար, ամենախոնարհ Եփրեմ արքեպիսկոպոս Հայոցն Ռուսաստանայց:

Ձայս գիր բաց եղաք ՚ի գիրս գերապատեղի երեցփոխանաց և կառավարչացն որբոց:

Մաշտոցի անվան Մարենադարան, Կաթողիկոսական դիվան, քղթ. 18, վավ. 32:

3

**Սրբակրօն Տէր Յարութիւն Շմաւօնեան,
Արժանապատիւ Աւագ Քահանայ.
Իմ վաղեմի յատուկ հաւատարիմ սիրելի –**

Ներկայիս ամենայն որպիսութիւն ևս յայդր ՚ի գերապատեղի քանի անձանց և կամ հասարակօրէն գրութեանց գիտելոց ես, և որպէս նոցա նոյնպէս և սիրոյդ գրեմ զի է սուրբ Աթոռէն բարձր արժանապատիւ Ներսէս վարդապետ շնորհալին, զոր ինչ գրեսցէ քեզ, որպէս մեր բան համարեսցի, վասն իսկ և զայս գիր առ նա բաց յղեցաք յղել ձեզ և այլն:

Մնամ քեզ և յիշեալ գերապատեղեացն միշտ
բարեացական աղօթարար
Ամենախոնարհ Եփրեմ արքեպիսկոպոս Հայոցն Ռուսաստանու:

18 մարտի, 1808,
՚ի Ղարաաու քաղաք Ղալիմու:

Մաշտոցի անվան Մարենադարան, Կաթողիկոսական դիվան, քղթ. 18, վավ. 32:

**՝ի սուրբ և աստոածափջի գահն սրաբզնութեամբ
Եփրեմ Հայրապետին և երիցս
երանեալ աստոածագուր իսայր կաթողիկոս Ամենայն Հայոց⁷⁵ –**

Սրբացուցիչ նամակ օրհնութեան բարձրութեանդ արժանի արար ընթեռնուլ լի խնդրութեամբ և պանծ հոգով և մարմնով յաղագս առողջ գոլոյ Սրբազնասուրբ և պատուական գլխոյդ մերոյ, որոյ Տէր Աստուած արասցէ արժանի միշտ ամենայն բանից ըստ իմ նոսստ կարծեացն արժան համարեսցի գրել, եթէ պատուական գլուխդ մեր հաճեսցի, այսինքն Սարգիս Ծատուրն⁷⁶ կտակաւ քողեալ է մերձ ութսուն հազար հունս այսու մտօք, որ, յետ քանի ժառանգաւորաց պակասելոց, բոլոր դրամն հասանի Ազովու դպրատանն և տպարանին. և ժառանգքն, որ կան, այսոքիկ են, որպէս գրեմս և ոչ այլ մին:

Մինն է իւր կերակուր եփողն 80 ամեայ.

Մինն է երծաթագին Եթովպացի.

Մինն է իւր դուստր Կատարինէն.

Մինն է իւր եղբօր դուստր Մամաջան Բուրքեշն, և ՝ի սոցանէ սերեալքն գուրկ են ՝ի ժառանգութենէ:

Յետ սոցա ժառանգ է մնալոց Ազովն, և գրելոյս դիտումն այս է, եթէ բարի և արժան համարես, կարող ես հոգալ ողորմութեամբ Աստուծոյ, այսօր բոլոր Ռուսաստանաց եղեալ Հայկազնէից տէր և իշխող և հրամայող Սր-

⁷⁵ Հարություն Շմավոնյանի նամակը Եփրեմ կաթողիկոսին՝ մեզ հասած նրա վերջին վավերագիրն է: 1859 թ. Միքայել Նալբանդյանը «Հյուսիսափայլում» հրատարակում է հիշարժան իր նամակը՝ նվիրված հնդկահայերի կտակած գումարների ձեռքբերման հարցին: Շմավոնյանի նամակի պատճենը կտակների հետ մեկտեղ Նալբանդյանը, հավանաբար, ստացել էր Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Կարապետ Հայրապետյանից: Նրան ուղղված մի նամակում Նալբանդյանը հայտնում է, որ սպասում է «Հնդկաստանի փողերի մասին քրթերի օրինակին», որպեսզի դրանք հրապարակի «Հյուսիսափայլի» առաջին համարում (տե՛ս *Նալբանդյան Մ.*, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Երևան, 1949, էջ 58):

⁷⁶ Մաղրասում առաջին հայկական տպարանը 1772 թ. հիմնել է Շահամիր Շահամիրյանը, իսկ երկրորդը՝ 1789 թ. Հարություն Շմավոնյանը: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Մաղրասի՝ թվով երրորդ՝ 1809 թ. հիմնադրված տպարանի հիմնադիր և տնօրեն Սարգիս Ծատուր Աղավալյանին:

բազմաստիճան քահանայապետ ես, և ո՛չ այլ ոք, եթէ ցանկաս շատ դիւրին կարող ես հոգ տանել, այս դրամն մնալու է անկորուստ: Այսպէս, ներկայ բարոյք ձեռի է այդ, այսինքն մնալով նա ՚ի ձեռն կտակակատարի, այսինքն Կիրակոս Յարութիւնեանի և ՚ի կողմանէ Ձեր երկու կամ երեք հոգի կարգէք, որ միշտ մինչ դեռ ժառանգքն կենդանի են, դրամն մնայ թրէժերումն (գանձատնումն), տարէց տարի հաշիւն տեսանեն, եկամտէն վեր ժառանգաց ծախսն հանելով, մնացեալն դնելով ՚ի վերայ մայր դրամին, և տարեկան հաշիւն փակեալ ուղարկեն Սրբազնութեանդ, այսպէս մինչև գրաւումն ժառանգաց ըստ գրութեան կտակին, յայնժամ բոլոր դրամն գուցէ մեծ օգնութիւն հասանի ամենայն ազգաօգուտ բանից և գործոց:

Մնամ միշտ հաւատարիմ պատուական

գլխոյդ Շողեն:

Խոնարի ծառայիցդ ծառայ

Տէր Յարութիւն Շմատունեան:

1819 թիւն հոկտեմբեր 9,

՚ի Մաղրաս:

«Հյուսիսսփայլ», 1859, թիւ 5, էջ 403-404

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԱԶԳԱՐԱՐԻ» ԷԶԵՐՈՒՄ*

Հայ մշակույթի պատմության մեջ կարևոր երևույթ է հայ լրագրության ստեղծումը: Հայրենի ափերից շատ հեռու, Հնդկաստանի Մադրաս քաղաքում, 170 տարի առաջ Հարություն քահանա Շմավոնյանը հիմնադրում է առաջին հայ պարբերականը՝ «Ազդարար» ամսագիրը: Այս ձևով հայ ժողովուրդը ձեռք է բերում հրապարակախոսական մի ամբիոն, որտեղից մտավորականությունն առավել հստակ և հետևողականորեն խոսում է օրվա հուզող հարցերի, ժողովրդի առաջընթացի և նրա հետագա անելիքների մասին:

«Ազդարարի» էջերում Շմավոնյանը զգալի տեղ է հատկացրել գրական նյութերին. դրանք իրենց բնույթով երեք խմբի են բաժանվում՝ ինքնուրույն, թարգմանական և ֆոլկլորային: Գրական-գեղարվեստական նյութերի ընտրությամբ խմբագիրը հետապնդել է մեկ նպատակ՝ օգնել գաղութահայության դաստիարակության և լուսավորության գործին: Ինքնուրույն գործերից «Ազդարարում» տպագրվել են Խաչատուր Շուղայեցու «Պարսից պատմութիւնը», Հակոբ Այուբյանցի «Հեյդարալի խանի պատմությունը» վեպը, Խոջամալ Սաֆարյանի մշակած առակները, Թադեոս Տեր-Անդրեասյանի և մի շարք բանաստեղծների գործերը:

Սակայն, եթե Շուղայեցու և Այուբյանցի գործերը, առավելապես կապված լինելով հայ պատմական գրականության և հնդկական գրույցների ավանդույթների հետ, ժանրային և թեմատիկ որևէ նորություն չէին բերում, այդ նույնը չի կարելի ասել գրական մյուս ստեղծագործությունների մասին: Սրանք թե՛ իրենց ձևով, և թե՛ բովանդակությամբ տարբերվում են ժամանակի գրաբար գրական երկերից և եկեղեցական բանաստեղծություններից: Հայտնի է, որ հայ գրականության աշխարհականացման գործընթացն սկսվում է դեռևս XI դարից, երբ գրականության մեջ երևում են աշխարհիկ մտածողության բազմազան ձևեր, ժողովրդի խոսակցական լեզվի առանձին արտահայտություններ, գրական նոր ժանրեր: Հայ գրականության մեջ և, առանձնապես միջնադարյան առակներում, արդեն նկատվում է քննադատական վերաբերմունք դեպի կյանքի արատավոր երևույթները, դժգոհություն՝ սոցիալական անհավասարության, հոգևորականության ներկայացուցիչների, թագավորի և Աստծո նկատմամբ:

* Տպագրվել է՝ «Գրական թերթ», 1964, 16. X:

«Ազդարարի» արձակի բաժինը մեծ հետաքրքրություն է ներկայացնում որպես նոր տիպի գրականության արտահայտություն, որն ի տարբերություն միջնադարի հայ ձեռագրերի, անհամեմատ մեծ տպաքանակով տարածվում է և դառնում ժողովրդի սեփականությունը: Առակներում ջատագովվում են ընկերասիրության և ճշմարտության գաղափարները («Չիտ և էշի առակը», «Երկու ստախոսների առակը»), նշավակվում է ծուլությունը:

Շատ հետաքրքրական է Եզոպոսի առակներից թարգմանված «Սկների ժողովը», որի բարոյականը հայերին քարոզում էր միաբանության և համարձակության գաղափարները: Ընթերցողի ուշադրությունն ավելի կենտրոնացնելու համար առակի բարոյականի վրա, խմբագիրը շեղատառով ավելացնում է.

*«Ո՞վ դու ընթերցող, գը խորհուրդ քանիդ,
հանդարտ ընթերցմամբ, բարոք առ 'ի միտ»⁷⁷:*

Թե՛ իր ծավալով և թե՛ արծարծած գաղափարներով նորություն էր անգլերենից թարգմանված «Փոքրիկ Ջեկը» վիպակը, որն արկածային ժանրի թարգմանության առաջին օրինակներից է մեր գրականության մեջ: Սա շատ ուսանելի և սրտագրավ գրույց է մի որք մանուկի մասին, որն աշխատանքային դաստիարակություն է ստանում: Ջեկի ամբողջ կյանքը թեև անցնում է տառապանքների և արկածների մեջ, բայց նա, հավատարիմ իր ստացած դաստիարակությանը, բարեխղճորեն ծառայում է տերերին, ազատվում գերությունից և կյանքի վերջին տարիներն անց է կացնում խաղաղության մեջ:

Թարգմանական «Սանտոն Բաոսիսայի պատմությունը» հողմացրիվ է անում կեղծ բարեպաշտության չափանիշները:

«Ազդարարի» արձակի բաժինը՝ թարգմանական, թե ինքնուրույն, աչքի է ընկնում իր գաղափարական նպատակալացությամբ, խոսքի պատկերավորությամբ, երգիծանքի հարուստ երանգներով: Այն իր մեջ խտացնում է ժողովրդական մտածողությունը, իմաստությունը, լավատեսությունը և հակակրոնական ոգին:

Ամսագրում տպագրվել են և բազմաթիվ չափածո գործեր, որոնք բանաստեղծություններ չեն այսօրվա հասկացողությամբ, այլ միախառն, միապաղաղ ոտանավորներ՝ հրապարակախոսական տրակտատներ: Այս ժանրով գրել են գերազանցապես «Ազդարարի» հրապարակախոս-

⁷⁷ [«Ազդարար», 1794, թիվ 3, էջ 122:]

ները: Սակայն, որքան էլ ձևի առումով խոցելի, այդ բանաստեղծությունները հետաքրքրական են իրենց բարձրացրած խնդիրներով: Հեռանալով միջնադարյան բանաստեղծության ավանդական ուղղությունից, «Ազդարարի» բանաստեղծներն առանձնակի հետաքրքրություն են ցուցաբերում դեպի հայ ժողովրդի քաղաքական անցյալը, գովերգում իրենց նախնիների փառքը, արծարծում ազատագրական և հայրենասիրական գաղափարներ: Դիշտ է, միջնադարյան հայ պոեզիայում ևս այս գաղափարներն արտահայտվել են, բայց «Ազդարարի» էջերում այս մոտիվը որոշակի գունավորում է ստանում՝ բացահայտելով ամսագրի աշխատակիցների քաղաքական միտումները: «Ազդարարում» տպագրվել են նաև դասական ոճի մի քանի բանաստեղծություններ, որոնց արժանիքները ժամանակին չափվում էին նրանց ճարտասանական կատարելության աստիճանով: Բանաստեղծական այս ձևը, սակայն, բնորոշ չէ «Ազդարարի» գրական դպրոցի համար: Նրա ներկայացուցիչները հիմնականում առաջնորդվել են գեղարվեստական գործի գաղափարական բովանդակության, այսպես ասած՝ «դիտավորության պատկանության» և ոչ ձևի կատարելության չափանիշով: Դիշտ է, այդ բանաստեղծներից ոմանք ժամանակի շատ զարգացած մտավորականներից էին և հրաշալի էին գիտակցում տաղաչափական արվեստին տիրապետելու անհրաժեշտությունը, բայց նրանք խոստովանում են, որ ձեռնհաս չլինելով միանգամից հաղթահարելու այդ կարգի դժվարությունները, ստիպված են բավարարվելու իրենց համեստ կարողություններով:

«Ազդարարի» բանաստեղծներից և հեղինակներից շատերի ինքնությունը դժբախտաբար դեռևս ճշտված չէ: Ամսագրին շատ մոտ կանգնած «Ուրախակից բարեկամը» և «Հայի որդի հայը» ժամանակի ամենապայծառ մտածողներից էին, բազմակողմանի զարգացած լրագրող-հրապարակախոսներ:

Անկասկած, բազմաթիվ անստորագիր նյութերի, թարգմանական գործերի և մշակված առակների հեղինակը Հարություն քահանա Շմավոնյանն էր, որը սովորություն չուներ նամակներից բացի ստորագրելու որևէ հոդվածի տակ: Նա էր որոշում թերթի գրական ուղղությունը, ընտրում նյութերը, որոնք առաջին հերթին պետք է համապատասխանեին նրա հրատարակության ոգուն:

«Ազդարարը» հայ նոր գրականության ձևավորման նախօրյակին գրական այն առաջին դպրոցն էր, որ զգալի աշխատանք է կատարել հայ գրականության աշխարհականացման բնագավառում:

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԱՌԱՋԻՆ ԼՐԱԳՐՈՂԸ*

Նրա անունը Սեթ էր: Սեթ Մալյան: «Ազդարարում» տպագրած չափածո հոդվածները նա ստորագրում էր «Բարեկամ», իսկ դրանց մուտքի խոսքերն ուղղված խմբագրին՝ «Ուրախակից» ծածկանուններով: Ժամանակին, անշուշտ, ամսագրի թղթակցի ինքնությունը հայտնի է եղել խմբագրության շրջանակներում, բայց պաշտոնապես նրա անունը բացահայտվել է 1848 թ. «Ազգասեր Արարատյան» հանդեսում տպագրված նրա մահախոսականում: Տարիներ առաջ մեր հոդվածներից մեկում այն սխալ վարկածն էինք առաջադրել, թե «Ուրախակից», «Բարեկամ» ծածկանունով ստորագրել է Թ. Սոգինյանցը⁷⁸:

«Բարեկամի» առաջին հոդվածը տպագրվել է «Ազդարարի» առաջին համարում, որում հրապարակված ծրագրային հոդվածները վկայում են Հարություն Շմափոնյանի՝ աշխատանքի գարմանալի գործիմացության և նպատակալացության մասին: Այդ համարում խմբագրի առաջաբանից և «Բարեկամի» հոդվածից բացի տպագրվել են Շահամիր Շահամիրյանի նամակը՝ ուղղված Մադրասի անգլիացի բժիշկ Ջիմս Անդրսանին, Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովսեփ Արղությանի կոնդակները, քարզանական մի գրույց:

Շահամիրյանն իր նամակում պատասխանում էր անգլիացի բժշկի անցյալում տված այն հարցին, թե ովքեր են հայերը և ո՞րն է նրանց լեզուն: Իր պատկառելի կենսափորձով, հարուստ գիտելիքներով և Մադրասում ունեցած անբասիր հեղինակությամբ Շահամիրյանը, անտարակույս, գիտակցում էր այն մեծ պատասխանատվությունը, որով նա պետք է երևար հայ մշակույթի մի նոր ճյուղի՝ լրագրության էջերում: Ուստի նա ընտրել է խոսքն ընթերցողին հասցնելու ամենամպատակահարմար թեման և ասելիքի ձևը: Ովքե՞ր են հայերը, ո՞րն է նրանց լեզուն և հայրենիքը – այս հարցերին Շահամիրյանը պատասխանում է ոչ այնքան անգլիացի բժշկի հարցասիրությունը բավարարելու համար, որքան գաղութահայության մեջ ազգային ինքնաճանաչության ոգին ամրապնդելու մտադրությամբ:

Այսպես, իմացեք, հայտարարում է նամակագիրը, Հին կտակարա-

* Տպագրվել է՝ «Նպատակ», 1994, 16. XI:

⁷⁸ Տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 1969, թիվ 4:

նում ասված է, որ Նոյը սերում է մեր նախահայր Ադամից: Մինչ ջրհեղեղը դեռևս ողջ էր Ադամի թոռնորդին, որին տեսել է Նոյը և, բնականաբար, նրա հետ խոսել Ադամի լեզվով: Ջրհեղեղից հետո իջնելով Արարատի գագաթից, նա իջած վայրն անվանել է Նախիջևան և այդ երկիրը, որ ստեղծվել է Նոյի, հետևապես Ադամի լեզվով՝ Արարատյան աշխարհն է, որն իբրև ժառանգություն՝ Նոյը հանձնել է Հաբեթ որդուն:

Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովսեփի Արղությանի կոնդակները հնդկահայ գաղթօջախի հայությանը տեղյակ էին դարձնում Նոր-Նախիջևան և Գրիգորուպոլիս քաղաքների հիմնադրման հետ կապված իրադարձություններին և Եկատերինա II կայսրուհու կողմից այդ քաղաքների բնակիչներին տրված առանձնաշնորհներին:

«Ազդարարի» առաջին համարի ծրագրային նյութերին ներդաշնակում էր «Բարեկամի» ծավալուն բանաստեղծությունը կամ որ ավելի ճիշտ կլինի ասել՝ հրապարակախոսական հոդվածը, չափածո ձևի մեջ: Այդ ձևը պահպանվում է լրագրողի գործունեության ամբողջ ընթացքում: Նրա հոդվածները, որ շարունակաբար տպագրվել են ամսագրի առաջին 7-րդ և 16-րդ համարներում, մվիրված են հնդկահայ գաղթօջախի հայությանը հուզող խնդիրներին, գրված՝ կիսագրաբար, կիսաաշխարհաբար, ընթերցողների բոլոր խավերին մատչելի հայերենով: Առաջին համարի հոդվածը, որը հեղինակն անվանում է համեստ ընծա, շնորհավորական խոսք է Շմավոնյանի «ամենացանկալի» ծրագրի՝ ամսագրի հրատարակության առիթով: Այդ հոդվածը երկու բաժին ունի և հասցեագրված է ամսագրի ընթերցողներին, ապա և «Ազդարարին», որին սիրում է անձնավորել բանաստեղծը: Ընթերցողներին ուղղված խոսքում «Բարեկամը» շտապում է հայտնել, որ նրանց դիմում է ոչ թե խրատելու, այլ աղաչելու նպատակամղումով: Նա շնորհավորում է ընթերցողներին.

«Ուրախացիր՝ այսօր եղբայր,
գի մոր ծնավ՝ քեզ ազդարար
և աղաչես՝ առ Տէր սիրով,
ծաղկեցուցե՛՛ սմա հանճարով»⁷⁹:

Այնուհետև նրանց հիշեցնելով իմաստունների այն ասույթը, թե ամեն մեծ գործ փոքրից է սկսվում, խնդրում է ներողամիտ գտնվել ամսագրում

⁷⁹ [«Ազդարար», 1794, թիվ 1, էջ 44:]

նկատվելիք սխալների նկատմամբ և ջանալ օգնել խմբագրին: Հանդիսավոր տոնական այս խոսքին հաջորդում են «Ազդարարին» ուղղված նրա խորհուրդները: Ամսագրին բարեմաղթելով երկարակեցություն և Հայաստանում բուսնելու երջանիկ բախտ, բանաստեղծը գործնական խորհուրդներ է տալիս նորածին ամսագրին, որոնք այսօր իսկ շարունակում են մնալ լրագրային գործի էական հատկանիշներ: Առաջին խորհուրդն ամսագրին այն է, որ «Ազդարարն» ուսումնասիրի թերթերի աշխատանքի ոճը և սովորի դրանցից:

«Ազդարարը» պետք է լինի նախանձահույզ և աշխատասեր, ունկնդրի խրատներին, շարունակաբար գրական գործեր հրատարակելով ընթերցանության նյութ տա ազգի անդամներին և որ կարևորն է՝ լինի ճշմարտախոս.

«Լուրք հաւաստի՝ և խրատական,
է քեզ միայն՝ վայելչական»⁸⁰:

Ամսագրի երկրորդ համարում «Բարեկամը» պատմում է այն տպավորության մասին, որ թողել էր պարբերաթերթն ընթերցողների վրա: Հետաքրքրական է, անշուշտ, այն փաստը, որ «Ազդարարի» լույս ընծայումից հետո՝ ամսագրի առաջին համարը նա տեսնում է շատերի ձեռքին: Այն կարդում են, ուրախանում, իսկ ոմանք նաև դժգոհում: Նա առանձնապես վշտանում է անգլիախոս հայերից մեկի կարծիքից, որը թեև «ոչ գիտել այլ ինչ թե ոչ է, բի, սի»⁸¹, բայց գտնում է, որ «Ազդարարի» նյութերը հնացած են:

Հետագա հոդվածներում նույնպես «Բարեկամը» շարունակում է խորհուրդներ տալ ամսագրին. «Ազդարար» անունը պարտավորեցնող է, այն հանրության պետն է և տեսուչը և քանի որ նրա խնդիրն է անմիջականորեն խոսել մարդկանց հետ, ապա նա պարտավոր է քննել նրանց վարքը և դատապարտել նկատված արատները:

«Տես զգուշութեամբ զի մանկունք ազգիս,
և պանդխտացեալք յայսմ քաղաքիս,
վատնեն ժամանակ դատարկ շրջելով,
’ի վերայ բաղդի միշտ բարբանջելով:

⁸⁰ [Նույն տեղում, էջ 45:]

⁸¹ [«Ազդարար», 1794, թիվ 2, էջ 79:]

Եւ ասայ նոցա, պահել 'ի մըտի,
զի այս կորուստեան ոչ համեմատի,
ոչ կորուստ ընչից, ոչ ոսկելինաց,
զի կորուստըս այս, է կորուստ կեանաց»⁸²:

Սեփական տան՝ Հայաստանի ազատագրության գաղափարը, հայ-
րենի հողի վրա ազատ կյանք ստեղծելու բաղձանքը դարձյալ ու դարձյալ
զբաղեցրել է «Բարեկամի» միտքը, նրա բանաստեղծական խոսքին հա-
ղորդելով համազգային ակնկալիքներին համապատասխան հնչեղու-
թյուն: Այս իմաստով հետաքրքրական է նրա 6-րդ հոդված-բանաստեղ-
ծությունը, որում ներկայացվում է գաղութահայության փրկության ծրա-
զիրը: Այն, պետք է ենթադրել, մշակված էր Հ. Շմավոնյանի, քերևս նաև
Թ. Սոգինյանցի մասնակցությամբ: Վկայակոչելով հնդկահայ վաճա-
ռականների վերջին տարիների անհաջողությունները Ֆիլիպիններում,
Ինդոնեզիայում, Չինաստանում և այլուր, նա հայտնում է, որ եթե նախ-
կինում հայերը մեկ հարյուրին հարյուր էին շահում, ապա այդ օրերին
այնպիսի խոշոր կորուստներ ունեն, ասես, կամովին իրենց ունեցվածքը
նետում են կրակի մեջ: Ժամանակն է գիտակցել, որ օտար հողը չի կարող
հայրենիք դառնալ, ուստի բանաստեղծը հանձնարարում է «Ազդարա-
րին» ասել հայերին, որ նրանք անտեղի են վատնում իրենց ունեցվածքը,
որովհետև և՛ ժամանակներն են փոխվել, և՛ մարդիկ: Նրանց պետք է տալ
հետևյալ վճռական խորհուրդը.

«Առեք զգանձ ձեր դուք 'ի միաբան,
զնացեք իսկոյն աշխարհն Հայաստան,
զի այն է ձեր տուն և ձեր է միայն,
արժան է լինի և ձեր գերեզման»⁸³:

Հայրենիք գնալու համար, սակայն, նրանք պետք է նախ իրենց հո-
ղի տերը դառնան: Սամյանը համոզմունք է հայտնում, որ Հայաստանի
ազատագրման գործը կիրականացնեն քրիստոնեական պետություն-
ները և մատնանշում այն միջոցները, որոնց պետք է դիմեն հայերը: Նա
միաժամանակ այդ հոդվածում ներկայացնում է երկրի բարեշինության,
կրթական գործի ծավալման, գիտությունների, արհեստների և երկրա-

⁸² [Նույն տեղում, 1795, թիվ 5, էջ 34:]

⁸³ [Նույն տեղում, 1795, թիվ 6, էջ 74:]

գործության զարգացման ընդարձակ մի ծրագիր:

Արդեն 5-րդ համարում «Բարեկամը» խմբագրից թույլտվություն է խնդրում դադարեցնելու իր աշխատակցությունն ամսագրին: Չնայած բերված պատճառաբանություններին, կարծում ենք, նրա հրաժարականը կապված էր խմբագրական աշխատանքում կատարված որոշ փոփոխությունների հետ: Բանն այն էր, որ սկսած ամսագրի 5-րդ համարից, Շմավոնյանն սկսում է տպագրել Խաչատուր Պողոսյանի «Պատմություն Պարսից» մեծածավալ աշխատությունը, իսկ 8-րդ համարից՝ նաև Հակոբ Այուբյանի «Հեյդարալի խանի պատմությունը» վեպը: Երկու ծավալուն գործերի միաժամանակյա տպագրությունը Սեթ Սամյանին ինչ-որ չափով ազատում են բոլոր համարներին նյութեր տրամադրելու պարտավորությունից, և 8-րդ համարից արդեն «Բարեկամի» հոդվածները նկատելի չեն: Նրա հրաժարականի կապակցությամբ Հարություն Շմավոնյանը հատուկ շնորհակալական խոսք է գետեղել ամսագրում: «Ազդարարի» խմբագիրը նրան անվանում է «վսեմախոհ պատվական Ուրախակից», գնահատում ընթերցողներին «հանդիմանողի և սաստողի», «գրգռողի և սփոփիչի» նրա ազնիվ դերը, ինչպես և դրվատում «իբրև պարզ հայելի, գեղեցկահարմար և տողաչափորեն» գրված նրա հոդվածները:

Ամսագրի 16-րդ համարում, տպագրվում է «Բարեկամի» վերջին հոդվածը: Նա շոյված է խմբագրության ուշադրությունից, բայց չի կամենում գրել, որովհետև ինքը ևս քաղցածություն է զգում. դա հացի քաղց չէ, գրում է նա, «այլ սով է և քաղց միաբանութեան»: «Բարեկամը» խորհուրդ է տալիս, որ հայերը կարողան Նոր-Նախիջևանում տպագրված՝ Ֆենելոնի «Արկածք Թելեմաքս» փիլիսոփայական վեպը, որը թարգմանել էր Մարգար Զաքարյանը: «Թելեմաքի քաղցը բուրաստան այգին լի է ամեն տեսակ մրգերով», որոնք կհագեցնեն մարդկանց, գրում է նա: Անշուշտ, նա նկատի ուներ վերոհիշյալ վեպի լուսավորական, համարձակ գաղափարները, բռնապետության քննադատության հզոր պափոք: Չաշխատակցելով հանդերձ «Ազդարարին», հայ հրապարակախոսն, այնուամենայնիվ, կատարում է իր քաղաքացիական պարտքը և վերջին ելույթում ընթերցողներին ուսուցանում հետևել ժամանակի լուսավորական-առաջադիմական գրականությանը և դասեր քաղել դրանից:

Երկու ամիս անց, դադարում է հրատարակվել և «Ազդարարը»:

Իրականում ո՞վ էր Հարություն Շմավոնյանի «Ուրախակից Բարեկա-

մը»՝ Սեթ Սամյանը: Նրա կենսագրության ժլատ տվյալները քաղել ենք «Ազգասեր Արարատյան» հանդեսում տպագրված մահախոսականից⁸⁴: Սամյանը ծնվել է 1771 թ. սեպտեմբերի 22-ին Նոր Ջուղայում, վախճանվել՝ 1848 թ. հունիսի 19-ին: Վաղ հասակում ընտանիքի հետ մա տեղավորվել է Մաղղաս, որտեղ անց է կացրել ամբողջ կյանքը: Ինչպես գրում է մահախոսականի հեղինակը, գրագիտությամբ և զարգացման աստիճանով մա առաջիններից մեկն է եղել գաղթօջախում: Նա ոչ միայն «Ազդարարի» աշխատակիցը և հովանավորն է եղել, այլև հորդորել է շատերին՝ օգնել ամսագրի գործերին: Նշվում է նաև, որ նրա համբավն այնքան է տարածվել, որ հայագետ Շահան Ջրպետը Փարիզից դիմելով նրան՝ նյութեր է խնդրել ազգային պատմության վերաբերյալ (հավանաբար, հնդկահայ գաղթօջախի) և Սամյանը «երկարորեն պատասխանել է ըստ պատշաճին»:

Մերոք Թաղիադյանն իր հերթին ավելացնում է, որ Սամյանի մահվան գույժի տպավորության տակ երկու բանաստեղծություն է գրել, որոնք իր վշտի «տկար ապացույցն են» («՛Ի Սեթ Սամ» և «Նոր Ջուղա»): «՛Ի Սեթ Սամ» բանաստեղծության մեջ մա արտահայտել է իր խոր վիշտը և դրվատել Սամյանի արժանիքները: «Ազդարարի» հրապարակախոսին Թաղիադյանը մեծարել է՝ կոչելով. «Գրիչ հզոր և գրոց հայր, գիտուն, գիտոց բարերար»:

Կարծում ենք հայ հասարակական մտքի պատմության ուսումնասիրողները հարկ է, որ արժանին հատուցեն «Ազդարարի» առաջին հրապարակախոսին, որն իր հողվածներով նախանձելի նրբատեսությամբ վեր է հանել հրապարակախոսության խնդիրները և ընդգծել մամուլի դաստիարակչական դերը: Նա պարզել է «Ազդարարի» կոչումը՝ գաղթօջախի հայությանն ազգային ինքնաճանաչողության հասցնելու և հայրենիքի ազատության գաղափարով նրանց ոգևորելու գործում: Հայ ժողովրդի տաղանդաշատ որդին թեև կրթություն չէր ստացել պաշտոնական վարժարաններում, բայց հասակ առնելով և ձևավորվելով մաղղասյան լուսավորիչների ավագ սերնդի ստեղծած ազգափրակական մթնոլորտում, դարձել է երկրորդ սերնդի լուսավորիչներից մեկը:

Սեթ Սամյանը լրագրողի իր լուման է ներդրել հայ առաջին պարբերաբերքի հրապարակախոսության ազգային ոգին ձևավորելու գործում:

⁸⁴ [«Ազգասեր Արարատյան»], 1848, հ. Ա, թիվ 1:

ՆԱՄԱԿ ՊՐՈՖԵՍՈՐ ՌԱՖԻԿ ԱՔՐԱՀԱՄՅԱՆԻՆ*

Նախ շնորհակալություն եմ հայտնում «Իրաննամե» հանդեսի 2-րդ թիվն ինձ նվիրելու բարեկամական վերաբերմունքի համար: Խոստովանում եմ, որ եթե Դուք այն ինձ չտալիք, ես հազիվ թե «Իրաննամեի» վերոհիշյալ համարը կարդալու պատեհությունն ունենայի, որովհետև որքան անհարմար է խոստովանել, այդ պարբերականը մինչև այժմ ինձ անձանոթ է մնացել: Կցանկանալի ասել նաև, որ «Իրաննամե» իր հարուստ բովանդակությամբ և բարձր մակարդակով արժանիորեն կարող է համարել մեր մամուլի գիտական օրգանների շարքը:

Այժմ՝ էական խնդրի մասին: «Ազդարարը» 200 տարեկան է»՝ ձեր հոդվածը⁸⁵ ես կարդացի մեծ հետաքրքրությամբ և չեմ թաքցնում՝ անակնկալի եկա: Իհարկե, 25 և 30 տարի առաջ տպագրված իմ երկու հոդվածը և «Ազդարարի» վերատպության «Երկու խոսքը» (1970 թ.) չէին կարող անթերի լինել, քանի որ ամսագիրը կարոտ է եղել և այսօր իսկ կարոտ է համապատասխան լուրջ և բազմակողմանի ուսումնասիրությունների: Բացի այդ, ես երբևէ ինձ չեմ համարել Հնդկաստանի պատմության մասնագետ և անսխալական՝ հնդկահայ մշակույթին վերաբերող հարցերում: Այդ Ձեր մենաշնորհն է. բայց, անկեղծ ասած, ես ինձ ճշմարիտ բանասեր եմ համարել և միշտ ձգտել եմ ուսումնասիրվող հարցերը լուսաբանել հնարավորին չափ խղճի մտոք և ազնվորեն: Այդ իմաստով իմ վերոհիշյալ հոդվածները, անշուշտ, ինչ-որ վերապահությամբ, որոշակի արժեք են ներկայացնում թեկուզ հենց նրանով, որ գրված են «Ազդարարի» նյութերի հենքի վրա և ամսագրի պատկերը վեր հանելու թերևս առաջին փորձերն են:

Իմ կարծիքով, եթե Ձեր հոդվածում քննության առնված լինեին ամսագրի մասին առ այսօր ստեղծված պատմագրական նյութերը, այդ ամբողջ համակարգում Դուք, իհարկե, պետք է խոսեիք նախ իմ հոդվածների և դրանցում տեղ գտած թերությունների մասին: Բայց անարդարացի է հավոր պատշաճի հոբելյանական հոդվածում հիշատակել միմիայն բանասեր Մ. Մխիթարյանի հոդվածները սխալները, այն էլ այնպիսի

* Տպագրվում է առաջին անգամ, պահպանվել է հեղինակի արխիվում:

⁸⁵ [Աբրահամյան Ռ., Մխոնյան Ա., «Ազդարարը» 200 տարեկան է // «Իրաննամե», 1994, Բ տարի, թիվ 2 (9), էջ 9-11:]

ոճով, քափթփված ու կիսատ-պռատ մեջբերումներով և, որ գլխավորն է, առանց հատակ մեկնաբանության, որ, ինչպես Պարոնյանը կասեր՝ «Չգիտես լա՞ս, քե խնդաս...»

Այսպես, որո՞նք են Չեր մատնանշած սխալները, որ թույլ է տվել, ինչպես հանգուցյալ Ա. Կարինյանը կասեր՝ «Մեր նվաստությունը»։ Դրանք երեքն են։

1. Հակոբ Սիմեոնյան Այուբյանցի «Հեյդարալի խանի պատմությունը» ստեղծագործությունը համարել են իր ակունքներով կապված հնդկական գրույցների հետ, այնինչ, ինչպես Դուք գրում եք՝ «Իրականում այստեղ խոսքը հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը գլխավորած ազգային հերոսներից մեկի՝ **Մայսորի** նավար **Հայդար Ալի խանի մասին է**»։

Շատ հետաքրքրական է, որ իմ հոդվածից վկայակոչված քաղվածքից մույնպես ակնհայտ է, որ Այուբյանցը նկարագրում է հնդկական հռչակված (և ո՛չ հռչակավոր, ինչպես փոխակերպված է մեջբերման մեջ) գորավար և բանաստեղծ, Սրընգաթան (և ո՛չ Սերինգոթան) քաղաքի նավար, Հեյդարալի խանի (և ո՛չ Հայդար խանի) սխրալից կյանքի (և ո՛չ գործի) պատմությունը⁸⁶։

Այստեղ ո՞րն է սխալը։ Ես ընդունում եմ, որ, իրոք, երեք տասնամյակ առաջ հստակորեն չեն պատկերացրել Հեյդարալի խանի վարած բազում պատերազմներից՝ կյանքի վերջին շրջանում անգլիական նվաճողների դեմ մղած նրա պայքարի ազգային-ազատագրական բնույթը։ Ամբողջ խնդիրն այն է նաև, որ վարքագրական այս ստեղծագործության մեջ նաբոբի ամբողջ կյանքը հրաշապատում արկածների և գրեթե առասպելական իրադարձությունների մի այնպիսի վիթխարի շղթա է կազմում, որը և ինձ թելադրել է այն միտքը, թե մմանօրինակ սխրանքների հարստությունն անպայման գունազարդված է ժողովրդական ասքի միջոցներով։

2. Այուբյանցի վեպը ես համարել եմ Թադիադյանի արկածային ժանրի գործերին նախորդած մի ստեղծագործություն, «որը հարստացնում է հայ նոր գրականությունը, դրա նախապատմությունը հասցնում մինչև XVIII դարի վերջին քառորդը»։ Այո՛, ընկեր Ռաֆիկ, այսօր իսկ ես այն համոզմունքն ունեմ, որ Այուբյանցի վարքագրական վեպում արկածային տարրն այնպիսի չափերի է հասնում, որ հայ գրականության մասնա-

⁸⁶ [Նույն տեղում,] էջ 11։

գետները պետք է տեսականորեն գնահատեն այդ երևույթը:

3. Իմ սխալը համարում եմ այն, որ Հեյդարալի խանին բանաստեղծ եմ անվանել («Հայդար Ալին բանաստեղծ չի եղել». առանձին տողում գրում եմ միայն այս բառերը՝ մեծառիցաբար ինձ խնայելով ավելորդ կշտամբալից խոսքերից)⁸⁷: Ես չգիտեմ Ձեր հողվածի երկու հեղինակից, ո՞վ է գրել Այուբյանցի վեպի վերնագիրը, բայց ցավալի անփութություն է թույլ տվել: Ձեր հողվածում բերված է խմբագրի, գուցե նաև հեղինակի կողմից համառոտված վերնագիրը⁸⁸, այնինչ, առաջին գլխի հիմնական վերնագիրն այսպիսին է. «**Գիրք զբօսանաց** եւ թուղթք քաղցրալուրք յորս ընթեռնանան վարք, արարմունք, և բարքն **ճարտարագունեղ բանաստեղծի**. Նավար Հեյդարալի Խանի, և մեծ Սպարապետի Հնդկաց Սրընգաթան քաղաքի»⁸⁹ (երկրորդ ընդգծումը մերն է):

Հարգելի ընկեր Ռաֆիկ, նամակս ավարտելուց առաջ ինձ թույլ եմ տալիս երկու խոսք ասել Ձեր հողվածի մասին: Իմ կարծիքով այն գրվել է, այսպես ասած, «թեթև ձեռքով»: Չհաշված գաղթօջախի բնութագրությունը, Խաչատուր Ջուղայեցուն, Հակոբ Այուբյանցին և «Մաղրասի խմբակին» նվիրված հատվածները, Ձեր հողվածը կազմվել է Արտաշես Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» գրքի առաջին հատորի համապատասխան բաժնի նյութերի հիման վրա միայն: Իհարկե, հայտնի է, որ հրապարակի վրա եղած աղբյուրներից կարելի է և հարկ է օգտվել, բայց գիտնականը պարտավոր է ուսումնասիրել նախ բուն սկզբնաղբյուրը (երբ մանավանդ այն այսօր դրված է գիտական շրջանառության մեջ) և ապա միայն դիմել հարակից նյութերին, անշուշտ, պահպանելով չափի զգացումը: Թողնելով «Ազդարարի» հարուստ նյութերը, Դուք Կարինյանի շարադրանքի հիման վրա ոչ միայն աղբատացրել եք ամսագիրը, այլև մեքենայորեն կրկնել նրա ձևակերպումները, վրիպումները, անունների աղավաղումները և լրագրից քաղված մեջբերումների սխալները: Այս իմաստով, Կարինյանի գիրքը հանրագիտարանային իր անբավականության և հարակից գիտելիքների հետ մեկտեղ դժբախտաբար այնպիսի լուրջ թերություններ ունի, որոնց, հա-

⁸⁷ [Նույն տեղում:]

⁸⁸ [Տե՛ս «Պատմություն վարուցն եւ գործոց Հեյդարալի խանի սկսեալ ծննդէնն մինչեւ զվաղճան նորին»: Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև՝ «Ազդարար», 1795, թիվ 9]:

⁸⁹ [«Ազդարար», 1795, թիվ 8,] էջ 185:

վանաբար, պետք է անդրադառնալ մի օր: Պարզապես ձեռքս չի գնում գրել այդ մասին: Ինձ կաշկանդում է գիտնականի վաստակի մեծությունը, բայց, ինչպես երևում է, այդ մասին խոսելու ժամանակն է:

**Հարգանքներով՝
22. 02. [19]95 թ.**

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Ա. Բ. – 33, 34
 Աբրահամեան Ս. – 87
 Աբրահամյան Ռ. – 101
 Ադամ – 31, 96
 Ալեքսանդր Առաջին – 36
 Ալադյանյան Ա. – 26
 Ադա Մահմեդ խան – 35, 49
 Աղազարեան Յ. տե՛ս Աղազարյան Հ.
 Աղազարյան Հ. – 81
 Աղաջանյան Գ. – 81
 Աղավալյան Ս. Ծ. – 90
 Այուբյանց Հ. – 13, 14, 22, 44, 48, 57, 73, 76, 77, 78, 79, 80, 82, 92, 102, 103
 Անդրեասեան Ա. Տէր Թադէոս – 36, 87, 88
 Անդրսան Ջ. – 31, 95
 Աստուածատուրեան Մ. – 88
 Ավդալբեգյան Թ. – 18, 19, 41, 57
 Արամյաններ – 40
 Արիստոտել – 50, 54
 Արդուրյան Հ. – 8, 20, 22, 25, 35, 37, 42, 52, 57, 60, 95, 96

Բ

Բաբամեան Մ. Յ. – 87
 Բաբամեան Ս. Մ. – 88
 Բաղրամյան Մ. – 6, 17, 18, 22, 24, 25, 38, 39, 41, 56, 61, 62, 67, 68, 82
 Բել – 42, 61

Գ

Գասպարեան Վ. – 88
 Գիօրգի – 61
 Գյուլբենկյան Գ. – 5
 Գրիգոր Մարգար Խաղար – 7, 49
 Գուլամբրյան Ս. – 49
 Գևորգյան Դ. – 81

Դ

Դավիթ Անհաղթ – 8, 22, 52, 58, 60, 63, 64,

65, 66

Դիոնիսիոսեան Ա. – 88

Ե

Երեմյան Ա. – 36
 Եզոպոս – 46, 70, 93
 Եկատերինա II – 42, 60, 96
 Եփրեմ, արքեպիսկոպոս – 8, 22, 37, 83, 85, 86, 87, 89, 90

Ջ

Ջարաֆեան Խ. Ծ. – 88
 Ջաքարյան Մ. – 99
 Ջօրերեան Շ. – 88

Է

Էմին Հ. – 17, 19, 33, 34
 Էնտազյան Հ. Ե. – 14, 50

Թ

Թաղիադյան Մ. – 14, 25, 26, 79, 100, 102
 Թանալյան Թ. – 81

Լ

Լազար – 81
 Լեո – 23, 77

Խ

Խաչատրյան Հ. – 21
 Խաչատուր Ղուկասեցի տե՛ս Խաչատուր Ջուղայեցի
 Խաչատուր Ջուղայեցի – 14, 44, 57, 73, 92, 99, 103

Ծ

Ծատուրյան Ջարիֆյան Խ. – 80, 87
 Ծմիլկեանց Հ. Մ. – 88
 Ծմիլկեանց Ս. Մ. – 88

Կ

Կատարին՝ 90
Կարապետեան Թ. – 88
Կարապետյան Կ. – 81
Կարապետյան Հ. – 82
Կարինյան Ա. – 34, 61, 62, 102, 103
Կոզոնիա, արքեպիսկոպոս – 46

Հ

Հաբեթ – 96
Հակոբ – 13, 18, 22, 44, 48, 57, 73, 76, 77, 78,
79, 81, 92, 99, 102, 103
Հակոբջանյան Մ. – 82, 87
Հակոբյան Հ. – 8, 26
Հայկ – 32, 42
Հայրապետյան Կ. – 90
Հաֆթյան Բ. – 81
Հեյդարալի, խան – 13, 44, 57, 73, 76, 77,
78, 79, 92, 102, 103
Հերակլ II – 42, 56, 58, 60, 61
Հիսուս Քրիստոս – 25, 66, 84
Հորերթ, լորդ – 49

Ղ

Ղազարեան Ս. – 87, 88
Ղալբնազյանց Տեր-Փիլիպպոսյան Ս.,
քահանա – 63

Մ

Մալյան Ս. – 95
Մամաջան Բուրքեշն – 90
Մանուկ – 81
Մանուկեան Մ. – 88
Մասեհ Մարտիրոս – 84
Մատթեոս Յոհաննիս – 84
Մարգարյան Խաղարկյանց տե՛ս Գրիգոր
Մարգար Խաղարկ
Մարմոնտել – 21, 22, 58, 81
Մարութեան Յ. Յ. – 88
Մխիթար Մեքաստացի – 6
Մխիթարյան Մ. – 87, 101
Մխիթարյաններ – 66

Մկրտիչ, արքեպիսկոպոս – 6, 20
Մկրտիչեան Յ. – 88
Մկրտչյան Ս. – 81
Մկրտում Սիմեոն տե՛ս Մկրտումյան-
Ծմիկյանց Ս.
Մկրտումյան-Ծմիկյանց Ս. – 87
Մովսես Խորենացի – 8, 17, 41, 56, 61
Մուքարատյան Ա. – 8
Մուրադյան Ս. – 58

Յ

Յակոբ, արքեպիսկոպոս – 86
Յակոբջանեան Ա. – 88
Յակոբջանեան Մ. – 88
Յարութիւն Ջաքարեա – 63, 84, 85, 89, 91
Յարութիւնեան Ա. – 88
Յարութիւնեան Գ. – 88
Յարութիւնեան Կ. – 88, 91
Յարութիւնեան Յ. – 88
Յօհաննիսեան Յ. – 88
Յօհաննիսեան Ս. – 88

Ն

Նազար – 22, 36, 87
Նալբանդյան Մ. – 37, 90
Նանումյան Ռ. – 26
Ներսես Ծնորդալի – 22, 40, 52, 60
Ներսէս, վարդապետ – 89
Նոյ – 31, 96

Շ

Շահամիրյան Հ. – 77
Շահամիրյան Ն. Հ. – 36
Շահամիրյան Շ. – 6, 17, 18, 19, 20, 21, 22,
24, 31, 38, 56, 60, 61, 77, 82, 90, 95
Շահան Ջրպետ – 100
Շահխաթունյանց տե՛ս Ջախաթունյանց
Շամիր Սուլբանում – 6, 21, 88
Շամիրեան Ն. Յ. – 87
Շամիրեան Յ. – 87
Շէրիմանեան Դ. – 88
Շիրազցի Պ. Հ. – 37, 81

Պ

Պաղտասար Դպիր – 8, 22, 52, 60,, 63, 64, 66

Պապամ Ս. – 49

Պավել Առաջին – 36

Պարոնյան Հ. – 102

Պետրոս Առաջին – 23, 68, 69, 81, 87

Պետրոս Մեծ տե՛ս Պետրոս Առաջին

Պլատոն – 50, 54

Պոռյոնկին Գր. Ա. – 35

Պորփյուր – 8, 64, 65, 66, 81

Պրոտկով Կ. (կեղծանուն) – 74

Պուռնազյան Կարենց Պ., վարդապետ – 81

Ջ

Ջախսթունյանց Հ. – 81

Ջեկ – 13, 46, 93

Ռ

Ռաֆիկ տե՛ս Աբրահամյան Ռ.

Ռուստ Ժ.-Ժ. – 50

Ռոսլո տե՛ս Ռուստ Ժ.-Ժ.

Ս

Սամյան Գ. – 36

Սամյան Ս. – 22, 24, 26, 28, 36, 98, 99, 100

Սարգիս Ծատուր – 37, 90

Սարգսեան Ա. – 88

Սարգսեան Թ. – 87

Սաֆարյան Խ. – 44, 48, 92

Սեթյան Ա. – 36, 82, 87

Սեթեան Գ. – 88

Սեքստոս Տարկվինիուս – 62

Սիմեոն, կաթողիկոս – 20, 61, 77, 87

Սիմոնյան Ա. – 101

Սիմեոնյան Մ. տե՛ս Սիմեոնյան

Ծմրիկյանց Մ.

Սիմեոնյան Ծմրիկյանց Մ. – 81

Սիմեոնյանց Մ. տե՛ս Սիմեոնյան Մ.

Սիմէօնեան Յ. – 88

Սոգինյանց Թ., քահանա – 11, 22, 23, 24,

25, 26, 27, 28, 36, 52, 55, 66, 67, 68,

69, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 80, 82, 87, 95, 98

Սողոմոն – 67

Վ

Վուտեր Ֆ. – 23, 50, 68

Վուրլ Ջ. – 78

Տ

Տեր-Անդրեասյան Թ. – 11, 22, 44, 48, 55, 66, 76, 87, 92

Տեր Անդրեասեան Տեր Թադէոս տե՛ս Տեր-Անդրեասյան Թ.

Տեր-Հակոբյան Հ. – 26

Տեր Թադէոս Տեր-Անդրեասյան

Սոգինյանց տե՛ս Սոգինյանց Թ.

Յ

Յիցիանով Պ. – 36

Փ

Փռնչյանց Մ. Հ. – 66, 82

Ք

Քալանթարյան Բ. – 82

Ֆ

Ֆենելոն – 99

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Ազով – 83, 84, 90

Անգլիա – 8, 39

Անդրկովկաս – 15, 19, 24, 53

Արարատ – 96

Արարատյան աշխարհ – 18, 55, 96

Արևելյան Հայաստան – 55

Արևելք – 19

Բ

Բաբաբուհ – 21

Բաբելոն – 35

Բադկադ – 35

Բանկալա – 8

Բասրա – 10, 35, 44, 49

Բատավիա – 40

Բենկլուր – 78

Բեսարաբիա – 20

Բոմբեյ – 15, 64

Գ

Գրիգորիուպոլիս – 42

Ե

Եվրոպա – 6, 12, 43, 46, 54

Երևան – 10, 18, 23, 34, 37, 52, 77, 90

Է

Էջմիածին – 36

Թ

Թիֆլիս – 61, 64

Ի

Ինդոնեզիա – 27, 98

Լ

Լեհաստան – 35

Լոնդոն – 33

Կ

Կալկաթա – 7, 10, 15, 52, 81

Կովկաս – 49, 57

Հ

Հայաստան – 5, 12, 14, 17, 18, 19, 20, 22,
23, 24, 25, 27, 32, 34, 35, 39, 40, 52, 55,

56, 58, 67, 68, 72, 97, 98

Հնդկաստան – 5, 8, 15, 17, 20, 34, 38, 39,
41, 44, 49, 54, 64, 79, 83, 84, 90, 92, 101

Ղ

Ղարաբաղ – 36

Ղարաա – 89

Ղրիմ – 89

Մ

Մադրաս – 5, 6, 7, 8, 10, 11, 13, 17, 18, 19,
20, 21, 22, 23, 30, 32, 36, 37, 38, 39, 48,
49, 52, 53, 55, 59, 60, 63, 64, 65, 66, 67,
68, 71, 74, 76, 81, 85, 87, 90, 91, 95, 100,
103

Մալագա – 15

Մանիլա – 40

Մոլդավիա – 20

Մուրչուտ – 49

Ն

Նոր-Նախիջևան – 42, 96, 99

Նոր Զուլա – 6, 14, 17, 21, 44, 67, 76, 80,
100

Շ

Շիրազ – 6, 52

Շուշի – 10, 35

Չ

Չինաստան – 10, 27, 39, 40, 49, 99

Պ

Պարսկաստան – 6, 14, 20, 52, 54

Ռ

Ռուսաստան – 6, 8, 18, 19, 20, 21, 22, 23,
35, 36, 37, 42, 49, 57, 60, 83, 86, 89, 90,
95, 96

Ս

Սրբնգաթան – 13, 44, 76, 79, 102, 103
Սուրբ Ղազար – 6

Վ

Վենետիկ – 14
Վելյուր – 78
Վրաստան – 36, 54

Փ

Փարիզ – 100

Ֆ

Ֆիլիպիններ – 10, 27, 49, 98
Ֆռանսա տեւ Ֆրանսիա
Ֆրանսիա – 35, 39, 43, 57, 58 62, 78

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	3
Երկու խոսք	5
Առաջին հայ պարբերաթերթը և նրա խմբագիրը	17
Առաջին հայ պարբերականը («Ազդարարի» 170-ամյակի առթիվ)	38
Հարություն Շմավոնյան	52
Հարություն Շմավոնյանը և նրա գործակիցները	60
Նյութեր Հարություն Շմավոնյանի գործունեության մասին	83
Գրականությունը «Ազդարարի» էջերում	92
Ծանոթացեք. հայ մամուլի առաջին լրագրողը	95
Նամակ պրոֆեսոր Ռաֆիկ Աբրահամյանին	101
Անձնանուններ	105
Տեղանուններ	108

**Երևանի պետական համալսարան
Ժուռնալիստիկայի ֆակուլտետ
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ**

**Մարգո Մխիթարյան
Հայերեն առաջին պարբերականը և նրա խմբագիրը**

**Марго Мхитарян
Первое армянское периодическое издание и его редактор**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալարյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Տպագրված է Time to Print օպերատիվ տպագրությունների սրահում:
ք. Երևան, Խանջյան 15/55

Ստորագրված է տպագրության՝ 26.09.2016:
Չափսը՝ 60x84 $\frac{1}{16}$: Տպ. մամուլը՝ 7:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1